ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

ՀԱՐՑԵՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՒԱՆ 2023

Կազմի վրայ՝ «Մկրտութիւն» մանրանկարը (1997 թ.):
Մանրանկարիչ՝ Հազդրուբալ Արամունի:

Օտար աղբիւրներից մէջբերումներ անելիս դրանք գրքում ներկայացրել եմ հայերէն թարգմանութեամբ:

«ՀԱՐՑԵՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

Հեղինակային իրաւունք © 2023 Գէորգ սրկ. Գէորգեան
Բոլոր իրաւունքները պաշտպանուած են:

ISBN: 8-88589-026-7
ISBN 13: 978-8-88589-026-7

Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սրտի խօսք / 7

Ինչո՞ւ պէտք է մկրտուեմ, եթէ արդէն հաւատում եմ Աստծուն / 9

Ի՞նչ է նշանակում Դրոշմ / 17

Ինչո՞ւ է ջուրն անհրաժեշտ Մկրտութեան համար / 21

Ինչպէ՞ս առանց Մկրտութեան փրկուեց աջակողմեան աւազակը / 36

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ Մկրտութիւնը ձեւական եւ արտաքին պայմանական նշան է / 43

Ճի՞շդ է, որ վերստին ծնուել նշանակում է ընդունել ու մաքրուել Աստծու խօսքով, եւ կարիք չկայ մկրտուել, քանի որ Մկրտութեան ջուրն ընդամէնը Աստծու խօսքի նշանակն է / 54

Ինչո՞ւ Պօղոսն ու Շիղան բանտապետին ասացին՝ «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը փրկուես», եւ ոչ թէ՝ «Հաւատա՛ եւ մկրտուի՛ր» / 59

Ինչո՞ւ են ոմանք ասում, թէ Մկրտութիւնը չարչարանք կրել է նշանակում / 64

Ինչպէ՞ս է, որ մկրտուելուց յետոյ դարձեալ մեղանչում ենք / 66

Ինչո՞ւ չի կարելի կրկին մկրտուել / 72

Առանց հաւատի մկրտուելու մասին / 78

Ինչո՞ւ են ոմանք մերժում մանուկների Մկրտութիւնը / 89

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ մանուկներին պէտք չէ մկրտել, քանի որ նրանք չեն կարող վկայութիւն տալ առ Աստուած / 97

Ինչո՞ւ են մկրտւում աղջիկները, եթէ Հին Ուխտի թլփատութեան օրէնքը, որ նախատիպ էր Նոր Ուխտի Մկրտութեան, նրանց չէր վերաբերում / 104

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ «անձեռագործ թլփատութիւնը» խորհրդանշում է ոչ թէ Մկրտութիւնը, այլ սրտի հոգեւոր թլփատութիւնը, այսինքն՝ մեղքերի «թլփատութիւնը» / 108

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ պէտք չէ մկրտել մանուկներին, քանի որ նրանք չեն կարող ապաշխարել ու հաւատալ / 114

Ճի՞շդ է, որ քրիստոնեաների զաւակներին պէտք չէ մկրտել, քանի որ նրանք սուրբ են / 122

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ մանուկներին չես կարող աշակերտ դարձնել կամ սովորեցնել, հետեւաբար՝ նրանց պէտք չէ մկրտել / 128

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ գրուած է՝ «Մարդիկ գալիս ու մկրտւում էին», եւ գրուած չէ, թէ՝ «Մարդիկ մանուկներին գրկած գալիս էին» / 131

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ անիմաստ է մկրտել մանուկներին, քանի որ նրանք չեն կարող յիշել իրենց Մկրտութիւնը / 134

Ինչպէ՞ս ընտրել կնքահայր / 136

Ի՞նչ է ասում Աստուածաշունչը մանուկների Մկրտութեան մասին / 144

Ի՞նչ են ասում Եկեղեցու Հայրերը մանուկների Մկրտութեան մասին / 151

ՍՐՏԻ ԽՕՍՔ

Մեզ համար ուրախութիւն է տեսնել Բարշ. Գէորգ Սրկ. Գէորգեանի մտքի նոր արգասիքը՝ «Հարցեր Մկրտութեան Մասին» կարեւոր եւ օգտակար աշխատութիւնը: Մկրտութեամբ կը դառնանք Աստուծոյ որդեգիր եւ անդամ Քրիստոսի Եկեղեցւոյ: Քրիստոնէական սրբազան այս Խորհուրդի զանազան պարագաներու մասին շատ յաճախ հարցեր ի յայտ կուգան հաւատացելոց մօտ: Եւ աշխատութեան բովանդակութեան մէջ ներկայացուող մեկնողական հատուածները, հարց ու պատասխանի ձեւով, մանրամասնօրէն կը պարզաբանեն այդ հարցերը՝ հաստատապէս յենուած Սուրբ Գիրքի, Եկեղեցւոյ Հայրերու յաւիտենական ճշմարտութիւններու վրայ:

Մեր օրհնութիւնն ու գնահատանքը կը բերենք գիրքի հեղինակին՝ Բարշ. Գէորգ Սրկ. Գէորգեանին, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնց ազնիւ ջանքերով ի լոյս կ’ընծայուի «Հարցեր Մկրտութեան Մասին» այս շահեկան ձեռնարկը:

Տ. Յովնան Արք. Տէրտէրեան



Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

Մայիս, 2023

Ինչո՞ւ պէտք է մկրտուեմ, եթէ արդէն հաւատում եմ Աստծուն

Ոմանք հարցնում են. «Ինչո՞ւ է պէտք մկրտուել». եւ յաճախ այս հարցին յաջորդում են տարբեր փաստարկներ. «Ինչո՞ւ պէտք է մկրտուեմ, եթէ ես արդէն հաւատում եմ Աստծուն», կա՛մ «Ես արդէն ունեմ Աստծուն իմ հոգում», կա՛մ «Ես կարող եմ Աստծու հետ շփուել նոյնիսկ առանց Մկրտութեան», կա՛մ «Աստծուն իրո՞ք հետաքրքրում է՝ ես մկրտուած եմ, թէ ոչ»:

*Մեր Տէր Յիսուս Քրիստոս Իր յարութիւնից յետոյ առաքեալներին ուղարկեց քարոզելու ու նրանց պատուիրեց ոչ միայն աւետարանել եւ ուսուցանել բոլոր ազգերը, այլեւ հրահանգեց մկրտել նրանց Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով՝ «**Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ. 28, 19): Սա Փրկչի պատուիրանն է, եւ եթէ որեւէ մարդ ցանկանում է քրիստոնեայ կոչուել, ապա նա, իհարկէ, պէտք է ենթարկուի այս պատուիրանին:*

Չմկրտուած քրիստոնեաներ պատմութիւնը երբէք չի ճանաչել: Մենք՝ հայերս, անսալով աստուածային այս պատգամին, ազգովի մկրտուեցինք սուրբ առաքեալների ձեռքով ու վերստին ծնունդ առած՝ ընդունեցինք Սուրբ Հոգու Դրոշմը: Մենք քրիստոնէացանք եւ որդեգրուելով Աստծուն՝ յաւիտենական ուխտով կապուեցինք Նրա հետ: Հայութիւնը եւ քրիստոնէութիւնը նոյնացան, եւ այլեւս ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ գալիք բաները չկարողացան մեզ բաժանել Աստծու սիրուց, որը մեր Տէր Յիսուս Քրիստոսով է: Նրա փրկագործութեան շնորհիւ է, որ հաղորդակից ենք դառնում յաւիտենական սիրուն, մխիթարութեանն ու ուրախութեանը:

Ուստի աղօթելով առ Աստուած՝ եկէ՛ք խօսենք Սուրբ Մկրտու-

թեան խորհրդի մասին՝ յուսալով, որ այն օգտակար կը լինի մկրտուողների հոգեւոր պատրաստութեան համար ու կը նպաստի մեր Եկեղեցու խորհրդական կեանքի յետագայ հաղորդակցութեանը:

Ինչո՞ւ է պէտք մկրտուել: Այս հարցի պատասխանը գտնում ենք Աւետարանում. «**Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի, եւ ով չհաւատայ, պիտի դատապարտուի**» (Մարկ. 16, 16): Ով «հաւատայ» եւ «մկրտուի». պարզւում է, որ բաւական չէ միայն «հոգու մէջ» հաւատացեալ լինելը: Մկրտութեան օրինակը տուել է մեզ Ինքը Քրիստոս: Յիսուս մեղքերի թողութիւն էր տալիս, սակայն Յորդանան գետի մէջ մկրտուելով՝ օրհնեց ջուրը, իսկ Նիկոդեմոսի հետ խօսելով յայտնեց, որ եթէ չծնուենք Հոգուց եւ ջրից, չենք կարող Աստծու Արքայութիւնը մտնել: Այսինքն՝ ծնուել ոչ միայն Հոգուց, այլեւ ջրից: Աստուած մի ժամանակ ջրհեղեղով պատժեց մարդկութեանը, իսկ այժմ նոյն ջրով նոր կեանք է պարգեւում: Տէր Յիսուս ասում է. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5): Այս բառերը յստակ ցոյց են տալիս, որ առանց Մկրտութեան անհնար է Աստծու հետ յաւիտենական կեանքի թագաւորութեան մէջ մտնել: Ի վերջոյ, ինչպէ՞ս կարելի է քրիստոնեայ լինել, բայց չկատարել Քրիստոսի ամենակարեւոր հրահանգներից մէկը:

Ինչո՞ւ է անհրաժեշտ Մկրտութիւնը: Յիսուս ինչո՞ւ հաստատեց Մկրտութեան խորհուրդը: Առանց աստուածաբանական նրբութիւնների մէջ մտնելու՝ կարճ ասենք. դրախտում Ադամն ու Եւան ճաշակեցին արգելուած ծառի պտուղը, մտածեցին իրենց աստուածանման արժանապատուութեան մասին, իրենց տեսան որպէս ամենագէտ աստուածներ: Արդիւնքում անդառնալիօրէն վնասուեց մեր նախածնողների հոգեւոր-մարմնական բնութիւնը: Այս սկզբնական վնասուածքի կամ սկզբնական մեղքի փոփոխութիւնը դարձաւ ժառանգական, որը փոխանցւում է բոլոր

սերունդներին, եւ ոչ ոք չի կարող ազատուել դրանից։ Մարդիկ անվերադարձ մահկանացու դարձան։ Եւ այս իրաւիճակում, իհարկէ, պահանջւում է Արարչի օգնութիւնը մարդուն փրկելու համար։ Տէր Յիսուս Քրիստոս՝ ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ Մարդը, վերցրեց մեր մարդկային բնութիւնը, երկրի վրայ ծնուեց որպէս մարդ, ապրեց, չարչարուեց, տառապեց խաչի վրայ, մահացաւ, յարութիւն առաւ եւ համբարձուեց առ Հայր Աստուած։ Եւ ամէն մարդ, ով ցանկանում է փրկուել, պէտք է մահանայ եւ յարութիւն առնի Քրիստոսի հետ, որպէսզի Նրա հետ էլ թագաւորի երկնքում։ Քրիստոսի հետ այս համատեղ մահանալն ու յարութիւն առնելը հէնց այն է, ինչը խորհրդաւոր կերպով տեղի է ունենում Մկրտութեան ժամանակ։

Մկրտութիւնն իսկական մուտք է Քրիստոսի մահուան մէջ եւ հետեւաբար՝Իր Յարութեան մէջ։ Ուրեմն՝պէտք է նախապէս մեռնել այս աշխարհի համար, ապաշխարել եւ հրաժարուել մեղքերից՝ մուտք գործելով Քրիստոսի խորհրդաւոր մահուան, Յարութեան եւ Երկրորդ գալստեան մէջ։ Մկրտեալն այսպէս մուտք է գործում մի նոր գոյավիճակի մէջ. արտաքնապէս մաքրւում է ջրով, բայց ներքնապէս լուացւում է Աստծու խօսքով եւ սրբւում Սուրբ Հոգով։ Մասնակցելով Քրիստոսի մահուանը եւ սրբագործուելով Քրիստոսի կողից բխած սրբազան ջրով՝ մկրտուելը դառնում է Քրիստոսի յարութեամբ վերստին ծնուած նոր արարած, Քրիստոսի նոր կեանքին ընկերակից եւ երկնային որդեգրութեան ժառանգակից։

Այս ամէնի մասին Պօղոս առաքեալն ասում է. **«Թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք Աստծու զօրութեանը հաւատալով, որը նրան յարութիւն տուեց մեռելներից։ Եւ ձեզ, որ մի ժամանակ մեռել էիք մեղքերի եւ ձեր մարմնի անթլփատութեան մէջ, կենդանացրեց իր հետ»** (Կող. 2, 12-13)։ Յիսուս հաստատեց Մկրտութեան խորհուրդը, որպէսզի Իրեն հաւատացողները մկրտուելով ստանան Սուրբ

Հոգու պարգեւը, այսինքն՝ սրբուեն իրենց սկզբնական՝ ադամական մեղքից, նաեւ բոլոր ներգործական մեղքերից: Հետեւաբար՝ մկրտուողը ջրից ու Հոգուց վերստին ծնուելով, դառնում է Աստծու որդեգիր եւ Քրիստոսի Մարմնի՝ Եկեղեցու անդամ: Այնուհետեւ, Սուրբ միւռոնով օծուելովը, ստանում է Սուրբ Հոգու շնորհը՝ Եկեղեցու կեանքին եւ Սուրբ Խորհուրդներին լիարժէք մասնակցութեան համար: Սբ. Գրիգոր Լուսաւորիչն ասում է՝ «Այսպէս ծնւում են Աստծու որդիները»: Որովհետեւ Քրիստոս Ինքը, մկրտուելով Յորդանանում, խորտակեց սատանային եւ ջրհեղեղեան մարդակորոյս ջուրը մարդակեցոյց եւ վերածնող դարձրեց, ինչպէս որ նոյն ջուրը Սուրբ Հոգով ամէն անգամ սրբարար է դառնում իւրաքանչիւր մկրտուողի համար: Հէնց սա՛ է Աստծու շնորհի գրաւականը, նոր կեանքի սերմը:

Ինչ է կատարւում Մկրտութեան խորհրդի ժամանակ: Մկրտութեան խորհրդի բացառիկ առանձնայատկութիւնն այն է, որ հաւատացեալը Սուրբ Մկրտութեամբ ստանում է Քրիստոսի կողմից վերստեղծուած՝ Աստծու շնորհական սերմը, դառնում է նոր արարած, նոր մարդ՝ ըստ իր Արարչի պատկերի: Պօղոս առաքեալն ասում է. «**Նորոգուեցէ՛ք ձեր մտքով ու հոգով եւ հագէ՛ք նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծու՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ**» (Եփես. 4, 24): Յովհաննէս առաքեալը հաստատում է. «**Ամէն ոք, ով Աստծուց է ծնուած, մեղք չի գործում, որովհետեւ Նրա սերմը մնում է նրա մէջ**» (Ա. Յովհ. 3, 9): Իսկ Պետրոս առաքեալը հաւատացեալներին յիշեցնում է, որ նրանք վերածնւում են ոչ թէ ապականուող, այլ՝ անապական սերմից, Աստծու կենդանի, յաւիտենական խօսքից. «**Վերածնուեցէ՛ք ոչ թէ ապականութեան ենթակայ սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու կենդանի եւ մշտնջենական խօսքով... Բայց Տիրոջ խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն՝ այն խօսքը, որ աւետարանուեց ձեզ**» (Ա. Պետր. 1, 23-24): Այստեղ «Աստծու կենդանի եւ մշտնջենական խօսքով» կամ «Տիրոջ խօսքը» արտայայտութիւնները պարունակում են

երկու իմաստ՝ Աստծու խօսք եւ Բանն Աստուած, որ յայտնւում է ու բնակւում մարդու ներսում, ինչպէս սերմն է ապրում հողի մէջ: Այսպէս, Աստուածորդին նորոգում է հին մարդուն Իրենով եւ Իր մէջ: Հետեւաբար, աստուածային փրկարար շնորհը սերմանւում է մկրտուողի մէջ: Սուրբ Հայրերն ասում են, որ Մկրտութեամբ տրւում է Քրիստոսով վերածնուած նոր մարդկութեան սերմը: Նոր մարդու սերմը ցանւում է մեր հին մարդու մէջ: Այն, ինչ տեղի է ունենում, նոր մարդու ծնունդ է:

Սերմը՝ կենտրոնական հասկացութիւնն է, որը կապուած է Մկրտութեան խորհուրդի հետ: Սրա մասին խօսում Եկեղեցու սբ. Հայրերը: Օրինակ՝

Սբ. Գրիգոր Սինացի. *«Այն, ինչ մենք Քրիստոս Յիսուսով Ս. Մկրտութեամբ ընդունեցինք, չի ոչնչանում, այլ ինքն իրեն թաղւում է մեր մէջ, ինչպէս գանձը՝ հողի մէջ: Իսկ խոհեմութիւնն ու երախտագիտութիւնը պահանջում են հոգ տանել այն բացայայտելու եւ մակերես հանելու համար: Հետեւաբար, եթէ մենք անկեղծօրէն ցանկանում ենք բացայայտել մեր մէջ աստուածային շնորհով լցուած այս սերմը, որը Ս. Մկրտութեան խորհրդով ցանւում է մեզանում, ուրեմն՝ պիտի շտապենք միշտ մեր սրտում ունենալ աղօթքը, որպէսզի ջերմացնելով մեր սիրտը՝ այն բորբոքուի Տիրոջ հանդէպ անասելի սիրով»*[1]:

Սբ. Սիմէոն Նոր Աստուածաբան. *«Ով հաւատում է Աստծու Որդուն, ապաշխարելով մաքրւում է իր նախկին մեղքերից Մկրտութեան խորհրդով: Այնուհետեւ Բանն Աստուած մտնում է մկրտուողի մէջ՝ ինչպէս որ Կոյսի արգանդում եւ բնակւում է նրանում որպէս սերմ»*[2]:

Սբ. Իսահակ Ասորի. *«Քրիստոս մեր սրտերում սերմանւում է Ս. Մկրտութեան Խորհրդով՝ ինչպէս սերմը երկրի վրայ: Այս*

1 Цит. по: Тихон Задонский, свт. Творения. Т. 1. М., 1889. С. 71.

2 Цит. по: Феофан Затворник, свт. Письма о молитве и духовной жизни. М., 2008. С. 411–412.

պարգեւն ինքնին կատարեալ է, բայց մենք կա՛մ զարգացնում եւ աճեցնում ենք այն, կա՛մ էլ պարզապէս խեղդում ենք մեր մեղսալի ապրելակերպով: Այս պատճառով, պարգեւն իր ողջ շնորհով փայլում ու լուսաւորում է միայն նրանց մէջ ու այն չափով, ովքեր իրենց մշակում եւ ապրում են Աւետարանի պատուիրաններով»[1]*:*

Ըստ Փրկչի պատմած առակի՝ Աստծու Արքայութեան այս սերմը նմանեցւում է մանանեխի հատիկին, որը, երբ սերմանւում է, աճում է եւ դառնում բոլոր տունկերից աւելի մեծ՝ արձակելով մեծ ճիւղեր: Իսկ հաւատացեալի յետագայ կեանքը բաղկացած է այդ սերմի աճի ու զարգացման մէջ: Մեր խնդիրն է զարգացնել եւ կատարելագործել ստացած պարգեւը, որպէսզի սերմը դառնայ պտղաբեր ծառ՝ լի Սուրբ Հոգու զանազան պարգեւներով: Այսպէս մարդն աստիճանաբար մաքրւում է մեղքից, աստիճանաբար կատարելագործւում եւ սրբանում է: Սա՛ է Մկրտութեան շնորհի յաւիտենական կեանքի սերմը: Տրւում է միայն սերմը, այլ ոչ թէ ծառը, եւ դեռեւս ոչ պտուղը: Յանւում է միայն սերմը, որը մտնում է միայն որոշակի պայմաններում, իսկ այդ պայմանները մարդու անձնական կամեցողութիւնն է, աւելի պարզ ասաց՝ նրա հոգեւոր կեանքը:

Այն, որ պէտք է վերստին ծնուել ոչ միայն Հոգուց, այլեւ ջրից երեւում է «Գործք Առաքելոց»-ի մէջ գրուած մի պատմութիւնից, երբ Փիլիպպոսը եւ ներքինին ճանապարհ էին գնում, որ նրանք հասան մի ջրի: Ու ներքինին ասաց. «Ահա՛ ջուր, ինչն է ինձ արգելում մկրտուել»: Եւ Փիլիպպոսն ասաց նրան. «Եթէ քո ամբողջ սրտով հաւատում ես, կարելի է»: Նա պատասխանեց. «Հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոս Աստծու Որդին է»: Եւ ինչ եղաւ՝ երկուսով ջուրը մտան ու Փիլիպպոսը մկրտեց նրան եւ այն ժամանակ Սուրբ Հոգին իջաւ ներքինու վրայ (տե՛ս Գործք 8, 26-40):

*Քրիստոս փրկում եւ նորոգում է մեզ Մկրտութեամբ, ինչպէս Պօղոս առաքեալն է նշում. «**Մեզ փրկեց վերստին ծննդեամբ***

1 Цит. по: Игнатий Брянчанинов, свт. Слово о человеке. СПб., 2008. С. 36. Прим.1.

աւազանի միջոցով եւ Սուրբ Հոգու նորոգութեամբ» (Տիտ. 3, 5)։

Եկեղեցու սուրբ վարդապետները սովորեցնում են, թէ որքա՜ն շատ օգուտ կայ Մկրտութիւնից։ Առաջին՝ որովհետեւ Մկրտութիւնը երկինքն է բացում, ինչպէս Քրիստոսի Մկրտութեան ժամանակ երկինքը բացուեց։ Երկրորդ՝ որովհետեւ Մկրտութեամբ մարդ վերստին ծնուելով դառնում է Աստծու Սուրբ Հոգու տաճարը, ինչպէս Քրիստոսի Մկրտութեան ժամանակ, երբ Սուրբ Հոգին իջաւ աղաւնակերպ։ Երրորդ՝ որովհետեւ Մկրտութիւնը մարդուն դարձնում է Աստծու որդի։ Այդ առիթով Հօր ձայնը հնչեց երկնքից. ***«Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճութիւնը»*** *(Մատթ. 3, 17)։ Չորրորդ՝ որովհետեւ Մկրտութիւնը բուժում է հոգեւոր հիւանդութիւնը, ինչպէս սրբեց Եղիսէի բորոտութիւնը եւ ասորի Նէեմայի հոգու մեղքը՝ Յորդանան գետում նրան լուալով (Դ. Թագ. 5, 14)։ Հինգերորդ՝ որովհետեւ Մկրտութիւնը խափանում է սատանայի բոլոր գործերը։ Վեցերորդ՝ որովհետեւ Աւազանի ջուրը մարում է դժոխքի կրակը։ Եօթերորդ՝ որովհետեւ ինչպէս ջուրը ընկղմում է մարդուն, այդպէս էլ Մկրտութեան ջուրը խեղդում է սատանային, ինչպէս փարաւոնը ծովում ընկղմուեց։ Ութերորդ՝ որովհետեւ ինչպէս ջուրը բոյսերի եւ տունկերի կենսատուն է, այդպէս էլ աւազանի ջուրը Հոգով կենդանացնում է մեղքով մեռածներին, որոնք մկրտւում են ի փառս Քրիստոսի։*

Սբ. Յովնան Ոսկեբերանն *ասում է. «Ի՞նչ է ասում Քրիստոսը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ մէկը ջրից եւ Հոգուց չծնուի, չի կարող մտնել Աստծու Արքայութիւնը»։ Ահա թէ ի՞նչ է Նա պարզաբանում. դուք կարծում էք, թէ դա անհնար է. բայց ես ասում եմ, որ դա շատ հնարաւոր է, նոյնիսկ անհրաժեշտ է, հակառակ դէպքում հնարաւոր չէ փրկուել։ Իսկ անհրաժեշտը Աստուած մեզ յարմար է դարձրել։ Երկրային ծնունդը ծնունդ է ըստ մարմնի, հողից. հետեւաբար՝ երկնային ամէն ինչ արգելափակուած է դրա համար, քանի որ ի՞նչ ընդհանուր բան կայ երկրի եւ երկնքի միջեւ։ Բայց մէկ այլ ծնունդ, ինչպէս Հոգու ծնունդը, յարմար կերպով*

բացում է դրախտի դռները մեզ համար։ Լսէ՛ք բոլորդ, որ օտար էք լուսաւորութեան (այսինքն՝ Մկրտութեան խորհուրդները). սարսափէ՛ք, լացէ՛ք։ Սարսափելի է այս սպառնալիքը, սարսափելի է սահմանումը։ Անհնար է, ասում է Քրիստոսը, որ նա, ով չի ծնուել ջրից եւ Հոգուց, մտնի երկնքի Արքայութիւն, քանի որ նա դեռ կրում է մահուան հանդերձը, դատապարտութեան հանդերձը, ապականութեան հանդերձը, եւ դեռեւս չի ստացել Տիրոջ նշանը, նա դեռ իրենը չէ, այլ ուրիշինը. թագաւորութեան մէջ համաձայնեցուած նշան չունի»[1]։

Սբ. Սիմէոն Նոր Աստուածաբանն *ասում է. «Աստծու Արքայութեան մէջ չմկրտուածները չեն կարող մտնել»*[2]։

Հետեւաբար, ուշադիր քննենք մեր սիրտը, մեր խիղճը. ունե՞նք արդեօք մեր վրայ Տիրոջ նշանը, ունե՞նք արդեօք մեր մէջ քրիստոնէական հաւատք՝ Քրիստոսին հետեւելու վճռականութեամբ, մեր կեանքը Նրա պատուիրաններով չափելու պատրաստակամութեամբ։ Եւ եթէ այդպէս է, ապա եկէ՛ք, եթէ դեռ մկրտուած չենք, արտայայտենք մեր հաւատքը՝ Ս. Մկրտութեան խորհուրդն ընդունելով։ Մկրտութիւնը մեր ազատ ընտրութիւնն է։ Սա տեսանելի ապացոյց է այն բանի, որ մարդն ընտրել է Քրիստոսին, հաւատացել է Քրիստոսին կամ աւելի ճիշդ՝ վստահել է Քրիստոսին եւ համաձայնել մինչեւ վերջ հետեւել Նրան։

Ուստի սիրելինե՛ր, հասկանալով Մկրտութեան խորհրդի կարեւորութիւնը եւ ամբողջ լրջութիւնը, եթէ ինչ-ինչ պատճառներով դեռ մկրտուած չէք, դիմէ՛ք մեր Եկեղեցու քահանաներին, եւ նրանք ձեզ սիրով կը բացատրեն խորհրդի կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը եւ ուղղութիւն էլ կը տան, թէ ինչպէ՛ս պատրաստուել եւ ի՞նչ անել կնքուելու համար։ Թող Տէրն օգնի մեզ ու բացի մեր մտքերն ու աչքերը՝ հասկանալու ու ըմբռնելու Իր անտեսանելի խորհուրդները։

---

1 https://elitsy.ru/profile/45842/204752/ (առ 11/11/22):

2 Նոյն տեղում:

Ի՞նչ է նշանակում Դրոշմ

Ս. Մկրտութեան մաքրագործող խորհրդին յաջորդում է Դրոշմի շնորհաբաշխ ու սրբարար խորհուրդը՝ Սուրբ Հոգու աստուածային որդեգրութեան կնիքը եւ իւրաքանչիւր հաւատացեալի հոգեգալուստը: Այս խորհուրդը հաստատեց Տէր Յիսուս Քրիստոս, երբ Յորդանան գետում մկրտուելուց յետոյ ստացաւ Սուրբ Հոգու օծումն ու կնիքը եւ Յովհաննէս Մկրտչի վկայութեամբ հռչակուեց Աստծու Օծեալը, որով կատարուեց Եսայու մարգարէութիւնը. ***«Տիրոջ Հոգին ինձ վրայ է, դրա համար իսկ նա օծեց ինձ»*** *(Ես. 61, 1): Դրոշմի խորհուրդը սահմանուեց՝ ըստ Աւետարանի հետեւեալ խօսքի.* ***«Եւ ամբողջ ժողովրդի մկրտուելուց յետոյ Յիսուս եւս մկրտուեց ու երբ աղօթքի կանգնեց, երկինքը բացուեց, եւ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսքով, որպէս աղաւնի իջաւ նրա վրայ. եւ երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը»»*** *(Ղուկ. 3, 21-22):*

Եթէ աւազանի Մկրտութեամբ շեշտը դրւում է առաւելապէս մարդու մաքրագործման վրայ, ապա Դրոշմի խորհրդով Սուրբ Հոգու հետ միանալով՝ մկրտեալը զօրանում է հաւատքի մէջ, զինւում է մեղքի իշխանութիւնը խորտակելու համար եւ քրիստոնէական ճշմարիտ վարքով ամրապնդւում աստուածային հաղորդակցութեան մէջ: Այս խորհուրդը Սուրբ Հոգու նորոգիչ շնորհների ընդունման համար է: Ստանալով աստուածային շնորհները՝ մարդը զօրանում է հոգով եւ սպառազինւում անտեսանելի հոգեւոր զէնքերով՝ ընդդէմ չարի որոգայթների եւ յարձակումների:

Ինչո՞ւ է Դրոշմը համարւում խորհուրդ: «Խորհուրդ» նշանակում է աստուածային մի տնօրինութիւն կամ գործողութիւն է, որն ըմբռնելի չէ մարդկային զգայարաններով, սակայն տեսանելի

է հոգեւոր աչքերով, այսինքն՝ հաւատքով: Դրոշմը խորհուրդ է, որովհետեւ մկրտեալն ստանում է Սուրբ Հոգու շնորհները, որդեգրութեան կնիքը եւ դառնում կենդանի Աստծու տաճար: Արթուն հոգի ունեցող ճշմարիտ քրիստոնեային, ով սրբագործւում է եկեղեցու խորհուրդներով, դժուար է մոլորեցնել ուղիղ հաւատքից, քանի որ օծումով ստացած Սուրբ Հոգու շնորհներն անբաժան մնում են նրա հետ: Յովհաննէս առաքեալն ասում է. ***«Այս բանը գրեցի ձեզ, որպէսզի ոչ ոք ձեզ չմոլորեցնի: Իսկ այն օծումը, որը դուք ընդունեցիք նրանից, թող բնակուի ձեր մէջ. եւ կարիք չկայ, որ մէկը ձեզ ուսուցանի: Այլ եղէ՛ք այնպէս, ինչպէս որ նրա օծումն ուսուցանում է ձեզ ամէն ինչի մասին, որ ճշմարիտ է եւ ոչ սուտ. եւ ինչպէս նա ուսուցանեց ձեզ, մնացէ՛ք նրա մէջ»*** *(Ա. Յովհ. 2, 26-27):*

Պօղոս առաքեալն ասում է. ***«Եւ նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին եւ օծեց մեզ, Աստուած է, որ մեզ կնքեց էլ եւ Հոգու գրաւը մեր սրտերի մէջ դրեց» (Ա. Կորնթ. 1, 21-22):*** *Նաեւ ասում է.* ***«Դուք էլ լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան Աւետարանը, որին հաւատալով կնքուեցիք խոստացուած Սուրբ Հոգով» (Եփես. 1, 13):*** *Մէկ այլ առիթով էլ առաքեալն ասում է.* ***«Եւ մի՛ տրտմեցրէք Աստծու Սուրբ Հոգին, որով կնքուեցիք փրկութեան օրուայ համար» (Եփես. 4, 30):***

Հայաստանեայց Եկեղեցին Դրոշմի խորհուրդը կատարում է Մկրտութիւնից անմիջապէս յետոյ: Քահանան Յիսուս Քրիստոսի անունով միւռոնով դրոշմում է ու կնքում մկրտեալի մարմնի ինը մասերը եւ զգայարանները, որպէսզի դրոշմուողն արտաքին զգալի օծման եւ աղօթքի հետ ներքուստ ընդունի Սուրբ Հոգու օծութիւնը: Քանի որ Մկրտութիւնն ու Դրոշմը կատարւում են միատեղ, ժողովուրդն այս խորհուրդները միասնաբար է կոչում է՝ «Կնունք»: Դրոշմի խորհուրդը կատարւում է սրբալոյս Միւռոնով, որն օրհնւում է աղօթքով ու մասնաւոր արարողութեամբ: Նախ, սրբալոյս Միւռոնով քահանան օծում է մկրտեալի ճակատը,

որպէսզի ձերբազատուի այն ամօթից, որն իր հետ ամէն տեղ տարաւ առաջին օրինազանց մարդը, որպէսզի բաց երեսով ցոյց տայ Տիրոջ փառքը, եւ որպէսզի միտքը խորհի վերին բաների մասին, որտեղ Քրիստոսն է: Յետոյ քահանան Յիսուսի անունով օծում է աչքերը, որպէսզի կնիքը լուսաւորի աչքերը եւ նա բնաւ չմեռնի: Օծում է ականջները, որպէսզի կնքուողն ունենայ այնպիսի ականջներ, որոնց մասին Եսայի մարգարէն ասել է. ***«Տրեց իմ լսելիքը, որ ունկնդիր լինեմ»*** *(Ես. 50, 4): Իսկ Տէրն ասում է.* ***«Ով լսելու ականջ ունի, թող լսի»*** *(Մատթ. 11, 15): Յետոյ միւռոնը քսում է հոտոտելիքին, որպէսզի նրա աստուածային բուրմունքն զգալով՝ ասի.* ***«Քրիստոսի բուրմունքն ենք Աստծու առաջ՝ ե՛ւ փրկուածների մէջ»*** *(Բ. Կորնթ. 2, 15): Օծում է բերանը ի պահպանութիւն բերանի եւ որպէս ամուր դուռ: Օծում է ձեռքերը՝ բարեգործութեան եւ ամէն տեսակ առաքինի գործերի համար: Օծում է կուրծքը, որպէսզի սուրբ սիրտ հաստատուի,* ***«որպէսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին..., որպէսզի կարողանաք չար օրում դէմ կանգնել չարին»*** *(Եփես. 6, 10-15), որովհետեւ ինչպէս որ Փրկիչը մկրտուելուց եւ Սուրբ Հոգու այցելութիւնից յետոյ դուրս եկաւ ու յաղթեց հակառակորդին, այդպէս էլ մենք, Ս. Մկրտութիւնից եւ օծումի խորհրդից յետոյ Սուրբ Հոգու զրահով զօրացած, դիմադրենք թշնամական ուժերին ու յաղթենք նրանց՝ ասելով.* ***«Ամէն ինչ կարող եմ Նրա՛ շնորհիւ, ով ինձ զօրացրեց»*** *(Փիլիպ. 4, 13): Նաեւ Յիսուս Քրիստոսի անունով օծում է թիկունքը, որպէսզի ամուր վահան լինի, որով կարողանանք չար փորձանքների բոլոր նետերը մարել: Աստուծային կնիքը դրւում է նաեւ ոտքերին, որպէսզի մեր քայլերն ուղղուեն դէպի յաւիտենական կեանք: Յայտնութեան գրքում կարդում ենք, որ հրեշտակն* ***«ունէր կենդանի Աստծու կնիքը. եւ բարձր ձայնով աղաղակեց... սպասեցէ՛ք, մինչեւ որ կնիք դնեմ իմ Աստծու ծառաների ճակատների վրայ»*** *(Յայտ. 7, 2-4):*

Քանի որ Կնունքը մեղքերից սրբուելու եւ Աստծու որդեգիր

դառնալու անհրաժեշտ պայման է, ուստի անհրաժեշտ է մկրտուել ու կնքուել՝ յարգելով Տէր Յիսուս Քրիստոսի հրահանգներն ու Սուրբ Եկեղեցու սրբազան Աւանդութիւնները՝ Աստծու շնորհով արժանանալու Աստծու օծեալներ եւ կնքուածներ կոչուելու: Մկրտութեամբ սրբուածներն ու դրոշմով օծեալներն՝ Աստծու փրկեալ զաւակներն են եւ երկնքի Արքայութեան ժառանգորդները՝ Քրիստոսի հետ միասին թագաւորելու համար՝ իհարկէ, այն պայմանով, որ հաւատարմօրէն ապրեն քրիստոնէավայել կեանքը՝ Աստծու պատուիրանների համաձայն:

✝ ✝ ✝

Ինչո՞ւ է ջուրն անհրաժեշտ Մկրտութեան համար

*Ոմանք ասում են, թէ Մկրտութեան ջուրն Աստծու խօսքի նշանակն է միայն, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «**Որպէսզի սրբացնի նրան աւազանի մաքրութեամբ՝ խօսքով**» (Եփես. 5, 26): Ասում են. մի՞թէ Եկեղեցու մասին առաքեալի այս խօսքը չի նշանակում, որ մաքրութիւնը, այսինքն՝ փրկութիւնը, խօսքի միջոցով է միայն: Մէջբերելով Յակոբոս առաքեալի խօսքը՝ ասում են. «**Իր կամքով ծնեց մեզ ճշմարտութեան խօսքով**» (Յակ. 1, 18): Հետեւաբար՝ ասում են. «Վերստին ծնունդը միայն խօսքով է, այլ ոչ թէ Մկրտութեան ջրով»: Նաեւ յիշեցնում են Պետրոս առաքեալի հետեւեալ խօսքը. «**Վերածնուեցէ՛ք... Աստծու կենդանի եւ մշտնջենական խօսքով... Այսինքն՝ այն խօսքը, որ աւետարանուեց ձեզ**» (Ա. Պետր. 1, 23-25): Այս ամենից եզրակացնում են, թէ քանի որ Մկրտութեան ջուրը նշանակն է Աստծու խօսքի, ուրեմն այն անհրաժեշտ պայման չէ վերստին ծննդեան եւ փրկութեան համար:*

*Նախ ասենք, որ առաջինը լինում է խօսքը, որը հաւատ է ծնում, իսկ հաւատալուց յետոյ Մկրտութիւնն է իրականացւում: Խօսքն առաջնորդում է դէպի հաւատ, իսկ հաւատը՝ դէպի Մկրտութիւն: Տէր Յիսուս ասում է. «**Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի**» (Մարկ. 16, 16): «Ով հաւատայ...» արտայայտութեանը նախորդում է ուսուցումը կամ քարոզութիւնը: Պօղոս առաքեալն էլ ասում է. «**Իսկ ինչպէ՞ս կանչեն նրան, ում չհաւատացին. կամ՝ ինչպէ՞ս հաւատան, ում մասին չլսեցին. կամ՝ ինչպէ՞ս լսեն առանց մէկի քարոզելու**» (Հռոմ. 10, 14): Բայց Աստուածաշնչի մէջ քարոզելը, աշակերտելը եւ մկրտուելը նոյնը չեն: Աստծու խօսքը տարբերում է դրանք. «**Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ.*

28, 19-20)։ Պօղոս առաքեալի խօսքը՝ «Որպէսզի սրբացնի նրան աւազանի մաքրութեամբ՝խօսքով» վերաբերում է ջրով լուացմանը, որը տեղի է ունենում, անշուշտ, խօսքի ներգործութեան հետեւանքով։ Առանց խօսքի ու նրա ներգործութեան մարդիկ չէին գայ ջրով մաքրուելու, այսինքն՝ մկրտուելու։ Աստուածաշնչի տարբեր հատուածներում Աստծու խօսքը յաճախ կոչւում է «փրկութեան աղբիւր», «կենդանի ջուր» կամ «կենաց (կեանքի) ջուր»։ Ջուրը նոյնիսկ ծնուող երեխայի համար օգտագործւում է որպէս ծննդատեղի։ Ինչպէս որովայնն է նորածնի համար, երբ նա, յղանալով մօր արգանդում, ձեւաւորւում է ջրի մէջ, այդպէս էլ ջուրը մկրտուողի հոգու ծննդեան համար է։

Մկրտութեան ջուրը հասարակ ջուր չէ եւ մկրտուողը միայն ջրից չի ծնւում, այլ՝«ջրից եւ Հոգուց»։ Սուրբ Հոգին սրբագործում է Մկրտութեան ջուրը՝ դրան տալով յատուկ բնութիւն, որով մկրտուողն ընդունում է Քրիստոսի փրկարար շնորհներ։ Մկրտուողը Մկրտութեան ջրի մէջ թաղւում է Քրիստոսի հետ՝ հաղորդակից դառնալով Նրա մահուանը, որպէսզի կարողանայ հաղորդակից լինել նաեւ Նրա Յարութեանը։ Այդ պատճառով Մկրտութեան ջուրը սրբագործելիս հոգեւորականը նրա մէջ լցնում է սուրբ Միւռոնը, որպէսզի ջուրը սրբագործուի Սուրբ Հոգով։ Եւ ով որ ծնւում է ա՛յս ջրից, ծնւում է ջրից եւ Հոգուց։

Հոգեւորականը ջուրը սրբագործող եւ Սուրբ Հոգին հրաւիրող աղօթքներ է ասում, որպէսզի ջուրը սրբուի։ Նա նաեւ ընթերցում է Սուրբ Գրքից հատուածներ, որպէսզի մեզ մաքրող Մկրտութեան ջուրը սրբագործուի Աստծու խօսքով։ Տէր Յիսուս ասում է. «**Եթէ մէկը չծնուի ջրից եւ Հոգուց, չի կարող մտնել երկնքի Արքայութիւն**» (Յովհ. 3, 5)։ Այս համարում յստակ երեւում է ջրից ծնունդը եւ խօսւում է իրական ջրի, այլ ոչ թէ խորհրդանշական (սիմվոլիկ) ջրի մասին։ Տէր Յիսուս շեշտեց՝«Եթէ մէկը չծնուի ջրից եւ Հոգուց»։ Եթէ Մկրտութեան ջուրը նշանակ է խօսքի, ուրեմն ստացւում է, որ Յիսուս չէր էլ սովորեցնում, քանզի գրուած է. «**Ո՛չ թէ Յիսուս**

ինքն էր մկրտում, այլ՝ նրա աշակերտները» (Յովհ. 4, 2)։ Ջուրը պահանջւում է խօսքին զուգընթաց, եւ ոչ թէ՝ «ջուր» ասելով պէտք է հասկանանք Աստծու խօսքի խորհրդանշանակը։

*Ջրի կարեւորութիւնը հստակ երեւում է նաեւ, երբ Փիլիպպոսը մկրտում էր եթովպիացի պաշտօնեային։ Առաքեալը նրան ասաց. «**Ահա՛ ջուր, ի՞նչն է ինձ արգելում մկրտուել... Երբ ջրից դուրս ելան, Սուրբ Հոգին իջաւ ներքինու վրայ**» (Գործք 8, 36-38)։ Եթէ այստեղ ջուրը նշանակն է Աստծու խօսքի, ուրեմն, երբ ասում ենք՝ «ջրից դուրս ելան», հասկացւում է, թէ երբ Աստծու խօսքից կամ ուսմունքից դուրս ելան՝ Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ։ Սա անհեթեթ մտածողութիւն է։ Քրիստոս մկրտուեց Յորդանան գետում։ Եթէ ջրի փոխարէն հասկանանք Աստծու խօսքի ուսմունքը, ուրեմն այնպէս կարող է հասկացուել, թէ իբր Յովհաննէս Մկրտիչը սովորեցնում էր Քրիստոսին։ Աստուածաշունչը մեզ ցոյց է տալիս, որ մեղքերի թողութեան համար եւ Սուրբ Հոգու պարգեւն ընդունելու համար մարդուն հարկաւոր է Ս. Մկրտութեան խորհուրդը, որի միջոցով մկրտուողը աստուածային ներգործութեամբ՝ մեղքերի թողութիւն ստանալով ծնւում է Սուրբ Հոգուց եւ ելնելով վերածնութեան ջրի Աւազանից՝ նոր մարդ է դառնում։*

*Ինչ ներգործութիւն ունի ջուրը։ Ջրի մէջ երեք անգամ ընկղմուելով՝ Աստծու օրհնութեամբ մեղաւոր մարդը մաքրւում է ամէն տեսակ մեղքերից եւ դառնում է նոր մարդէ արդարացուած եւ լուսաւորուած։ Այսպիսով, Աստծու վերին օգնութիւնը խորհրդաւորապէս հեղւում է մարդու հէնց էութեան վրայ եւ ամբողջութեամբ նրան մաքրում, սրբում վերստին ստեղծում։ Աւետարանում կարդում ենք ի ծնէ կոյրի բժշկութեան մասին Տէրը կոյրին ասաց. «**Գնա՛, լուացուի՛ր Սիլոամի աւազանում**»։ Նա էլ հաւատաց, գնաց ու լուացուեց, եւ աչքերն իսկոյն բացուեցին։ Միայն հաւատի շնորհիւ կոյրը կարողացաւ տեսնել, սակայն Աստուած կամեցաւ նրան լոյս շնորհել ջրի միջոցով։ Հին Կտակառանում կարդում ենք, որ Եղիսէ մարգարէի գործած հրաշքներից մէկն էր*

Դամասկոսի թագաւորի զօրավար Նէեման Ասորու բժշկութիւնը։ Եղիսէ մարգարէն նրան թելադրեց բորոտութիւնից մաքրուելու համար գնալ ու լուացուել Յորդանանում։ Նէեման սկզբում չհաւատաց, որ պահանջւում էր պարզապէս գետում լուացուել։ Բայց երբ նա հնազանդուեց ու հաւատով լուացուեց, անմիջապէս մաքրուեց։ Հետաքրքրական է, որ Յորդանանը, որում մարգարէն հրամայեց Նէեմանին լուացուել, այն նոյն գետն էր, որում Յովհաննէս Մկրտիչն էր մկրտում։ Արդեօք մենք էլ Նէեմանի պէս պիտի վարուենք՝ չընդունելով ջրի խորհրդաւոր ներգործութիւնը։ Բայց Մկրտութեան ջուրն այլեւս Հին Կտակարանի մաքրագործման ջուրը չէ, այլ Սուրբ Հոգու զօրութեամբ եւ Եկեղեցու պաշտօնեայի աղօթքով ջուրը փոխակերպւում ու դառնում է փրկութեան, վերստին ծննդեան, Աստծու որդեգրութեան սրբազան նշան։ Այլեւս ջուրը սոսկ լուացում ու մաքրագործում չէ, այլ մահ է, որին յաջորդում է սքանչելի յարութիւնը։ Ջրի մէջ խորհրդաւոր կերպով ներկայացուած են դագաղն ու մահը, յարութիւնն ու կեանքը. եւ այս ամէնը միասնաբար են կատարւում։ Ջրի մէջ, ինչպէս դագաղում, հին մարդն ընկղմուելով ամբողջութեամբ թաղւում է եւ յետոյ ելնում է նոր մարդը, ինչպէս ասում է առաքեալը. **«Թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք Աստծու զօրութեանը հաւատալով, որը նրան յարութիւն տուեց մեռելներից»** (Կող. 2, 12)։ Եթէ ջրի մէջ մկրտուելը կարեւոր չէ, ուրեմն ինչո՞ւ Քրիստոս Ինքը, որ ջրային տարերքի Արարիչն է, ջրային տարերքի մէջ Մկրտութեամբ Ինքն Իրեն խոնարհեցրեց։ Յիսուս մկրտուեց Յորդանանի մէջ ոչ այն բանի համար, որ սրբութեան կարօտ էր։ Փրկութիւն տուողը փրկութեան կարօտ չէր։ Նա՝ որպէս Աստուած, բնութեամբ ու մարմնով սուրբ էր եւ կարօտ չէր սրբութեանը։ Սակայն որպէսզի ցոյց տայ մեր օգուտն ու Մկրտութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ Իր խոնարհութիւնը, մեզ համար օրինակ հանդիսացաւ ու մկրտուեց, որպէսզի լրացնելով եւ կատարելով օրէնքը՝ սրբի ու

զօրացնի մեզ ջրում՝ մեզ վերստին ծնելով, որպէսզի հին Ադամին սուզի ջրի մէջ ու լուայ մեր մեղքերը, որպէսզի ջրի մէջ խեղդի վիշապի գլուխը, որպէսզի ջրի մէջ յայտնուի Սուրբ Երրորդութեան խորհուրդը: Եւ երբ զինուորը նիզակով խոցեց Յիսուսի կողը, **«արիւն եւ ջուր դուրս եկան»** (Յովհ. 19, 34): Նրա կողից արեան բխումը վերաբերում է մեր փրկութեանը: Իսկ ինչպէ՞ս ենք մենք ընդունում այս փրկութիւնը: Մենք այն ընդունում ենք ջրի Մկրտութեան միջոցով: Հետեւաբար, Քրիստոսի կողից ջրի եւ արեան բխումը ցոյց տուեց մեզ փրկութեան միջոցները: Մենք ջրի միջոցով ենք ընդունում Տէր Քրիստոսի արիւնը, որը մեզ մաքրում է մեղքից: Սա պարզ երեւում է Յովհաննէս Աւետարանչի խօսքից, ով վկայ դարձաւ խաչելութեան ժամանակ՝ Յիսուսի կողից արեան եւ ջրի բխման: Նա ասում է. **«Սրանք երեքը միասին են վկայում՝ Հոգին, ջուրը եւ արիւնը. եւ երեքը վկայութեան մէջ մէ՛կ են»** (Ա. Յովհ. 5, 8): Փրկութիւնը մեզ տրուեց Քրիստոսի արեամբ, եւ մենք այս արեան պարգեւն ընդունում ենք ջրի եւ Հոգու Մկրտութեամբ: Այս երեք տարրերն էլ առկայ են Ս. Մկրտութեան խորհրդի մէջ: Ուստի, թող Տիրոջ կամքը կատարուի այն եղանակով, որով Նա է կամենում:

Բայց ինչո՞ւ են ոմանք պնդում, թէ ջրով մկրտուելը կարեւոր չէ, եւ մէջբերում են հետեւեալ խօսքը. **«Բոլոր մարգարէները նրա մասին վկայում են, որ բոլոր նրան հաւատացողները նրա անունով մեղքերի թողութիւն կը ստանան»** (Գործք 10, 43):

Եթէ ջրի մէջ մկրտուելը կարեւոր չէ, ուրեմն ինչո՞ւ Քրիստոս Ինքը, որ ջրային տարերքի Արարիչն է, ջրային տարերքի մէջ Մկրտութեամբ Ինքն Իրեն խոնարհեցրեց: Յիսուս մկրտուեց Յորդանանի մէջ ոչ այն բանի համար, որ սրբութեան կարօտ էր: Փրկութիւն տուողը փրկութեան կարօտ չէր: Նա՝ որպէս Աստուած, բնութեամբ ու մարմնով սուրբ էր: Սուրբ էր նաեւ Իր արդար գործերով եւ անկարօտ էր սրբութեան: Սակայն որպէսզի ցոյց տայ մեր օգուտն ու Մկրտութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ՝ Իր

խոնարհութիւնը, մեզ համար օրինակ հանդիսացաւ ու մկրտուեց, որպէսզի լրացնելով եւ կատարելով օրէնքը, սրբի ու զօրացնի մեզ՝ ջրում վերստին ծնելով մեզ, որպէսզի հին Ադամին սուզի ջրի մէջ ու լուանայ մեր մեղքերը, որպէսզի ջրի մէջ խեղդի վիշապի գլուխը, որպէսզի ջրի մէջ յայտնուի Սուրբ Երրորդութեան խորհուրդը։

*Պետրոս առաքեալը հրահանգում է բոլոր հաւատացողներին, որ մկրտուեն. «**Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը**» (Գործք 2, 38)։ Յետոյ առաքեալը քարոզում էր հեթանոսներին եւ բոլոր նրանց, ովքեր հաւատացին. «**հրամայեց նրանց մկրտուել յանուն Յիսուս Քրիստոսի**» (Գործք 10, 48)։ Պետրոս առաքեալի խօսքերից հետեւում է, թէ մարդ սկզբից պէտք է հաւատայ Քրիստոսին եւ յետոյ ապաշխարի։ Իսկ մեղքերի թողութիւն ստանալու եւ Սուրբ Հոգու պարգեւն ընդունելու համար, նա պարտաւոր է մկրտուել՝ վերստին ծնուելով սրբարար Աւազանից։ Եթէ Մկրտութիւնը կարեւոր չէ, ուրեմն Պօղոս առաքեալն էլ իզուր մկրտուեց։ Երբ Փրկչին տեսաւ, նա հաւատաց եւ ապաշխարեց։ Բայց Անանիան նրան ասաց. «**Արդ, ինչո՞ւ ես յապաղում, վե՛ր կաց, մկրտուի՛ր եւ լուա՛ քո մեղքերը՝ նրա անունը կանչելով**» (Գործք 22, 16)։ Ուստի, Պօղոս առաքեալն իր մեղքերին թողութիւն ստացաւ միայն այն ժամանակ, երբ մկրտուեց։ Հաւանաբար, Սօղոսի փոխարէն աղանդաւոր «աստուածաբանները» Անանիային կը պատասխանէին, թէ կարիք չկայ «մկրտուի՛ր» բառից յետոյ աւելացնես՝ «եւ լուա՛ քո մեղքերը» բառերը, քանի որ հաւատի միջոցով միայն կարելի է մեղքերի թողութիւն ստանալ։ Պօղոս առաքեալն էլ հրահանգ է տալիս բոլոր քրիստոնեաներին, որ մկրտուեն. «**Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք**» (Գաղ. 3, 27)։ Ուրեմն, հնարաւոր չէ նախնական մեղքերի թողութիւն ստանալ ու միանալ Քրիստոսի Եկեղեցուն այլ կերպ, քանի որ առաջնային մեղքերի թողութիւնը եւ որդեգրութիւնը տրւում են*

միայն Ս. Մկրտութեան խորհրդի շնորհիւ։

Մկրտութեան ջուրը հասարակ ջուր չէ, եւ մկրտուողն էլ միայն ջրից չի ծնւում, այլ ջրից եւ Հոգուց։ Սուրբ Հոգին սրբագործում է Մկրտութեան ջուրը՝ տալով դրան յատուկ բնութիւն։ Մկրտութեան ջուրը սրբագործելիս նրա մէջ խառնում են Սուրբ Հոգու օծման իւղը՝ սուրբ Միւռոնը, որպէսզի ջուրը սրբագործուի Սուրբ Հոգով։ Այսպիսով, ով ծնւում է այս ջրից, ծնւում է ջրից եւ Հոգուց։

Ոմանք դարձեալ հարցնում են, թէ ինչպէ՞ս կարող է ջուրն ունենալ ծնունդ ու վերանորոգութիւն տալու յատկութիւն։ Ասում ենք, թէ ջրի Մկրտութիւնն արտաքին այն նշանն է, որը ցոյց է տալիս մեր հոգու մէջ արդէն իսկ կատարուած՝ Սուրբ Հոգով Մկրտութիւնը։ Սրանք ուսուցանում են, թէ ջրի փոխարէն պէտք է հասկանալ Տէր Քրիստոս։ Նաեւ մէջբերում են Զաքարիա մարգարէի հետեւեալ խօսքը. «**Այն օրը Դաւթի տան համար պիտի բացուի ամէն մի վայր՝ նրա փոփոխման ու մաքրման համար**» (Զաք. 13, 1)։

Հասկանալի է, թէ ջուրը չէ մարդու մեղքը լուացողը, այլ՝ Աստծու Խօսքը եւ Ամենասուրբ Երրորդութեան հաւատը։ Երեք անձերից իւրաքանչիւրի անունով մկրտուողը ընդամէնը երեք անգամ ընկղմւում է ջրի մէջ՝ ըստ Քրիստոսի պատուէրի։ Իսկ ջուրը Մկրտութեան խորհրդի արտաքին եւ զգալի նշանն է, այն զգայական նիւթը, որի բնական ներգործութիւնն ամէնից լաւ համապատասխանում է Մկրտութեան շնորհի գերբնական ներգործութեանը, եւ ուրեմն՝ աստուածային սրբարար ու կենդանարար շնորհները համապատասխան կերպով պարունակւում են նրա մէջ։ Բոլոր սրբարար նշանները պարունակում են երկնային-աստուածաբանական՝ շնորհական, եւ երկրային-մարդաբանական՝ գործնական գործօններ։ Ջուրը պէտք չէ դիտել սոսկ որպէս սրբարար նշան, որ գործում է անկախ մարդու կամքից։ Ջրի սրբացնող զօրութիւնը գործում է միայն համապատասխան հոգեվիճակների առկայութեան դէպքում։ Եթէ այս աստուածային նշանը չարից ազատուելու համար է, ուրեմն մարդը կամովին

պէտք է հրաժարուի չարից՝ զղջմամբ եւ ապաշխարութեամբ դարձի գալով առ Աստուած: Ջուրը այս աշխարհում ոչ միայն մաքրող է, այլեւ կենդանացնող ու պտղաբերող (տե՛ս Բ. Պետր. 3, 5: Ծննդ. 1, 20: 2, 5): Ջուրը նշան է մաքրագործման ու սրբութեան: Հին Կտակարանում հանդիպում ենք լուացման արարողութիւնների, որոնք խորհրդանշում էին հոգու ազատագրումը մեղքերի աղտերից (տե՛ս Ղեւտ. 8, 6: 13, 6: 14, 4-9: 16, 4-24):

*Ջրի հոգեւոր նշանակութիւնը՝ որպէս Աստծու սրբարար ներգործութեան նիւթական միջոց, յատկապէս մեծ խորութեամբ երեւում է Եզեկիէլի մարգարէութեան մէջ (Եզեկ. 36, 24-27): Այո՛, ճշմարտութեան «աղբիւրը» Ինքը Քրիստոս է: Նա հրամայում է Իր աշակերտներին ասելով. «**Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ. 28, 19-20): Եւ նրանք կատարում էին Տիրոջ հրամանը ու հաւատացողներին մկրտում էին սուրբ Աւազանի ջրով (տե՛ս Գործք 8, 36-38): Մկրտութեան ջուրը խորհրդանշում է նաեւ Աստծու խօսքը, որի աղբիւրն է Սուրբ Հոգին: Աստուածաշնչում Աստծու խօսքը յաճախ կոչուած է «փրկութեան աղբիւր», «կենդանի ջուր», «կենաց ջուր» (տե՛ս Ես. 12, 3: Զաք. 14, 8: Յովհ. 4, 10-15):*

Քրիստոսի մարդեղութեամբ ամբողջացւում են Հին Կտակարանի նշանները, եւ նիւթը ձեռք է բերում էապէս նոր արժէք: Մկրտութեան ջուրն այլեւս Հին Կտակարանի մաքրագործման ջուրը չէ, այլ Սուրբ Հոգու զօրութեամբ եւ Եկեղեցու պաշտօնեայի աղօթքով ջուրը փոխակերպւում ու դառնում է փրկութեան, վերստին ծննդեան, Աստծու որդեգրութեան սրբազան նշան: Այլեւս ջուրը սոսկ լուացում ու մաքրագործում չէ, այլ մահ է, որին յաջորդում է սքանչելի յարութիւնը (Կող. 2, 12): Ուստի, ըմբռնելու համար Քրիստոսի կողմից հաստատուած ծիսական նշանների իմաստը, հարկաւոր է ուսումնասիրել Քրիստոսի կեանքը, դիմել այն աղօթքներին, որոնք սովորաբար նախորդում են նոյնինքն

նշաններին՝ օրհնութեան արարողութիւնները։ Հարկաւոր է նաեւ դիմել Եկեղեցու ծիսական պատմութեանը։

Կան նաեւ որոշ ուսմունքներ, որոնք պնդում են, թէ ջրով մկրտուելը Հին Ուխտի աւանդութիւնն է եւ քրիստոնեաներին այլեւս պէտք չէ այն, քանի որ իրենք արդէն մկրտուած են Սուրբ Հոգով։ Սրանց պատասխանելով ասենք, որ Մկրտութիւնը պէտք է լինի նախապատրաստութեամբ։ Քրիստոսի իսկական Մկրտութեան նախապատրաստող եղաւ Յովհաննէս Մկրտիչը, որ գործնական-օրինական լուացմամբ մարդկանց ապաշխարել էր տալիս եւ Աստծու ճանապարհը բացում իրենց սրտերում, որպէսզի պատրաստ լինեն ընդունելու Քրիստոսի՝ Սուրբ Հոգով Մկրտութիւնը։

Յովհաննէս Մկրտչի կատարած Մկրտութիւնը բոլորովին տարբերւում է այն Մկրտութիւնից, որ Յիսուս պատուիրեց Իր աշակերտներին, որի համաձայն նրանք պէտք է մկրտէին Սուրբ Երրորդութեան անունով։ Բայց նոյնիսկ Յովհաննէսի Մկրտութիւնը Հին Ուխտի աւանդութիւն չէ։ Եթէ ջրով Մկրտութիւնը լինէր Հին Ուխտի աւանդութիւն, ուրեմն բոլոր փարիսեցիներն էլ պէտք է, որ պարտադիր մկրտուէին, եւ Յիսուս նրանց իզուր ասած պիտի լինէր, թէ Յովհաննէս Մկրտչի Մկրտութիւնը երկնքից է եւ ոչ՝ մարդկանցից (տե՛ս Մատթ. 21, 25-27)։ Հետեւաբար, ջրով մկրտուելը պարտադիր է ու չի կարող դիտուել որպէս միայն Հին Ուխտի աւանդութիւն։ Մկրտութեան խորհրդի նիւթը պիտի լինի ջուրը՝ մաքուր ու բնական, քանի որ այդ նիւթը մատնանշեց Ինքը Փրկիչը՝ասելով. «**Եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։ Հետեւաբար, արդարացի չեն եւ նրանք, որ մերժում են Մկրտութեան խորհրդի մէջ ցանկացած նիւթ։

Ինչպէս երեւում է Եկեղեցու Հայրերի բազմաթիւ վկայութիւններից, Եկեղեցին էլ միշտ ջրով է Մկրտութիւնը կատարել։

Սբ. Յուստիանոս. *«Ով համոզուի եւ հաւատա, որ մեր ուսմունքը եւ խօսքերը ճշմարիտ են, եւ ով խոստանա, որ կարող է ապրեկ այդ ձեւով, նրանց սովորեցնում են, որպէսզի նրանք աղօթքով եւ պահքով Աստծուց խնդրեն նախկին մեղքերի թողութիւն, մենք էլ նրանց հետ աղօթում ենք եւ պահք պահում: Յետոյ մենք նրանց տանում ենք այնտեղ, ուր ջուր կայ, եւ վերածնւում են նրանք նոյն ձեւով, որով մենք ինքներս վերածնուեցինք, այսինքն՝ նրանք այն ժամանակ լուացւում են ջրով բոլորի՝ Հօր ու Տէր Աստծու եւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Հոգու անունով»*[1]:

Օգոստինոս Երանելի. *«Ինչ է Քրիստոսի Մկրտութիւնը՝ ջրի աւազանը՝ բառերի արտասանութեամբ: Հանի՛ր ջուրը՝ Մկրտութիւն չկայ, հանի՛ր բառերը՝ Մկրտութիւն չկայ»*[2]:

Սբ. Կիւրեղ Երուսաղեմացի. *«Ինչպէս որ մարդը կազմուած է հոգուց եւ մարմնից, մաքրումն էլ պէտք է լինի կրկնակի՝ անմարմին՝ հոգու համար, եւ մարմնական՝ մարմնի համար: Ջուրը մաքրում է մարմինը, իսկ Հոգին դրոշմում է հոգին, որպէսզի մենք Աստծուն մօտենանք ցողուած սրտով եւ մաքուր լցուած մարմնով»*[3]: *«Ով նոյնիսկ բարիք էր գործում, բայց ջրով կնիք չստացաւ, չի մտնի երկնքի Արքայութիւն: Խօսքը համարձակ է, բայց իմը չէ, քանզի Յիսուսն է այդպէս սահմանել... Ով չի ընդունում Մկրտութիւնը, նա փրկութիւն չունի, բացի նահատակներից, որոնք ընդունում են երկնքի Արքայութիւնը նոյնիսկ առանց ջրի»*[4]:

Սբ. Բառսեղ Մեծ. *«Քանի որ Մկրտութեան մէջ առաջադրուած են երկու նպատակ՝ կործանել մեղաւոր մարմինը, որպէսզի այն չբերի մահուան պտուղներ, այլ Հոգով վերակենդանանայ եւ սրբութեան պտուղ ունենայ: Այս դէպքում ջուրն իրենից ներկայացնում է*

1 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/01/2023):

2 Նոյն տեղում:

3 Նոյն տեղում:

4 https://am-kalinin.livejournal.com/207150.html (առ 4/01/2023):

մահը, որ մարմինն իր մէջ ընդունում է ինչպէս դագաղ, իսկ Հոգին հաղարդում է կենդանարար ոյ՝ մեր հոգիները մեղսաւոր մեռելութիւնից նորոգելով նախասկզմնական կեանքի»: Բառսեղ Մեծն ասում է. «Քանի որ Մկրտութեան մէջ առաջադրուած են երկու նպատակ՝ կործանել մեղաւոր մարմինը, որպէսզի այն չբերի մահուան պտուղներ, այլ Հոգով վերակենդանանայ եւ սրբութեան պտուղ ունենայ: Այս դէպքում ջուրն իրենից ներկայացնում է մահը, որ մարմինն իր մէջ ընդունում է ինչպէս դագաղ, իսկ Հոգին հաղորդում է կենդանարար ուժ՝ մեր հոգիները մեղսաւոր մեռելութիւնից նորոգելով նախասկզմնական կեանքի»[1]:

Տերտուղիանոս. *«Օծումը կատարւում է մարմնի վրայ, բայց օգտւում է հոգին: Մկրտութեան տեսանելի արարքը, որն ընկղմում է մեզ ջրի մէջ, որպէս հոգեւոր արդիւնք ունի մեզ մեր մեղքերից ազատումը... Մարմինը լուացւում է, որպէսզի հոգին մաքրագործուի: Մարմինն օծւում է, որպէսզի հոգուն ընծայուի: Մարմինն ստանում է խաչի նշանը, որպէսզի հոգին ստանայ Նրա զօրութիւնը: Մարմինն ապաստանում է ձեռնադրութեան շուքի ներքոյ, որպէսզի հոգին լուսաւորուի Սուրբ Հոգով: Մարմինը սնուցւում է Տիրոջ Մարմնով եւ Արեամբ, որպէսզի հոգին լցուի Աստծով»*[2]:

Սբ. Կղեմէս Աղեքսանդրացի. *«Ընկղմուած լինելով ջրի մէջ՝ մենք լուսաւորւում ենք, լուսաւորուելով՝ որդեգրւում ենք Աստծուն, որդեգրուելով՝ դառնում ենք կատարեալ, եւ դրա միջոցով՝ անմահ. «Ես ասացի,- ասում է,- բոլորդ էլ որդիներ էք Բարձրեալի (Սաղմ. ՁԱ, 6)» Այս գոռծողութիւնը հաւասաչապէս անուանւում է շնորհ, լուսաւորութիւն եւ աւազան. աւազան, որի միջոցով մենք լուացւում ենք մեղքեռից, շնորհ, որով մեզ թողնւում են մեզքերի պատիժները, լուսաւորութիւն, որով մենք նայում ենք սուրբ եւ*

1 Նոյն տեղում:

2 Նոյն տեղում:

փրկարար լոյսին, այսինքն՝ յստակ տեսնում ենք Աստուածայինը»[1]:

Սբ. Բառնաբաս. *«Մկրտութիւնն աւանդւում է յանուն մեղքերի թողութեան: Մենք ջուրն ենք մտնում ծանրացած մեղքերով եւ անմաքրութեամբ, իսկ դուրս ենք գալիս՝ սրտում երկիւղ եւ յոյս պտղաբերելով»*[2]:

Սբ. Յովհաննէս Դամասկացին. *«Աստուած մեզ պատուիրեց վերածնել ջրով եւ Հոգով՝ ջրի վրայ Սուրբ Հոգու ներգործութեան ժամանակ, աղօթքով եւ Սուրբ Հոգուն կանչելով: Քանի որ մարդը բաղկացած է երկու մասից՝ հոգուց եւ մարմնից, Տէրն էլ մեզ տուեց կրկնակի մաքրագործում, այսինք՝ ջրով եւ Հոգով: Հոգով, որպէսզի նորոգի մեր մէջ Աստծու պատկերն ու նմանութիւնը, ջրով, ոչպէսզի Հոգու վերին օգնութեամբ մաքրի մարմինը մեղքից եւ ազատի ապականութիւնից: Ջուրն այստեղ մահուան խորհրդանիշն է, իսկ Հոգին տալիս է կեանքի երաշխիք»*[3]:

Սբ. Յովհան Ոսկեբերան. *«Մկրտութեամբ կատարւում է վերստին ծնունդ: Բայց եթէ մէկը քեզ հարցնի, թէ սա ինչպէ՞ս կը լինի, ապա նրա բերանը փակի՛ր Քրիստոսի խօսքով, որ սրա մեծագոյն եւ ամենապարզ ապացոյցն է: Իսկ եթէ մէկը քեզ հարցնի, թէ ինչո՞ւ է օգտագործւում ջուրը, ապա մենք էլ փոխադարձաբար կը հարցնենք. ինչո՞ւ ի սկզբանէ մարդու ստեղծման համար վերցուեց հողը: Այն, որ Աստուած կարող էր առանց հողի էլ մարդ ստեղծել, յայտնի է ամէն մէկին: Ուրեմն, մի՛ ջանայ քննել սա: Այն, որ [Մկրտութեան] ջուրը հարկաւոր է եւ անհրաժեշտ, դու կարող ես իմանալ հետեւեալ կերպ: Մի անգամ, երբ Հոգին իջաւ հեթանոսների վրայ, նախքան ջրի օգտագործումը (տե՛ս Գործք 10, 44), Պետրոս առաքեալը կանգ չառաւ այս իրողութեան վրայ, այլ տե՛ս, թէ ինչ խօսեց ջրի մասին՝ որպէս անհրաժեշտ եւ ոչ աւելորդ նիւթի. «Ո՞վ կարող է արգելել, որ ջրով մկրտուեն*

1 Նոյն տեղում:

2 Նոյն տեղում:

3 Նոյն տեղում:

*սրանք, որոնք նոյնպէս Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպէս եւ մենք» (Գործք 10, 47)։ Հետաքրքրական է, որ թէեւ նրանք հաւատացին, եւ Սուրբ Հոգին էլ իջաւ նրանց վրայ, սակայն Պետրոս առաքեալը չբաւարարուեց այս բոլորով, այլ հրամայեց, որ մկրտուեն Յիսուս Քրիստոսի անունով։ Բայց ինչո՞ւ է հարկաւոր ջուրը։ Վերջապէս ասեմ սրա մասին ու ձեզ յայտնեմ սրբազնագոյն մի խորհուրդ։ Սրա համար գոյութիւն ունեն մի քանի սրբարար պատճառներ, բայց բազմաթիւ պատճառներից ես կը նշեմ միայն մէկը։ Ջրի մէջ խորհրդաւոր կերպով ներկայացուած են դագաղն ու մահը, յարութիւնն ու կեանքը. եւ այս ամէնը միաանաբար են կատարւում։ Երբ մեր գլուխներն ընկղմւում են ջրի մէջ, ինչպէս դագաղի մէջ, հին մարդն ընկղմուելով ամբողջութեամբ թաղւում է, եւ յետոյ ելնում է նոր մարդը։ Եւ որքան մեզ համար հեշտ է ընկղմուել ջրի մէջ եւ դուրս գալ, այդքան էլ հեշտ է Աստծու համար թաղել հին մարդը եւ վերածնել նորը։ Սա կատարւում է երիցս, որպէսզի իմանաս, թէ այս ամէնը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու զօրութեամբ է կատարւում։ Իսկ թէ իմ ասածները գուշակութիւն չեն, լսի՛ր, թէ ինչ է ասում Պօղոս առաքեալը. «**Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ**» (Հռոմ. 6, 4)։ Նաեւ՝ «**Հին մարդը խաչուեց նրա հետ**» (Հռոմ. 6, 6), կամ՝ «**Նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան**» (Հռոմ. 6, 5)։ Հին Կտակարանում կարդում ենք որ Աստուած Իրեն համեմատում է ջրի հետ։ Ժողովրդին յանդիմանելով՝ Նա ասում է. «**Ինձ՝ կենաց ջրի աղբիւրիս, լքեց եւ իր համար ծակ փոսեր փորեց, որոնք ջուր չեն կարող պահել**» (Երեմ. 2, 13)։ Հետեւաբար, ջուրը կեանքի եւ երբեմն էլ հէնց Սուրբ Հոգու խորհրդանիշն է։ Ծնուողի համար ջուրն օգտագործւում է որպէս ծննդատեղի։ Ինչպէս որովայնն է մանուկի համար, այդպէս էլ ջուրն է արդարի համար։ Նա յղանում ու ձեւաւորւում է ջրի մէջ։ Ճշմարիտ է ասում Պօղոս առաքեալը. «**Ո՛վ, խորութիւն Աստծու հարստութեան, իմաստութեան եւ գիտութեան։ Ինչքա՛ն անքննելի են նրա դատաստանները, եւ անզննելի՝ Նրա ճանապարհները**»*

*(Հռոմ. 11, 33)։ Ի սկզբանէ ասուած էր. «**Թող ջրերն արտադրեն կենդանութեան շունչ ունեցող զեռուններ**» (Ծնունդ. 1, 20)։ Այն ժամանակից, երբ Տիրակալն իջաւ Յորդանանի ջրերում, ջուրն արդէն ստեղծում է ո՛չ թէ «կենդանութեան շունչ ունեցող շատ զեռուններ», այլ բանական ու հոգեկիր հոգիներ»*[1]։

Սբ. Գրիգոր Նիւսացի. *«Հաւատքն ու ջուրը հիմք են դնում յաւէրժական փրկութեան համար։ Աստծու գործունէութեան առանձնայատուկ բնորոշումը նրա՛նց փրկութիւնն է, ովքեր Նրա կարիքն ունեն, եւ փրկութիւնը իրականում կատարւում է ջրի մէջ մաքրուելու միջոցով, եւ նա, ով մաքրուել է, դառնում է մաքրութեանը հաղորդակից. իսկ իսկապէս մաքուրը Աստուածայինն է»*[2]։

Սբ. Յովհան Ոսկեբերան *դարձեալ ասում է. «Ի՞նչ է ասում Քրիստոս. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ մէկը ջրից եւ Հոգուց չծնուի, չի կարող մտնել Աստծու Արքայութիւնը»։ Ահա թէ ի՞նչ է Նա հասկացնում սրանով։ Դուք կարծում էք, թէ անհնար է դա, բայց ես ասում եմ, որ դա շատ հնարաւոր է, նոյնիսկ անհրաժեշտութիւն է, հակառակ դէպքում, հնարաւոր չէ փրկուել։ Իսկ Աստուած անհրաժեշտութիւնը մեզ համար յարմար դարձրեց։ Երկրային ծնունդը՝ ծնունդ է ըստ մարմնի, հողից, եւ հետեւաբար, երկնային ամէն ինչ արգելափակուած է դրա համար, քանի որ ի՞նչ ընդհանուր բան կայ երկրի եւ երկնքի միջեւ։ Բայց մէկ այլ ծնուն, որ ծնունդ է Հոգուց, մեզ համար յարմար կերպով բացում է դրախտի դռները։ Լսէ՛ք, դուք բոլորդ, որ օտար էք լուսաւորութիւնից (այսինքն՝ օտար էք Ս. Մկրտութեան խորհրդից). սարսափէ՛ք, լացէ՛ք։ Սարսափելի է այս սպառնալիքը, սարսափելի է սահմանումը։ Անհնար է, ասում է Քրիստոս, որ նա, ով չի ծնուել ջրից եւ Հոգուց, մտնի երկնքի Արքայութիւն, քանզի նա դեռ կրում է մահուան հանդերձը, դատապարտութեան հանդերձը,*

1 St. John Chrysostom, Homily XXV-XXVI on John.

2 https://e-knigi.com/religija-i-duhovnost/religija/page-13-266247-grigorii-nisskii-izbrannye-tvoreniya.html (ստ 4/02/23):

ապականութեան հանդերձը, դեռ չի ստացել նշանը Տիրոջից, նա դեռ օտար է, եւ չունի թագաւորութեան մէջ համաձայնեցուած նշանը»[1]:

✝ ✝ ✝

1 https://www.agape-biblia.org/prpakety/zlatoust/Ioan025a.htm (ստ 4/02/23):

Ինչպէ՞ս առանց Մկրտութեան փրկուեց աջակողմեան աւազակը

Ոմանք առարկում են, թէ փրկութեան համար Մկրտութիւնը պարտադիր պայման չէ, քանի որ աջակողմեան աւազակը մկրտուած չէր, սակայն փրկուեց։

Պատասխանենք. նախ՝ աւազակը չապրեց մինչեւ Նոր Ուխտի՝ Քրիստոսի Եկեղեցու հաստատումը։ Ուստի դեռեւս հաստատուած չէր Նոր Ուխտի Ս. Մկրտութեան խորհուրդը։ Այն հաստատուեց Տիրոջ յարութիւնից յետոյ՝ համբարձումից առաջ։ Իսկ աւազակը փրկուեց Հին Ուխտի բոլոր այն հաւատացեալ մարդկանց պէս, որոնց Տէրն արդարացրեց։

Շենուդա Գ Հայրապետն իր «Համեմատական աստուածաբանութիւն» գրքում նշում է. «Աւազակն ընդունեց լաւագո՛յն Մկրտութիւնը, որին ամէնքս էլ ձգտում ենք։ Որովհետեւ ի՞նչ է Մկրտութիւնը, եթէ ոչ Քրիստոսի հետ մեռնել, ինչպէս բացատրում է Պօղոս առաքեալը հռոմէացիներին ուղղուած նամակի 6-րդ գլխում (տե՛ս Հռոմ. 6, 3-8)։ Խաչուած աւազակն իրապէս մեռաւ Քրիստոսի հետ եւ այդպիսով նրա մահը դարձաւ Մկրտութիւն։ Նմանատիպ Մկրտութիւն է նաեւ այն մարտիրոսների արեան Մկրտութիւնը, ովքեր հալածանքների ժամանակ հաւատացին Տէր Յիսուս Քրիստոսին եւ սպանուեցին՝ չհասցնելով աւազանի Մկրտութեան շնորհն ընդունել։ Նրանց մահը եղաւ Մկրտութիւն, որովհետեւ մեռան Քրիստոսի հետ, ինչպէս այդ աւազակը... Եթէ Մկրտութիւնն անհրաժեշտ է, արդեո՞ք Հին Կտակարանի մարգարէները մկրտուած էին։ Եթէ Հին Կտակարանի սուրբերի ու մարգարէների ժամանակաշրջանում Մկրտութեան պատուիրանը գոյութիւն ունենար, ապա նրանք, իհարկէ, կը մկրտուէին, սակայն

այս պատուիրանը հաստատուել է միայն քրիստոնէութեան մէջ։ Պատճառն այն է, որ Մկրտութիւնը Քրիստոսի հետ մեռնել է նշանակում, իսկ Քրիստոս դեռ չէր մեռել հինկտակարանեան ժամանակներում։ Այնուամենայնիւ, Հին Ուխտի մարգարէները իբրեւ Մկրտութեան խորհուրդ կատարեցին այն, ինչը կարող էին իրենց ժամանակ՝ թլփատութիւնը եւ Կարմիր ծովով անցումը։ Նրանք նաեւ նշում էին Զատիկը՝ գառի զոհաբերմամբ, որը Քրիստոսի արեան խորհուրդն ունէր։ Մենք չենք կարող ասասել, որ մարդիկ գործադրէին մի պատուիրան, որը գոյութիւն չունէր իրենց ժամանակ»[1]։

Աւազակն ընդունեց լաւագոյն Մկրտութիւնը, որին ամէնքս էլ ձգտում ենք։ Պօղոս առաքեալը բացատրում է. «**Չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք։ Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով. որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ... եթէ մեռանք Քրիստոսի հետ, հաւատում ենք, թէ նրա հետ էլ կ՚ապրենք**» (Հռոմ. 6, 3-8)։

Բայց ոմանք, խելամիտ աւազակի օրինակը մեզ յիշեցնելով, ասում են, թէ նա մկրտուած չէր, սակայն փրկուեց, հետեւաբար՝ դուք պէտք է ընդունէք, որ հեթանոսներն ու բոլոր անհաւատներն էլ կարող են փրկուել առանց Մկրտութեան։ Այս պատճառաբանութիւնը, իհարկէ, շատ տարօրինակ է։

Նախ եւ առաջ՝ խելամիտ աւազակը հեթանոս չէր։ Նա հրեայ էր, այսինքն՝ արդէն իսկ իր թլփատութեամբ Աստծու Ուխտի մէջ էր եւ գոնէ գիտէր բացայայտուած օրէնքի հիմնական ճշմարտութիւնները՝ չնայած իր կեանքում նրանց չէր հետեւում։ Երկրորդ, ըստ Ղուկաս աւետարանչի՝ աւազակը հաւատում էր

1 H. H. Pope Shenouda III, Comparative Theology, 1988, pg. 40.

խաչեալ Քրիստոսին, որին Տէր էր կոչում ու դիմում էր Նրան փրկութեան խնդրանքով։ Ինչպէ՞ս կարող է նրա օրինակը ծառայել որպէս արդարացում այն մտածումի համար, թէ կարող են փրկուել նաեւ նրանք, ովքեր Աստծու Ուխտի մէջ չեն ու Քրիստոսին չեն հաւատում։ Երրորդ՝ Եկեղեցու հին աւանդութիւնը խելամիտ աւազակին ներկայացնում է որպէս մարտիրոս։ Քրիստոս աւազակին խաչի վրայից դէպի դրախտ է տանում՝ սպանութեան պատիժը վերածելով մարտիրոսութեան։ Ինչպէ՞ս կարող է նրա օրինակը ծառայել որպէս արդարացում այն մտածումի համար, թէ կարող են փրկուել նաեւ նրանք, ովքեր Աստծու Ուխտի մէջ չէին ու Քրիստոսին չէին հաւատում։ Նմանատիպ Մկրտութիւն է նաեւ այն մարտիրոսների արեան Մկրտութիւնը, ովքեր հալածանքների ժամանակ հաւատացին Տէր Յիսուս Քրիստոսին եւ սպանուեցին՝ չհասցնելով ջրի Մկրտութեան շնորհն ընդունել։ Նրանց մահը եղաւ Մկրտութիւն, քանի որ մեռան Քրիստոսի հետ, ինչպէս այդ աւազակը։

*Ոմանք, մէջբերելով Պօղոս առաքեալի խօսքը, ասում են, թէ կարելի է արդարանալ առանց Մկրտութեան. «**Եւ դուք, գոնէ ոմանք, այդպիսիք էիք. բայց լուացուեցիք, մաքրուեցիք, արդարացուեցիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով եւ մեր Աստծու Հոգով**» (Ա. Կորնթ. 6, 11)։ Բայց առաքեալն այստեղ խօսում է Ս. Մկրտութեան խորհրդի մասին՝ ասելով, թէ մենք արդարանում ենք Տէր Յիսուսի անունով, լուացուելով ու սրբուելով սուրբ Աւազանի ջրով եւ մեր Աստծու Սուրբ Հոգով, այսինքն՝ ջրից ու Հոգուց ծնուելով. «**Եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։*

Եթէ Մկրտութիւնն անհրաժեշտ է, արդեո՞ք Հին Կտակարանի մարգարէները մկրտուած էին։ Եթէ նրանց օրոք Մկրտութեան պատուիրանը գոյութիւն ունենար, նրանք անշուշտ կը մկրտուէին, սակայն այս պատուիրանը հաստատուել է միայն քրիստոնէութեան մէջ։ Պատճառն այն է, որ Մկրտութիւնը Քրիստոսի հետ մեռնել է

նշանակում, իսկ Քրիստոսը դեռ չէր մահացել հինկտակարանեան ժամանակաշրջանում։ Այնուամենայնիւ, Հին Ուխտի սուրբերն ու մարգարէները իբրեւ Մկրտութեան խորհուրդ կատարեցին այն, ինչ կարող էին իրենց ժամանակ, որի խորհրդանիշն էր տապանը, թլփատութիւնը, Կարմիր ծովով անցումը եւ այլ մարգարէութիւններ։ Նրանք նաեւ նշում էին Զատիկը՝ գառի զոհաբերմամբ, որը խորհուրդն ունէր Քրիստոսի արեան։ Մենք չենք կարող սպասել, որ մարդիկ գործադրէին մի պատուիրան, որը գոյութիւն չուներ իրենց ժամանակ։

Սուրբ Հայրերի հնագոյն գրութիւններում մենք արդէն տեսնում ենք բազմաթիւ յիշատակումներ այդ մասին։

Սբ. Կիպրիանոս Կարթագենացի. *«Ոմանք (մարդկային հմտութեամբ կարծես թէ կարող են վերացնել Աւետարանի քարոզչութեան ճշմարտութիւնը) հարցնում են, որ եթէ որեւէ մէկը, նախքան Եկեղեցում մկրտուելը, բռնուել է (Յիսուսի) անունը խոստովանելու համար ու ենթարկուել է մահապատժի, արդեո՞ք նա պէտք է կորցնի իր փրկութեան յոյսն ու խոստովանութեան վարձքը միայն այն պատճառով, որ ջրով չի վերածնուել։ Թող յայտնի լինի նման բարերարների եւ հերետիկոսների պաշտպաններին, որ նախ եւ առաջ, այդպիսիներն ունեն Եկեղեցու մաքուր հաւատքն ու ճշմարտութիւնը եւ, ի յաղթանակ սատանայի, դուրս են գալիս աստուածային այս ճամբարից՝ Հայր Աստծու, Քրիստոսի եւ Սուրբ Հոգու մասին լիարժէք եւ անկեղծ գիտութեամբ։ Եւ երկրորդ, նրանք չեն զրկւում Մկրտութեան խորհրդից, ինչպէս այն մարդիկ, որոնք մկրտուել են ամենափառայեղ եւ մեծագոյն՝ արեան Մկրտութեամբ, որի մասին ասում է նաեւ Տէրը. «**Մի Մկրտութիւն ունեմ մկրտուելու եւ ինչպէ՛ս եմ շտապում, որ կատարուի**» (Ղուկ. 12։50)։ Իսկ նրանք, ովքեր մկրտւում են իրենց արեամբ եւ սրբագործուած տառապանքով հասնում են կատարելութեան ու ստանում աստուածային խոստման շնորհը, դա ցոյց է տալիս նոյն Տէրը Աւետարանում, երբ աւազակին, ով հաւատում եւ*

խոստովանում է իր տառապանքի մէջ, ասում է, թէ Իր հետ կը լինի դրախտում (տե՛ս Ղուկ. 23, 43)»[1]:

Սբ. Եփրեմ Ասորի. *«Առաքեալի խօսքը, թէ՝ «**Մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, Նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք**» (Հռոմ. 6, 3), ցոյց է տալիս է, որ աւազակը մեղքերի թողութիւն ստացաւ Քրիստոսի կողից հոսող ջրի եւ արեան խորհրդի միջոցով... Այսպիսով, Նա ցոյց տուեց Իր առատ ողորմութիւնը, ընդ որում՝ հէնց այն ժամանակ, երբ տեսաւ աւազակի հաւատքը: Դրա դիմաց նրան անչափելի պարգեւներ շնորհեց անվճար, Իր գանձերը նրա առջեւ թափեց անվճար, անմիջապէս նրան Իր դրախտը տեղափոխեց, եւ այնտեղ (դրախտ) մտնողին Իր գանձերի վրայ հաստատեց: «Այսօր ինձ հետ դրախտում կը լինես»: Այսպիսով, դրախտը բացեց աւազակը, այլ ոչ թէ արդարներից որեւէ մէկը: Դրախտը, որը փակեց արդար Ադամը, երբ դարձաւ յանցագործ, բացուեց մի յանցագործի կողմից, ով յաղթեց»[2]:*

Տերտուղիանոս. *«Մեզ համար կայ նաեւ երկրորդ Մկրտութիւն, որը միայն մէկն է. այն է՝ արեան Մկրտութիւնը, որի մասին Տէրը, ով ստացել էր արդէն Մկրտութիւնը, ասում է. «Եւ **մի Մկրտութիւն ունեմ մկրտուելու**» (Ղուկ. 12, 50): Նա եկաւ, ինչպէս գրել է Յովհաննէսը, «**ջրով եւ արեամբ**» (Ա. Յովհ. 5, 6)՝ ջրով մկրտուելու, արեամբ փառաւորուելու եւ այնուհետեւ մեզ՝ ընտրեալներին կանչելու ջրի եւ արեան միջոցով: Այս երկու Մկրտութիւնները Նա հոսեցնում է խոցուած կողի վէրքից (Յովհ. 19, 34), քանի որ նրանք, ովքեր հաւատում էին Նրա արեանը, լուացուեցին ջրով, եւ նրանք, ովքեր լուացուեցին ջրով, նոյնպէս խմում են (Նրա) արիւնը: Սա Մկրտութիւն է, որը փոխարինում է չընդունուած աւազանին եւ վերականգնում է կորցրածը»[3]:*

Սբ. Յովհան Ոսկեբերան. *«Քրիստոս մկրտեց աւազակին*

1 https://orthodoxy33.wordpress.com/2011/09/20/kresch/ (ստ 3/05/23):

2 Նոյն տեղում:

3 https://www.tertullian.org/russian/de_baptismo_rus.htm (ստ 5/04/23):

*խաչի վրայ Իր վերքի միջոցով, եւ նա անմիջապէս արժանացաւ դրախտի դռների բացուելուն... Փրկիչն աւազակին խոստացել էր փրկութիւն, մինչդեռ նա ժամանակ չունէր ու չէր կարող գործադրել իր հաւատն ու լուսաւորուել (Մկրտութեամբ), սակայն ասուած էր. «**Եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5): Աւազակի համար չկար ո՛չ առիթ, ո՛չ հնարաւորութիւն, ո՛չ էլ ժամանակ՝ մկրտուելու, քանզի նա կախուած էր խաչից: Սակայն Փրկիչն այդ անյուսութեան վիճակից ելքը գտաւ: Քրիստոս այնպէս արեց, որ տառապելուց յետոյ զինուորներից մէկը տէգով խոցեց Տիրոջ կողը, եւ իսկոյն արիւն եւ ջուր հոսեց (տե՛ս Յովհ. 19, 34), եւ ոչ միայն հոսեց, այլեւ ելաւ այնպիսի աղմուկով, որ շաղ տալով ցայտեց աւազակի մարմնի վրայ: Ի վերջոյ, երբ ջուրը ցողում է աղմուկով, այն ցրցամում է ցայտումներ, իսկ երբ այն դանդաղ է հոսում, այն հոսում է խաղաղ ու հանգիստ: Բայց կողից արիւնը եւ ջուրն աղմուկով դուրս եկան, այնպէս որ դրանք ցայտեցին աւազակի վրայ, եւ այդ շաղումով նա մկրտուեց»*[1]:

Սբ. Կիւրեղ Երուսաղէմացի. «*Ով Մկրտութիւն չի ընդունում, նա փրկութիւն չունի, բացառութեամբ մարտիրոսներից, որոնք առանց ջրի (մկրտութեաբ) էլ ստանում են երկնքի Արքայութիւնը, քանի որ Փրկիչը, խաչով քաւելով տիեզերքը եւ խոցուած լինելով կողից, բխեցրեց այնտեղից արիւն ու ջուր, որպէսզի ոմանք խաղաղութեան ժամանակ մկրտուեն ջրով, ոմանք էլ հալածանքների ժամանակ մկրտուեն իրենց սեփական արեամբ: Այո՛, նաեւ մարտիրոսութիւնն էլ Փրկիչը Մկրտութիւն անուանեց՝ ասելով. «**Կարո՞ղ էք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ, կամ մկրտուել այն Մկրտութեամբ, որով ես մկրտուելու եմ**» (Մարկ. 10, 38): Եւ նահատակները գիտակցում են դա՝ դառնալով աշխարհի, հրեշտակների եւ մարդկանց համար տեսարան»*[2]:

1 https://azbyka.ru/way/o-kreshhenii-blagorazumnogo-razbojnika/ (ստ 1/03/23).

2 https://azbyka.ru/otechnik/Kirill_Ierusalimskij/oglasit/3 (ստ 1/03/23):

Սբ. Բասեղ Մեծ. *«Ոմանք, բարեպաշտական սխրանքի ժամանակ, իրապէս եւ ոչ թէ ընդօրինակաբար, յանուն Քրիստոսի մահն ընդունելով, իրենց փրկութեան համար առդէն կարիքը չունեն ջուր-խորհրդանիշի՝ մկրտուելով սեփական արեամբ»*[1]:

Սբ. Եփրեմ Ասորի. *«Աւազակը մեղքերի թողության ցողում ստացաւ Քրիստոսի կողմից հոսող ջրի և արյան հաղորդության միջոցով»*[2]:

Սբ. Գրիգոր Աստուածաբան. *«Գիտեմ նաեւ 4-րդ Մկրտութիւնը՝ արեամբ եւ մարտիրոսութեամբ մկրտութիւն, որով մկրտուեց եւ ինքը՝ Քրիստոս, որն առաւել բարջրահարգ է միւսներից, որովհետեւ չի ապականում նոր անմաքրութիւններով»*[3]:

Սբ. Նէրսէս Շնորհալու *աղօթքից յիշենք հետեւեալ հատուածը. «Նահատակնե՛ր պանծալի եւ սիրելինե՛ր երկնաւոր Հօր, որ ձեր արեամբ մկրտուեցիք Քրիստոսի հետ խաչի մահով. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների համար: Մարտիրոսնե՛ր ցանկալի եւ օթեւաննե՛ր ճշմարտութեան Հոգու, որ հոգով յաղթեցիք կարիքներն ու ցանկութիւնը. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների համար...»*[4]:

1 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/05/2023):

2 https://azbyka.ru/way/o-kreshhenii-blagorazumnogo-razbojnika (առ 4/05/2023):

3 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/05/2023):

4 Սբ. Ներսէս Շնորհալի, հատուած Արեւագալի ժամերգութիւնից:

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ Մկրտութիւնը ձեւական եւ արտաքին պայմանական նշան է

Բարեփոխութեան շարժման յայտնի «աստուածաբաններն» պնդում են, թէ Մկրտութիւն չի նշանակում վերստին ծնունդ եւ միայն ապաշխարելով ու հաւատով կարելի է վերստին ծնուել: Ասում են, թէ Մկրտութիւնը միայն փրկուած լինելու համոզումը գոյացնելու համար է եւ ընդունած հաւատի խորհրդանշական (symbolic) *վկայութիւնն ու արտայայտութիւնը: Նաեւ ասում են, թէ Մկրտութիւնը պարզապէս խորհրդանշական ծիսակատարութիւն է՝ լոկ մեր փրկուած լինելու համոզումն ամրացնելու համար: Դարձեալ ասում են. «Աւազանի Մկրտութիւնը եւ Տիրոջ Ընթրիքը խորհուրդներ չեն, այլ պարզապէս սահմանումներ են, որոնք չեն կարող իրենցից որեւէ շնորհ հաղորդել»*[1]*: Եւ դարձեալ՝ «Աստուած, ըստ Իր ողորմութեան, կարող է շնորհ պարգեւել այն մարդկանց, որոնք խորհրդանշական գործողութիւններ են կատարել, սակայն (Մկրտութեան) արարողութիւնն իրենից որեւէ ուժ չի պարունակում»*[2]*: «Մկրտութեան մէջ գոյութիւն չունեն շնորհի դրսեւորումներ»*[3]*: Բողոքական աստուածաբանները պնդում են. «Քրիստոս կարգադրեց մկրտուել (տե՛ս Մատթ. 28, 19-20), եւ քանի որ այս արարողութիւնը Տիրոջից կարգադրուեց, ուրեմն այն պէտք է ընդունել իբրեւ կարգադրութիւն եւ ո՛չ խորհուրդ: Մկրտութիւնն*

1 «Աւետարանական քրիստոնեայ-բապտիստների հաւատքի հիմնական սկզբունքները», Օդեսա, 1992, էջ 71:

2 Charles C. RyRie, “Basic Theology: A Popular Systematic Guide to Understanding Biblical Truth,” Chicago, 1999, p. 500.

3 Henry C. Thiessen, “Lectures in Systematic Theology,” 1994, p. 351.

ինքն իրենից մարդու մէջ հոգեւոր փոփոխութիւն չի իրագործում։ Մենք շարունակում ենք Մկրտութեան արարողութիւններ կատարել, քանի որ այսպէս կարգադրուեց Քրիստոսի կողմից, քանի որ սա հրապարակային մի վկայութիւն է մեզ համար։ Այսպիսով, Մկրտութիւնը հաւատի արտայայտութիւն է, հոգեւոր թլփատութիւն՝ հրապարակային հաւատարմութեան ցոյցն առ Քրիստոս»[1]։ Նոյնպէս ասում են. «Մկրտութիւնը հաստատում է, թէ փրկուած լինելու պարգեւը մեզանից արդէն ընդունուած է եւ Գողգոթայի զոհաբերութիւնն ու Սուրբ Հոգին արդէն իրագործեցին փրկութեան սրբագործութիւնը մեր սրտում, եւ հիմա մենք վայելում ենք մեզ պարգեւուած՝ Քրիստոսի կեանքը»[2]։

Նախ եւ առաջ ասենք, որ Յիսուս Քրիստոս հաստատում է Ս. Մկրտութեան խորհուրդը, որպէսզի հաւատացողները մկրտուելով ստանան Սուրբ Հոգու պարգեւը՝ջրից ու Հոգուց վերստին ծնուելով, սրբուեն իրենց սկզբնական՝ ադամական եւ ներգործական մեղքերից ու դառնան Աստծու որդեգիր եւ Քրիստոսի եկեղեցու անդամ (տե՛ս Յովհ. 1, 13։ Գաղ. 4, 6-7)։ Մկրտութեամբ Քրիստոս մեզ փրկում ու նորոգում է, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. ***«Ոչ այն արդարութեան գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմութեան համաձայն, փրկեց մեզ վերստին ծննդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու»*** *(Տիտ. 3, 5),* ***«որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով»*** *(Եփես. 5, 26)։ Յունական լաւագոյն բնագրերում գրուած է՝ «...որ սրբացնի մեզ աւազանի ջրով ու խօսքով»։ Ջրից ու Հոգուց ծնուածը նոր ծնունդ է, որով մարմինն աստուածային ներգործութեամբ ծնւում է Սուրբ Հոգուց եւ ելնելով վերածնութեան Սուրբ Աւազանից՝նոր մարդ է դառնում եւ Աստծու փրկագործական Նոր Ուխտի մէջ մտնում։*

Հին Կտակարանում խորհրդանշական յիշատակութիւններ

1 Millard J. Erickson, “Christian Theology,” 1, 1994, pg 925, 929.

2 Павел Рогозин, «Откуда все это появилось” http://readli.net/otkuda-vse-eto-poyavilos/ (ստ 3/05/23):

կան Նոր Ուխտի Մկրտութեան մասին: Եզեկիէլ մարգարէն ասում էր. «Ես վերցնելու եմ ձեզ հեթանոսների միջից, հաւաքելու եմ ձեզ բոլոր ազգերի միջից ու տանելու եմ ձեզ ձեր երկիրը: Ձեզ վրայ սուրբ ջուր եմ ցանելու, եւ դուք մաքրուելու էք ձեր բոլոր պղծութիւններից. ձեր բոլոր կուռքերից մաքրելու եմ ձեզ: Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մէջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղէն սիրտն ու արմնեղէն սիրտ եմ տալու ձեզ. իմ հոգին եմ տալու ձեզ: Եւ այնպէս եմ անելու, որ իմ արդարութեան ճանապարհով ընթանաք, օրէնքներս պահէք ու կատարէք դրանք» (Եզեկ. 36, 24-27): Նաեւ Տէրն դիմում է մեղաւոր Երուսաղէմին, որն այստեղ խորհրդանշում է մեղաւոր մարդու անկեալ հոգին. «Թեւերս տարածեցի վրադ ու ծածկեցի խայտառակ մերկութիւնդ: Երդում արեցի եւ ուխտ կապեցի հետդ, - ասում է Ամենակալ Տէրը, - եւ դու իմը եղար: Լուացի քեզ ջրով, մաքրեցի քեզ արիւնից ու օծեցի քեզ իւղով» (Եզեկ. 16, 8-9): Այստեղ ջրով լուացումը Մկրտութեան խորհուրդն ունի, իսկ իւղով օծումը Սուրբ Հոգով օծման խորհրդանիշն է: «Իմը դարձար»-ը նշանակում է, որ հաւատացեալները դարձան Քրիստոսի Մարմնի՝ Եկեղեցու անդամ: Զաքարիա մարգարէն ասում էր. «Այն օրը Դաւթի տան համար պիտի բացուի ամէն մի վայր՝ նրա փոփոխման ու մաքրման համար» (Զաք. 13, 1): Հին Իսրայէլի՝ Կարմիր ծովով անցնելը եւ իրեն հովանաւորող ամպի սիւնը խորհրդանշում են Յիսուս Քրիստոսի հաստատած Մկրտութեան խորհուրդը: Այս մասին Պօղոս առաքեալն ասում է. «Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ ամպի առաջնորդութեան տակ էին եւ բոլորն էլ ծովով անցան. եւ բոլորը, հետեւելով Մովսէսին, մկրտուեցին ամպի ու ծովի մէջ» (Ա. Կորնթ. 10, 1-2): Ամպի սիւնը Տիրոջ ներկայութիւնն էր, իսկ այժմ Սուրբ Հոգին Մկրտութեան աւազանի ջրի մէջ իջնելով, մկրտեալին սրբում է սկզբնական եւ ներգործական մեղքերից եւ նրան ազատում սատանայի գերութիւնից:

Ս. Մկրտութեան խորհուրդն այնպիսի փրկարար սրբագոր-

*ծութիւն է, որի միջոցով մկրտուողը, մաքրուելով իր մեղքերից, վերստին ծնւում է՝ իբրեւ նոր մարդ ու Սուրբ Հոգու պարգեւաբաշխ շնորհների տաճար է դառնում՝ իրական եւ ամենամտերիմ հաղորդակցութեան մէջ մտնելով իր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հետ, միաժամանակ դառնալով ժառանգորդը երկնքի Արքայութեան (տե՛ս Տիտ. 3, 4-7)։ Պետրոս առաքեալը բոլոր հաւատացողներին խրատում է. «**Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը**» (Գործք 2, 38)։ Իսկ Պօղոս առաքեալն ասում է. «**Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք**» (Գաղ. 3, 27)։ Ս. Մկրտութիւնը, ինչպէս մի հագուստ, որ ծածկում է մարմնի մերկութիւնը, այդպէս էլ այն Քրիստոսի շնորհով լցնում է հոգու մերկութիւնը, իսկ հաւատացեալները Քրիստոսի Մարմնի անդամներ են դառնում եւ այսպիսով տարբերւում են անհաւատներից ու այլադաւան աղանդաւորներից։*

*Միայն հաւատալ եւ ապաշխարել չի նշանակում վերստին ծնուել։ Ապաշխարութիւնը վերականգնումն ու վերանորոգումն է մեղքի մէջ ընկած Աստծու որդիների, եւ քանի որ մարդ արարածը մեղանչական է եւ յաճախ կամայ թէ ակամայ յանցանքներ է գործում, պարտաւոր է ո՛չ թէ մէկ անգամ, այլ մշտապէս ապաշխարել եւ խոստովանել սեփական մեղքերն Աստծու առաջ ու թողութիւն խնդրել։ Ապաշխարութիւնը հետեւանք է զղջման, որով զգում ենք մեր անկումն ու ինքնարդարացման անզօրութիւնը եւ մեր յոյսը դնում ենք Քրիստոսի վրայ, որպէսզի Նա մեզ վերստին ընդունի իբրեւ մոլորեալ, անառակ որդի ու զօրացնի նորոգ կեանքի շնորհներով։ Իսկ Մկրտութիւնը վերստին ծննդեան խորհուրդն ունի, որի մասին Տէրը խօսում է Նիկոդէմոսի հետ՝ նրան բացատրելով հոգեւոր, վերստին ծննդեան խորհուրդը. «**Եթէ մէկը վերստին չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը տեսնել**» (Յովհ. 3, 3), եւ յետոյ բացատրում է, թէ ինչպէ՛ս է լինում հոգեւոր*

վերածնունդը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմնից ծնուածը մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ հոգի» (Յովհ. 3, 5-6): Նիկոդիմոսի հարցումներին պատասխանելով՝ Տէրը տալիս է Մկրտութեան խորհրդի խոստումը եւ Իր համբառնումից առաջ հաստատում է այն ու հրաման տալիս Իր աշակերտներին՝ ասելով. «Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28, 19): Մկրտութիւնը վերստին ծնունդ է, որովհետեւ մկրտուողը, իր մարմնական ապականեալ ծնունդից յետոյ միանգամ եւ ընդմիշտ մկրտուելով, նորից ծնւում է հոգով՝ Աստծու կենդանի եւ յաւիտենական խօսքով (տե՛ս Յովհ. 3, 3-8: Ա. Պետր. 1, 23): Այս մասին Պօղոս առաքեալն ասում է. «Ոչ այն արդարութեան գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմութեան համաձայն՝ փրկեց մեզ վերստին ծննդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու» (Տիտ. 3, 5): Առաքեալը նաեւ ասում է. «Նրանով դուք անձեռագործ թլփատութեամբ թլփատուեցիք հաւատով՝ մերկանալով մեղանչական մարմնից Քրիստոսի թլփատութեամբ. թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք Աստծու զօրութեանը հաւատալով, որը նրան յարութիւն տուեց մեռելներից» (Հռոմ. 6, 4):

Եթէ աղանդաւորը Մկրտութեան արարողութեամբ վկայում է, թէ ինքն հոգեպէս առողջ է, ապա ուղղադաւան հաւատացեալի համար Մկրտութիւնը խորհուրդ է եւ բժշկութեան ճանապարհ, սպեղանի է, որն անհրաժեշտ է՝ վերականգնելու Աստծու հետ իր նախկին միութիւնը: Ս. Մկրտութեան խորհուրդն աղանդաւորը համարում է ձեւական արարողութիւն եւ արտաքին մի նշան, քանի որ նա մկրտւում է՝ «որովհետեւ...» սկզբունքով, իսկ ուղղափառ հաւատացեալը մկրտւում է՝ «որպէսզի...» սկզբունքով: Աստուածաբանական կարեւորագոյն այս տարբերութիւնը մայրն է քրիստոնէական հոգեւոր կեանքի: «Մկրտութեամբ թաղուեցինք

նրա հետ մահուան մէջ, որպէսզի ...մենք քայլենք նոր կեանքով... հին մարդը խաչուեց նրա հետ, որպէսզի քայքայուի մեղքի մարմինը, եւ այլեւս մենք չծառայենք մեղքին» (Հռոմ. 6, 4-6): Յովհաննէս առաքեալն ասում է. «Ամէն ոք, ով Աստծուց է ծնուած, մեղք չի գործում, որովհետեւ Նրա սերմը մնում է նրա մէջ. չի էլ կարող մեղանչել, որովհետեւ Աստծուց է ծնուած» (Ա. Յովհ. 3, 9): Աստծու Որդին, վերցնելով մարդկային բնութիւն, այն Իր մէջ վերստեղծեց ու բոլոր մարդկանց տուեց հնարաւորութիւն՝ անդամակից դառնալու Իր Մարմնին՝ Եկեղեցուն, լինելու վերստեղծուածների նոր բնութեան մարմնակից. «Քրիստոս Յիսուսի միջոցով ժառանգակից, նոյն մարմնի անդամ եւ նրա խոստմանը հաղորդակից» (Եփես. 3, 6): Ուրեմն՝ «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է» (Բ. Կորնթ. 5, 17): Այս նոր, հոգեշնորհ եւ աստուածահաղորդ կեանքը մարդուն տրւում է Ս. Մկրտութեան խորհրդով: Բանն Աստուած՝ Աստուած Խօսքը, յայտնւում է մարդու ներսում եւ բնակւում է այնտեղ, ինչպէս որ սերմն է ապրում հողի մէջ: Այսպէս Աստուածամարդը նորոգում է հին մարդը Իրենով եւ Իր մէջ: Փրկարար շնորհն Աստծու պարգեւն է, որ որպէս աստուածային սերմ՝ ցանւում է մկրտուողի մէջ: Բայց վերստին ծնուելով սուրբ Աւազանի ջրից՝ մենք դեռ մնում ենք մարմնաւոր, այսինքն՝ նորից ենթակայ ենք լինում բոլոր հոգեւոր ու մարմնաւոր հիւանդութիւններին ու մահուանը: Անձնական մեղքերը ներւում են, սակայն նախնական մեղքը հիւանդութիւն է, որին բաւական չէ միայն ներել, պէտք է նրան նաեւ բժշկել: Մահկանացու եւ ապականուած մարդը բժշկութեան ու վերստին նորոգման կարիքն ունի: Վերացնելով սկզբնական մեղքի հետեւանքն ու նրա տիրական իշխանութիւնը՝ Մկրտութիւնը չի վերացնում մեղքը: Հին մարդու առաջնային մեղքի վարակը մկրտուելուց յետոյ չի անյայտանում եւ ոչ էլ պակասում է: Մարդուն տրուած է միայն սկիզբը՝ Քրիստոսի վերստին նորոգութեան սերմը: Սուրբ Աւազանի միջոցով ընդունած աստուածային պարգեւի շնորհիւ ու Սուրբ

Հոգու առաջնորդութեամբ մենք ամէն ջանք պէտք է թափենք, որպէսզի ընդունակ լինենք պատերազմելու բոլոր մեղքերի դէմ եւ կարող լինենք՝ յաղթանակելու Քրիստոսի յաղթանակով: Ինչ է ասում Աստուածաշունչը. **«Ով յաղթի, ես նրան թոյլ կը տամ ուտելու կեանքի ծառից, որ գտնւում է Աստծու դրախտի մէջ»** (Յայտ. 2, 7): Աստծու շնորհը մեզ ձրի է տրւում, բայց մեզանից կախում ունի, թէ ինչպէ՛ս այն գործադրել՝ բազմացնո՞ւմ ենք, թէ՞ կորցնում այն, ինչպէս Աւետարանի սերմնացանի առակում, երբ սերմը հաւասարապէս ցանուեց, բայց հողի տարբեր որակների պատճառով, որոշ սերմեր ոտնակոխ եղան, ուրիշները երկնքի թռչունները կերան, միւսները չորացան, մնացածին էլ փշերը խեղդեցին: Սակայն պարարտ հողի վրայ ցանուածները բուսնելով բազմացան ու հարիւրապատիկ պտուղ տուեցին (տե՛ս Մատթ. 13, 1-9: Ղուկ. 8, 4-8: Մարկ. 4, 1-9):

Բողոքականներն ասում են, թէ մարդը չունի ու չի կարող ունենալ այնպիսի գործեր, որոնք կարող են օգնել նրա փրկութեանը, սակայն նրանց աստուածաբանութեան այս բանաձեւը խիստ հակադրւում է իրենց իսկ Մկրտութեան հասկացութեան հետ: Մի՞թէ Մկրտութիւնը միայն անձի կողմից գործողութիւնն է, թէ՞ բացի մարդուց նաեւ գործում է Աստուած: Արդեո՞ք Մկրտութիւնը միայն այն է, ինչ որ ես եմ ուզում վկայել ու խոստովանել Աստծու առջեւ, թէ՞ Մկրտութեան մէջ կայ նաեւ Արարչի շնորհաբաշխութեան փոխադարձ ազդեցութեան գործողութիւնը: Եթէ միայն առաջինն է ճշմարիտ, ապա Մկրտութիւնը ոչ այլ ինչ է, քան տարօրինակ, զուտ մարդկային արարողութիւն կամ մարդասիրական գործունէութիւն: Իսկ միւս կողմից, եթէ ընդունում ենք, որ Աստուած Ինքն է գործում Մկրտութեան մէջ, ապա Մկրտութիւնը խորհուրդ է, այսինքն՝ մարդկային այնպիսի մի արարք, որն Աստծու շնորհն է բերում մարդկային կեանքից ներս: Իսկ եթէ աղանդաւորի համար փրկութիւնը կախում չունի Մկրտութիւնից եւ միայն որպէս նշան է համարւում՝ փրկուած լինելու համոզումը գոյացնելու

համար, ապա ճշմարիտ հաստատելի համար Մկրտութիւնը սկիզբն է Վերին Երուսաղէմի, որ, համաձայն Պօղոս առաքեալի, նշանակում է՝ **«փրկութեան համար աշխատեցէ՛ք»** (Փիլիպ. 2, 12): Պօղոս առաքեալը նաեւ ասում է. **«Նա ամէն ինչ հնազանդեցրեց Յիսուսի ոտքերի տակ եւ նրան հաստատեց՝ իբրեւ գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրայ, եկեղեցի, որ նրա մարմինն է լրումը նրա, ով ամէն ինչ լցնում է ամէն բանի մէջ»** (Եփես. 1, 22-23): Միայն եկեղեցու կեանքն է Քրիստոսով կենդանարար ու փրկարար՝ քանի որ եկեղեցին Քրիստոսի Մարմինն է, իսկ մենք **«անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից»** (Եփես. 5, 30): Մկրտութիւնը մուտքն է եկեղեցու, որով մկրտուողը դառնում է Մարմնի անդամ եւ Անմահ Գառան զոհաբերութեամբ հաստատուած յաւիտենական թագաւորութեան ժառանգորդ: Աստծու Որդին, մարդկային բնութիւն ընդունելով, Իր մէջ նրան վերստեղծեց ու բոլոր մարդկանց հնարաւորութիւն տրուեց՝ Իր Մարմնի՝ եկեղեցու մարմնակից անդամ դառնալու. **«Քրիստոս Յիսուսի միջոցով ժառանգակից, նոյն մարմնի անդամ եւ նրա խոստմանը հաղորդակից»** (Եփես. 3, 6): **«Իսկ եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»** (Բ. Կորնթ. 5, 17),- ասում է Պօղոս առաքեալը: Մկրտուել չի նշանակում միայն մաքրուել, այլեւ Ս. Մկրտութեան խորհրդով միանալ եկեղեցու Մարմնին եւ որպէս պտղաբեր ճիւղեր հաստատուել ճշմարիտ Որթատունկի՝ Քրիստոսի վրայ (տե՛ս Յովհ. 15): Ապաշխարել ու խօսքով մաքրուել կարելի է բազում անգամներ, իսկ մկրտուել, այսինքն՝ վերստին ծնուել՝ միայն մէկ անգամ (տե՛ս Եփես. 4, 5):

Ոմանք էլ պնդում են, թէ մեղքերի թողութիւն կարելի է ստանալ առանց Մկրտութեան, ինչպէս որ մեղաւոր կինն ստացաւ Սիմօնի տանը (տե՛ս Ղուկ. 7, 37-50), եւ թէ Մկրտութիւնը կարեւոր չէ, քանի որ առաքեալն էլ ասում է. **«Յիսուսի արիւնը մաքրում է մեզ ամէն մեղքից»** (Ա. Յովհ. 1, 7): Նրանց ասենք հետեւեալը: Յիսուս Քրիստոս Աստուած մեղքերի թողութիւն էր տալիս,

սակայն Յիսուս Ինքն էլ մկրտուեց Յորդանան գետում եւ Իր համբարձումից առաջ հաստատեց ու աւանդեց առաքեալներին Նոր Ուխտի Եկեղեցու առաջին եւ սրբարար Մկրտութեան խորհուրդը, որպէսզի մկրտուողը Եկեղեցու անդամ դառնայ եւ մեղքերի թողութիւն ստանայ (տե՛ս Գործք 2, Գործք 38։ 22, 16)։ Եւ սրա համար բոլոր քրիստոնեաները մկրտւում էին (տե՛ս Հռոմ. 6, 3-4)։ Մենք էլ հաղորդւում ենք Քրիստոսի Արեանը՝ մեղքերի թողութեան համար (տե՛ս Մատթ. 26, 26-28), սակայն, որպէսզի հնարաւոր լինի հաղորդուելը, հարկ է նախապէս մկրտուել։

Ահա թէ ինչ են ասում Եկեղեցու սբ. Հայրերը.

Սբ. Կիւրեղ Աղեքսանդրացի. *«Մեծ բան է Մկրտութիւնը։ Այն գերեալների փրկութիւնն է, մեղքերի թողութիւնը, մեղքերի մահը, հոգու վերածնունդը, լուսաւոր զգեստը, սուրբ, անխորտակելի կնիքը, երկնքի սանդուխտը, դրախտային»*[1]։

Սբ. Գրիգոր Աստուածաբան. *«Մկրտութեան շնորհը եւ ուժը չեն հեղեղում աշխարհը, ինչպէս հնում, այլ մաքրում են մեղքն ամէն մարդու մէջ եւ ամբողջութեամբ լուանում ամէն անմաքրութիւն եւ պղծութիւն, որ մտել են ի ծնէ... Օժանդակելով առաջին ծննդին (Հոգով Մկրտութեան)՝ հներից մեզ նոր է դարձնում, մարմնականներից, ինչպիսին ենք այժմ՝ Աստուածնման՝ եփելով առանց կրակի եւ վերստեղծելով առանց քանդելու... Մկրտութիւնը ջնջելով մեղքերը՝ չի ոչնչացնում վաստակը... Եւ այսպէս մկրտուելու ենք, որպէսզի յաղթենք, հաղորդակցուենք մաքրագործող ջրերին, որոնք մաքրում են աւելի լաւ, քան մշտիկը, առաւել, քան օրէնքի արիւնը, որոնք աւելի սուրբ են, քան հորթի երինջը, (Եբր. 9, 15), որ ցողում էր պղծուածներին՝ զօրութիւն ունէր միայն ժամանակաւորապէս մաքրելու մարմինը եւ ոչ թէ կատարելապէս ոչնչացնելու մեղքը»*[2]։

1 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/05/2023)։

2 Նոյն տեղում։

Սբ. Բասեղ Մեծ. *«Ինչո՞ւ ենք մենք քրիստոնեայ։ Իւրաքանչիւր էլ կը պատասխանի՝ ըստ հաւատի։ Իսկ ի՞նչ ձեւով ենք մենք փրկւում։ Նրանով, որ վերածնւում ենք հէնց Մկրտութեամբ տրուող շնորհով, քանի որ ուրիշ ինչո՞վ կարող ենք փրկուել»*[1]։

Սբ. Ամբրոսիոս. *«Որ ոք ուրիշ կերպ չի մտնում երկնային արքայութիւն, եթէ ոչ՝ Մկրտութեան խորհրդով... Տէր Յիսուսի խաչին հաւատում է նաեւ երախան, որով եւ ինքն էլ խաչակնքւում է, բայց եթէ նա չմկրտուի Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով, չի կարող մեղքերի թողութիւն ստանալ եւ հոգեւոր շնորհների պարգեւին արժանանալ»*[2]։

Սբ. Անդրէաս Կեսարացի. *«Ակնյայտօրէն մեռած են եւ արժանի խղճահարութեան նրանք, ովքեր չեն թաղուեած Քրիստոսի համար ու Նրա հետ յարութիւն չեն առած Մկրտութեան մէջ, այլ գտնւում են հոգեւոր մահուան մէջ։ Նրանք Նրա հետ յարութիւն չեն առնի մինչեւ հազար տարին աւարտուի, այսինքն՝ ժամանակը Նրա առաջին գալուց մինչեւ փառաւոր երկրորդ գալուստը, բայց նրանք կը վերադառնան երկիր՝ որպէս երկրից ծնուած եւ ոչ թէ Հոգուց, քանի որ նրանց մահը սկիզբն է նրանց ապագայ տանջանքների»*[3]։

Սբ. Յովհան Ոսկեբերան. *«Բոլորին մաքրում է Մկրտութեան շնորհը, լինի դա իգացող թէ անարակ, կռապաշտ թէ մի ուրիշ որեւէ մեղաւոր, եւ թեկուզ իր մէջ պարունակած լինի մարդկային ամէն չառիք, ընկղմուելով Մկրտութեան աւազանը՝ նա դուրս է գալիս Աստուածային ջրից աւելի մաքուր, քան առեւի ճառագայթներն են։ Դուրս գալով այս աւազանից՝ դառնում է ոչ միայն մաքուր, այլեւ սուրբ եւ արդար, քանի որ Առաքեալը պատուիրեց ոչ միայն «լուացուել», այլ նաեւ «սրբուել եւ արդարանալ» (Կող. 6, 11)...*

---

1 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/04/2023)

2 Նոյն տեղում։

3 https://azbyka.ru/otechnik/Andrej_Kesarijskij/tolkovanie_na_apokalipsis/20 (առ 4/04/2023)։

Մկրտութիւնը ոչ թէ ուղղակի թողնում է մեզ մեր մեղքերը ու մաքրում անօրէնութիւնից, այլ ասես մենք նորից ենք ծնւում, քանի որ Մկրտութիւնը նորից է ստեղծում եւ կազմաւորում մեզ»[1]։ Նման մեկնութիւններ կարելի է գտնել Թէոփիլոս Անտիոքացու, Ամբրոսիոսի, Գրիգոր Նիւսացու, Օգոստինոսի, Թէոդորոսի եւ շատ ուրիշների երկերում։

1 Նոյն տեղում։

Ճի՞շդ է, որ վերստին ծնուել նշանակում է ընդունել ու մաքրուել Աստծու խօսքով, եւ կարիք չկայ մկրտուել, քանի որ Մկրտութեան ջուրն ընդամէնը Աստծու խօսքի նշանակն է

*Օտարամուտ հոսանքների հետեւորդներն ասում են, թէ «վերստին ծնունդը» պարզապէս նշանակում է մաքրուել Աստծու խօսքով, ինչպէս որ գրուած է. «**Դուք արդէն իսկ մաքուր էք այն խօսքի համար, որ ձեզ ասացի**» (Յովհ. 15, 3): Ասում են՝ սա միայն Աստծու խօսքով է կատարւում, այլ ոչ թէ Մկրտութեամբ, քանի որ գրուած է. «**Նա իր կամքով ծնեց մեզ ճշմարտութեան խօսքով, որպէսզի մենք լինենք իր ստեղծածների պտուղը**» (Յակ. 1, 18): Այսինքն՝ վերստին ծնուելու համար բաւական է միայն ընդունել Աստծու խօսքը. «**Վերածնուեցէ՛ք ոչ թէ ապականութեան ենթակայ սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու կենդանի եւ մշտնջենական խօսքով**» (Ա. Պետր. 1, 23):*

Քրիստոսի կենդանի ու մշտնջենական խօսքով ու վարդապետութեամբ քրիստոնեաները ծնւում են, եւ Տէրը նրանց առաջնորդում է դէպի նոր կեանք. այսպէս ծնուելը չի հակասում Աստծու շնորհած խորհրդաւոր «վերստին ծնունդ»-ին, որը կոչւում է Ս. Մկրտութիւն: Պետրոս առաքեալն իրեն լսողներին սկզբից ծնեց «ճշմարտութեան խօսքով». եւ երբ նրանք «իրենց սրտերի մէջ զղջացին» ու փրկութեան մասին էին հարցնում, Պետրոս առաքեալը նրանց նաեւ պատգամեց, նորից ծնուել Մկրտութեամբ՝ «մեղքերի թողութեան համար», որովհետեւ միայն հաւատով ընդունուած «ճշմարտութեան խօսքը» չէր կարող ազատել նրանց մեղքերից:

Աղանդաւորները շփոթում են երկու տարբեր ներգործումներ,

որոնք յաճախ կոչւում են նոյն բառով՝ «վերածնունդ»։ Ուղղափառութեան մէջ էլ կայ վերածնունդի հասկացողութիւն, որը նշանակում է՝ հաւատի հաստատում, ապաշխարութիւն, նուիրում, նախանձախնդրութիւն եւ այլն։ Բայց երբ խօսում ենք Մկրտութեան խորհրդաւոր վերածննդի մասին, հասկանում ենք մէկ ուրիշ՝ աւելի խորիմաստ մի խորհուրդ, այսինքն՝ աստուածային որդեգրութեան հաստատումը Յիսուս Քրիստոսի ձեռքով (տե՛ս Եփես. 1, 5)։ Առաջին վերածնունդը մօտեցնում է Փրկչին, իսկ երկրորդը միացնում է Իրեն։ Հաւատով վերածնուածը, մօտենալով սուրբ Աւազանին, մկրտւում է, որպէսզի վերանորոգուելով՝ մեղաւոր հին մարդու բնութիւնը նոր կեանքի նորոգութեան մէջ քայլի (տե՛ս Հռոմ. 6, 4)՝ Աստծու որդեգրութիւնն ընդունելով։ Յովհաննէս առաքեալն այս երկու վերածնունդների մասին այսպէս է քարոզում. «**Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանութիւն տուեց՝ լինելու Աստծու որդիներ, նրանց, որոնք իր անունանը կը հաւատան**» (Յովհ. 1, 12)։ Մկրտութեան շնորհիւ մարդը վերստին ծնւում է հոգով։ Նա նոր մարդ է ոչ միայն գիտակցական հաւատի տրամադրութեամբ, այլ նաեւ՝ Աստծու հետ հոգեւոր միացմամբ։ Պօղոս առաքեալը քրիստոնեաներին յիշեցնում է. «**Քանի որ... ստացաք որդեգրութեան հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր**» (Հռոմ. 8, 15)։ Հետեւաբար, եթէ «վերստին ծնունդ»-ը հասկանանք միայն իր առաջին իմաստով, ուրեմն մարդն ինչպէ՞ս կարող է վերստին ծնուել, եթէ դեռեւս չթաղուեց Մկրտութեամբ մահուան համար (տե՛ս Հռոմ. 6, 3-4։ Կող. 2, 11-12)։

Որոշ աղանդաւոր ուսմունքներ պնդում են, թէ կարիք չկայ մկրտուել, քանի որ Մկրտութեան ջուրը ընդհամէնը Աստծու խօսքի խորհուրդն ունի, քանի որ Պօղոս առաքեալն էլ է ասում. «**Որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով**» (Եփես. 5, 26)։ Նաեւ՝ «**Իր կամքով ծնեց մեզ ճշմարտութեան խօսքով**» (Յակ. 1, 18)։ Իսկ Պետրոս առաքեալն ասում է. «**Վերածնուեցէ՛ք ոչ թէ ապականութեան ենթակայ սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու**

կենդանի եւ մշտնջենական խօսքով... Այսինքն՝ այն խօսքը, որ աւետարանուեց ձեզ» (Ա. Պետր. 1, 23-25): Չէ՞ որ Քրիստոս սամարացի կնոջ հետ էլ խօսում է ջրի փոխաբերական իմաստի մասին. «Այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բիւող ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար» (Յովհ. 4, 14): Հետեւաբար, ջուրը խորհրդանշում է Աստծու խօսքը եւ Յիսուսի վարդապետութիւնը, այլ ոչ թէ Մկրտութիւնը:

Պատասխանենք. առաջինը լինում է խօսքը, որը հաւատ է ծնում, իսկ հաւատալուց յետոյ Մկրտութիւնն է իրականացւում: Խօսքն առաջնորդում է դէպի հաւատ, իսկ հաւատն էլ՝ դէպի Մկրտութիւն: Ուստի, Տէրն ասում է. «Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի» (Մարկ. 16, 16): «Ով հաւատայ...» արտայայտութեանը նախորդում է ուսուցումը կամ քարոզչութիւնը: Առաքեալն ասում է. «Իսկ ինչպէ՞ս կանչեն նրան, ում չհաւատացին. կամ՝ ինչպէ՞ս հաւատան, ում մասին չլսեցին. կամ՝ ինչպէ՞ս լսեն առանց մէկի քարոզելուն» (Հռոմ. 10, 14): Աստուածաշնչում մկրտուելը, սովորելը եւ աշակերտելը նոյնը չեն: Աստծու խօսքն էլ միշտ զանազանում է դրանք. «Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28, 19-20): Նաեւ՝ «Որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով» (Եփես. 5, 26): Եթէ Մկրտութիւնը պարզապէս նշանակում է Աստծու խօսքը, ուրեմն Յիսուս չէր էլ սովորեցնում, քանզի գրուած է. «Ո՛չ թէ Յիսուս ինքն էր մկրտում, այլ՝ նրա աշակերտները» (Յովհ. 4, 2):

Սամարացի կնոջ հետ Քրիստոս խօսում է ոչ թէ Մկրտութեան, այլ Սուրբ Հոգու շնորհի մասին, ինչը երեւում է Տիրոջ հետեւեալ խօսքերից. «Ով ինձ հաւատում է, ինչպէս Գիրքն է ասում, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բիւեն» (Յովհ. 7, 38-39): Իսկ Սուրբ Հոգին ստանալուց բացի հարկ է նաեւ ջրից վերստին ծնուել, ինչպէս Տէրն է ասում. «Եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել» (Յովհ. 3, 5): Նոյնը

քարոզում էին եւ Քրիստոսի առաքեալները. «Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը» (Գործք. 2, 38): Նաեւ՝ «Մկրտուեցին ինքը եւ իր տունը» (Գործք 16, 15): Դարձեալ՝ «Եւ ինքն ու իւրայինները բոլորն էլ անմիջապէս մկրտուեցին» (Գործք 16, 33):

Աստուածաշնչից յայտնի է, թէ Տէրն Իր վարդապետութեան գլխաւոր կէտերը միշտ բացատրում էր Իր աշակերտներին եւ ամէն բանի մասին խօսում էր ուղղակիօրէն: Իսկ եթէ խօսում էր փոխաբերական իմաստով կամ էլ առակներով, անմիջապէս յետոյ տալիս էր բացատրութիւնը, որպէսզի կասկածներ եւ անհասկացողութիւններ չլինէին: Այդպէս էլ Նիկոդէմոսի հետ խօսելու ժամանակ. եթէ Յիսուս ջրի փոխարէն նկատի ունենար Աստծու խօսքի ուսմունքը, ուրեմն այդ մասին ուղղակիօրէն կ՚ասէր: Սակայն Տէրը շեշտեց՝ «ջրից եւ Հոգուց»: Ուրեմն՝ ջրից ծնուելը մի բան է, իսկ Սուրբ Հոգու պարգեւը ընդունելը այլ բան: Սա կարելի է տեսնել նաեւ կարդալով հետեւեալը. «Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց. «Ո՞վ կարող է արգելել, որ ջրով մկրտուեն սրանք, որոնք եւս Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպէս եւ մենք»: Եւ հրամայեց նրանց մկրտուել Յիսուս Քրիստոսի անունով» (Գործք 10, 47-48):

Մէկ այլ օրինակ է, երբ Փիլիպպոսը մկրտում է Եթովպիացի պաշտօնեային. «Երբ իրենց ճանապարհն էին գնում, հասան մի ջրի մօտ: Եւ ներքինին ասաց. «Ահա՛ ջուր, ի՞նչն է ինձ արգելում մկրտուել... Երբ ջրից դուրս ելան, Սուրբ Հոգին իջաւ ներքինու վրայ. եւ Տիրոջ հրեշտակը յափշտակեց տարաւ Փիլիպպոսին» (Գործք 8, 36-39): Եթէ այստեղ ջուրը նշան է Աստծու խօսքի, ուրեմն, երբ ասում ենք՝ «ջրից դուրս ելան», հասկացւում է՝ երբ Աստծու խօսքից կամ ուսուցումից դուրս ելան՝ Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ: Սա անհեթեթ մտածողութիւն է: Քրիստոս մկրտուեց Յորդանան գետում: Եթէ ջրի փոխարէն հասկանանք Աստծու խօսքի ուսմունքը, ուրեմն

այնպէս է հասկացւում, թէ իբր Յովհաննէս Մկրտիչը սովորեցնում էր Քրիստոսին։ Աստուածաշունչը մեզ ցոյց է տալիս, որ մեղքերի թողութեան եւ Սուրբ Հոգու պարգեւն ընդունելու համար մարդուն հարկաւոր է Մկրտութեան խորհուրդը, որի միջոցով մկրտուողը, աստուածային ներգործութեամբ մեղքերի թողութիւն ստանալով, ծնւում է Սուրբ Հոգուց եւ ելնելով վերածնութեան ջրի Աւազանից՝ նոր մարդ է դառնում։

Ինչո՞ւ Պօղոսն ու Շիղան բանտապետին ասացին՝ «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը փրկուես», եւ ոչ թէ՝ «Հաւատա՛ եւ մկրտուիր»

*Որոշ աղանդաւոր հոսանքներ Մկրտութիւնը չեն համարում խորհուրդ եւ ասում են. «Փրկութեան համար բաւարար է միայն մեր հաւատքը. այնպէս որ Մկրտութիւնը կարեւոր չէ»: Նաեւ ասում են. «Եթէ Մկրտութիւնն այդքան կարեւոր է փրկութեան համար, ապա ինչո՞ւ Պօղոս ու Շիղա առաքեալները Փիլիպպոս բանտապետին ասացին. «**Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը փրկուես դու եւ քո ամբողջ տունը**» (Գործք 16, 31) եւ ոչ թէ՝ «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ մկրտուի՛ր ու կը փրկուես դու եւ քո ամբողջ տունը»: Ասում են. «Մի՞թէ սա վկայութիւն չէ, որ հաւատը բաւական է փրկութեան համար»: Երբ իսրայէլացիները հարցրին առաքեալներին, թէ ինչ պէտք է անեն փրկուելու համար, Պետրոս արաքեալը պատասխանեց. «**Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար**» (Գործք 2, 38): Առաքեալը յստակօրէն ցոյց տուեց, որ ներում ձեռք բերելու համար նրանք պէտք է ապաշխարեն եւ իրենց կեանքի ընթացքը փոխեն ու մկրտուեն: Ինչո՞ւ մեղքերի թողութեան համար առաքեալը պիտի խօսէր մկրտուելու մասին, եթէ միայն ապաշխարելը բաւարար լինէր: Պօղոս առաքեալն ասում է. «**Թաղուեցինք նրա հետ Մկրտութեան մէջ, դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք՝ Աստծու զօրութեանը հաւատալով**» (Կող. 2, 12): Եթէ մկրտուելը Յիսուսի հետ թաղուել է, ինչպէ՞ս այն կարող է խորհուրդ չլինել եւ կարեւոր չլինել մեր փրկութեան համար: Իսկ ինչո՞ւ է առաքեալն ասում՝ «Թաղուեցինք նրա հետ Մկրտութեան մէջ»: Թաղուելը՝ մեր մէջ հին մարդուց եւ*

նախկին կեանքից հրաժարուելն է: Ինչպէ՞ս կարելի է փրկուել՝ առանց մեր հին մեղսալի ինքնութիւնն ու կեանքը Մկրտութեամբ թաղելու: Բայց Մկրտութիւնը միայն Քրիստոսի հետ թաղուելը չէ, այլ նաեւ՝ Նրա յարութեանը մասնակից դառնալն է: Ինչպէ՞ս կարող ենք Յիսուսի հետ յարութիւն առնել առանց Նրա հետ Մկրտութեամբ թաղուելու: Երբ բանտապետը Պօղոսին եւ Շիղային հարցրեց. **«Տիա՛ր իմ, ես ի՞նչ պէտք է անեմ, որ փրկուեմ»** (Գործք 16, 30), նրանք պատասխանեցին. **«Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը փրկուես դու եւ քո ամբողջ տունը»** (Գործք 16, 31): Առաքեալներն առաջին հերթին պէտք է նրան մղէին հաւատալու, որպէսզի նա կարողանար փրկուել, եւ յետոյ պիտի բացատրէին փրկութեան անհրաժեշտ պայմանները: Բայց բանտապետի հաւատալու մասին նշուող համարի կողքին պէտք է դնենք նաեւ նրա Մկրտութեան մասին նշուող գրութեան շարունակութիւնը: Տեսէ՛ք, թէ ի՞նչ իրողութիւններ տեղի ունեցան յետոյ. **«Եւ նրան ու բոլոր նրանց, որ նրա տանն էին, քարոզեցին Տիրոջ խօսքը: Եւ գիշերուայ նոյն ժամին տարաւ նրանց, վէրքերից լուաց, եւ ինքն ու իւրայինները բոլորն էլ անմիջապէս մկրտուեցին»** (Գործք 16, 32-33): Ուրեմն, պէտք չէ վերցնել սուրբգրային մի համարը եւ արհամարհել նոյն նիւթին վերաբերող մնացած համարները: Առաքելաների «Հաւատա՛ եւ կը փրկուես» խօսքի կողքին պէտք է դնենք նաեւ Տիրոջ խօսքը. **«Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի»** (Մարկ. 16, 16), այլեւ այն բոլոր համարները, որոնք վերաբերում են Մկրտութեան միջոցով փրկութեանը: Սխալ է մէկ համար վերցնել, այն բաժանել իր ամբողջական տեքստի հիւսուածքից եւ սխալ եզրակացութեան գալ: Աստուածաշունչը մէկ ամբողջութիւն է: Երբ որեւէ նիւթի մասին է խօսւում, պէտք է հաշուի առնել ուսումնասիրած հատուածի նախորդող եւ յաջորդող համարները, ինչպէս նաեւ՝ տուեալ համարի կամ հատուածի հետ առընչութիւն ունեցող ու նրան զուգահեռ եղող՝ Աստուածաշնչի բոլոր հատուածները: Եթէ ուզում ենք իմանալ, թէ ինչու Պօղոս առաքեալը բանտապետից

Քրիստոսին հաւատալ է պահանջում, պէտք է յիշել, որ բանտապետն անհաւատ էր։ Անհաւատից նախ ի՞նչ է պահանջւում. հաւա՞տք, թէ՞ Մկրտութիւն։ Անշուշտ նախ հաւատք։ Երբ անհաւատն ապաշխարի ու դարձի գայ, միայն այն ժամանակ նրանից կարելի է պահանջել մկրտուել Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար։ Ուրեմն, նախ պէտք է հաւատալ ու յետոյ միայն մկրտուել։ Թէեւ մենք ասում ենք՝ բանտապետն անհաւատ էր, բայց պէտք է նշել, որ նրա հաւատքը հանդէպ Հայր Աստծու էր եւ ոչ թէ Քրիստոսի։ Ուստի նա կարիք ունէր Քրիստոսին հաւատալու։ Ահա թէ ինչո՛ւ Պօղոս առաքեալը նախ Քրիստոսին հաւատալու կոչ ուղղեց նրան։ Աւետարանում բաւական շատ օրինակներ, երբ անձերը մկրտուեցին հաւատալուց յանմիջապէս յետոյ։ Եթէ միայն հաւատքը բաւարար է փրկութեան համար, կամ եթէ Մկրտութիւնն կարեւոր չէ փրկութեան համար, ապա ինչո՞ւ Հոգեգալուստեան օրը շուրջ երեք հազար հաւատացեալներ Քրիստոսին հաւատացին եւ անմիջապէս յետոյ՝ մկրտուեցին (Գործք 2, 41)։ Սամարացիները **«Երբ հաւատացին Փիլիպպոսին, որ Աստծո Արքայութեան եւ Յիսուս Քրիստոսի մասին էր քարոզում, այր թէ կին բոլորն էլ մկրտուեցին»** (Գործք 8, 12)։ Եթովպացի ներքինին հաւատքն ընդունելուց անմիջապէս յետոյ մկրտուեց (տե՛ս Գործք 8, 38)։ Սաւուղը Դամասկոսի Ճանապարհին Քրիստոսին հանդիպելուց եւ հաւատքի գալուց անմիջապէս յետոյ՝ մկրտուեց (տե՛ս Գործք 9, 18)։ Կոռնելիոսն ու իր ընտանիքը հաւատքն ընդունելուց յետոյ եւ Սուրբ Հոգու պարգեւն ստանալուց անմիջապէս յետոյ՝ մկրտուեցին (տե՛ս Գործք 10, 44-48)։ Լիդիան հաւատքն ընդունելուց անմիջապէս յետոյ՝ **«ինքը եւ իր ընտանիքը մկրտուեցին»** (Գործք 16, 15)։ Ժողովրդապետ Կրիսպոսն իր ամբողջ տնով ու այլ կորնթացիներ Յիսուսին հաւատալուց անմիջապէս յետոյ մկրտուեցին (Գործք 18, 8)։ Եփեսացիները Յիսուսին հաւատալուց անմիջապէս յետոյ **«Տէր Յիսուսի անունով մկրտուեցին»** (Գործք 19, 5)։ Ի՞նչ պէտք ունէին բոլոր այս մարդիկ դիմելու Մկրտութեան, եթէ Քրիստոսին

հաւատալը բաւարար էր իրենց փրկութեան համար։ Նրանք բոլորն էլ հաւատքն ընդունելուց անմիջապէս յետոյ մկրտուեցին։ Արդեօք այս բոլոր օրինակները բաւարար վկայութիւն եւ ապացոյց չեն՞, թէ հաւատալուց յետոյ պէտք է մկրտուել, եւ թէ հաւատքն ու Մկրտութիւնը՝ երկուսն էլ միասին մեզ առաջնորդում են փրկութեան։

Պօղոս առաքեալը հաստատում է, որ Աստուած **«փրկեց մեզ վերստին ծնունդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու»** (Տիտ. 3, 5)։ Եթէ փրկութեան համար կարեւոր է վերստին ծնունդ ունենալը, եւ եթէ Մկրտութիւնը մեզ նոր ծնունդ է տալիս, ապա ինչպէ՞ս կարող ենք ուրանալ Մկրտութեան փրկարար ազդեցութիւնը մեր կեանքում։ Եթէ Մկրտութիւնը խորհուրդ չէ, այլ լոկ՝ խորհրդանիշ, ուրեմն՝ այն ինչպէ՞ս կարող է մեզ նոր ծնունդ տալ։ Աստուածաբան ուսուցիչ Տերտուղիանոսը հաստատում է. «Խորհրդանշական էր Յովհաննէսի Մկրտութիւնը, իսկ Քրիստոսի Մկրտութիւնը՝ խորհրդական»։ Առաջին դարերի բոլոր Հայրերն են խօսում Մկրտութեան մասին՝ իբրեւ խորհուրդ։ Եթէ Մկրտութիւնը խորհուրդ չէ, ուրեմն՝ այն չի կարող նոր ծնունդ տալ մեզ։ Պօղոս առաքեալն ասում է. **«Դուք բոլորդ, որ Քրիստոսին միանալով մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք»** (Գաղ. 3, 27)։ Առաքեալի այս խօսքը ցոյց է տալիս, որ Մկրտութիւնը մեզ միացնում է Քրիստոսին, եւ Մկրտութեամբ Քրիստոս մեր մէջ է բնակւում։ Եթէ Մկրտութեան արարողութիւնը կարեւոր չէ, կամ էլ այն լոկ խորհրդանիշ է եւ ոչ թէ խորհուրդ, ինչպէս կարծում են աղանդաւոր աստուածաբանները, ուրեմն այն պիտի կարողանա՞ր մեզ Քրիստոսի հետ միացնել եւ Քրիստոսին մեր մէջ ապրեցնել։ Ինչպէ՞ս Քրիստոս կարող է մեզ միանալ ու մեզ Իր հետ միացնել, եւ ինչպէ՞ս կարող է Նա Մկրտութեամբ ապրել մեր մէջ, եթէ Մկրտութիւնը խորհուրդ չլինի։ Յիսուս ասում է. **«Եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել»** (Յովհ.

3, 3)։ Իսկ վերստին ծնունդը «ջրից ու Հոգուց» ծնուելն է։ Ինչպէ՞ս կարելի է փրկութեան համար Մկրտութիւնը կարեւոր չհամարել, երբ այն մեզ առաջնորդում է վերածննդի, իսկ վերածնունդը՝ Աստծու Արքայութեան։ Եթէ Մկրտութիւնը վերստին ծնունդ է տալիս մեզ, ուրեմն՝ անհնար է, որ այն լոկ խորհրդանիշ լինի։ Մկրտութեամբ վերստին ծնուելը խորհուրդ է, որովհետեւ չգիտենք, թէ ինչպէ՛ս է տեղի ունենում մեր հոգեւոր ծնունդը։ Եւ Յիսուս Ինքն է ասում, որ չենք կարող հասկանալ, թէ Մկրտութեամբ ինչպէ՞ս են մարդիկ Հոգուց ծնւում. ***«Որովհետեւ քամին ուր ուզում է, փչում է, եւ նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպէս է եւ ամէն ոք, որ Հոգուց է ծնուած»*** *(Յովհ. 3, 8)։*

Յիսուս Ինքն էլ մկրտուեց Յորդանան գետում եւ Իր համբարձումից առաջ հաստատեց ու Իր հետեւորդներին աւանդեց Նոր Ուխտի Եկեղեցու առաջին եւ սրբարար Մկրտութեան խորհուրդը, որպէսզի մկրտուողը, վերստին ծնուելով, մեղքերի թողութիւն ստանայ եւ Քրիստոսի Մարմնի՝ Եկեղեցու անդամը դառնայ։ Որպէսզի հնարաւոր լինի հաղորդուել Քրիստոսի հետ հարկ է հաւատալ եւ մկրտուել։ Եթէ փրկութեան համար միայն հաւատքը բաւարար լինէր Յիսուս պիտի չասէր. «Ով որ հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի»։ Բայց Տիրոջ խօսքը յստակ է։ Փրկութեան համար Տէր Յիսուս երկու պայման է դնում՝ հաւատալ եւ մկրտուել։ Տէրը հաւատքն ու մկրտուելը իրարից չի բաժանում, ուստի մենք եւս սրանք իրարից չբաժանենք։

Ինչո՞ւ են ոմանք ասում, թէ Մկրտութիւնը չարչարանք կրել է նշանակում

Ոմանք ասում են, թէ Մկրտութիւնը նշանակում է չարչարանք կրել ու տառապել, քանի որ Յիսուս Իր առաքեալներին ասաց. «Չէք իմանում, թէ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ կամ մկրտուել այն Մկրտութեամբ, որով ես մկրտուելու եմ» (Մարկ. 10, 38):

Յիսուս Իր առաքեալներին հրամայաբար ասաց. «Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28, 19-20): Արդեօ՞ք սա ասելով՝ Տէրը հրամայեց չարչարել մարդկանց: Մկրտուելով սուրբ Աւազանի ջրով՝ մկրտուողը Յիսուսի կրած չարչարանքներին դառնում է հաղորդակից, վերստին է ծնւում, մաքրւում սկզբնական ու ներգործական մեղքերից՝ միանալով Քրիստոսի Եկեղեցուն:

Սբ. Կիւրեղ Երուսաղէմացին *այսպէս է մեկնաբանում. «Ուրեմն ոչ ոք թող չմտածի, թէ Մկրտութիւնը միայն մեղքերի թողութիւն է ցոյց տալիս, այլ դրա հետ նաեւ որդեգրութեան շնորհ: Յովհաննէս Մկրտչի Մկրտութիւնը միջնորդի դեր էր կատարում մեղքերի թողութեան համար: Բայց մենք պէտք է լաւ իմանանք թէ, ինչպէս որ Քրիստոսի Մկրտութիւնը քաւութիւն է մեղքերի, եւ Սուրբ Հոգու պարգեւին միջնորդը, նոյն ժամանակ այն (Մկրտութիւնը) Քրիստոսի չարչարանքների նմանութիւնն է ու պատկերը: Պօղոս առաքեալն էլ իր նամակում որոշապէս ասում է. «Չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք: Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր*

*կեանքով» (Հռոմ. 6, 3-4)։ Այս բոլորն ասում էր նրանց համար, ովքեր կարծում էին, թէ Մկրտութիւնը միայն միջնորդ է մեր մեղքերի քաւութեան եւ Աստծուն որդեգրուելու միջեւ, եւ թէ Քրիստոսի կրած չարչարանքների պատկերումը, որը մենք ներկայացնում ենք Ս. Մկրտութեան խորհրդով, որեւէ առընչութիւն չունի Քրիստոսի կրած չարչարանքների հետ։ Այլ որպէսզի իմանանք, թէ այն ամէնը, ինչ Քրիստոս կրեց մեր փրկութեան համար, այդ չարչարանքները թուացեալ չէին, այլ ճշմարիտ։ Նաեւ որպէսզի իմանանք, որ Իր կրած չարչարանքներին մենք հաղորդակից ենք դառնում։ Այս մասին շատ յստակ ասել է Պօղոս առաքեալը. «**Որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ**» (Հռոմ. 6, 5)։ Լաւ է ասուած՝ «տնկակից»։ Քանի որ այստեղ է տնկուած Որթատունկը, այսինքն՝ Քրիստոս, եւ մենք Մկրտութեան հաղորդակցութեամբ դարձանք մասնակից՝ «տնկակից» Իր մահուան։ Առաքեալի խօսքերին լաւ ուշադրութիւն դարձնենք, քանի որ նա չասաց, թէ մենք եղանք տնկակից մահուան, այլ մահուան նմանութեամբ։ Որովհետեւ Քրիստոս ստուգապէս մեռաւ, քանի որ հոգին մարմնից անջատուեց։ Թաղումն էլ իրական էր, որովհետեւ Իր սուրբ մարմինը փաթաթուեց մաքուր սաւանի մէջ եւ մահուան բոլոր պարագաները դրա մէջ կատարուեցին։ Ձեր դէպքում չարչարանքներն ու մահը նմանատիպ են, բայց փրկութիւնը նմանատիպ չէ, այլ ճշմարիտ»*[1]։

1 Սբ. Կիւրեղ Երուսաղիմացի, «Կոչումն Ընծայութեան», Էջմիածին, 2007, էջ 368-370։

Ինչպէ՞ս է, որ մկրտուելուց յետոյ դարձեալ մեղանչում ենք

Եթէ Մկրտութիւնը կեանքի նորոգութիւն է, ապա ինչո՞ւ ենք մկրտուելուց յետոյ դարձեալ մեղանչում: Ըստ Սուրբ Գրքի վարդապետութեան՝ Մկրտութիւնը կեանքի նորոգութիւն է. ***«Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով»*** *(Հռոմ. 6, 4): Բայց նոր կեանքով քայլելը մեզ ինքնաբերաբար չի շնորհում անմեղսունակութիւն: Մկրտութեամբ վերածնուելով՝ մենք ստանում ենք նոր կեանք, նոր բնութիւն եւ նոր շնորհներ, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում.* ***«Իր ողորմութեան համաձայն փրկեց մեզ վերստին ծննդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու»*** *(Տիտ. 3, 5): Այս նոր բնութիւնն ունի հոգեւոր կեանքով ապրելու ունակութիւն եւ զօրութիւն: Սակայն քանի դեռ մահկանացու մարմնի մէջ ենք, անմեղսունակ չենք: Մենք դեռեւս ունենք բարին կամ չարը գործելու ազատութիւն, որովհետեւ Մկրտութեան ժամանակ մեր ընդունած նորոգութեան շնորհը չի ոչնչացնում ազատութեան շնորհը, որով օժտուել ենք Աստծու պատկերի համաձայն ստեղծուած լինելով: Հաւատացեալը անմեղսունակութիւն եւ արդարութեան պսակն ընդունելու է հանդերձեալ կեանքում, ինչպէս ասում էր Պօղոս առաքեալը, երբ հասել էր իր ժամանակը.* ***«Եւ հիմա ինձ է սպասում արդարութեան պսակը, որը, որպէս հատուցում, ինձ պիտի տայ Տէրը՝ արդար Դատաւորը, այն օրը. եւ ոչ միայն ինձ, այլ նաեւ բոլոր նրանց, որ սիրեցին Նրա յայտնուելը»*** *(Բ. Տիմ. 4, 8): Վերածնուելով սուրբ Աւազանի ջրից՝ մենք դեռեւս մնում ենք մարմնաւոր, այսինքն՝*

նորից ենթակայ ենք լինում բոլոր հոգեւոր ու մարմնաւոր հիւանդութիւններին ու մահուանը: Մեր անձնական մեղքերը ներումն են, սակայն նախնական մեղքի վնասը հիւանդութիւն է, որին բաւական չէ միայն ներել, այն պէտք է նաեւ բժշկել: Մահկանացու եւ ապականուած մարդը Մկրտութիւնից յետոյ էլ բժշկութեան ու վերստին նորոգման կարիքն ունի: Վերացնելով սկզբնական, ադամական մեղքի հետեւանքն ու նրա տիրական իշխանութիւնը՝ հին մարդու առաջնային մեղքի վարակը մկրտուելուց յետոյ չի անհետանում, եւ ոչ էլ պակասում է: Սկզբնական մեղք ասելով սբ. Հայրերը նկատի ունեն մեր նախնիների մեղքի հետեւանքով առաջացած մեր էութեան ապականութիւնը, մահկանացու լինելը եւ սրանց հետեւող տառապանքը: Այս սկզբնական մեղքի վնասը տարածւում է բոլոր մարդկանց վրայ եւ ոչ մի խորհուրդ չի կարող փոխել մեր մահկանացու բնութիւնը: Բայց Մկրտութեան մէջ տեղի է ունենում ոչ թէ մեր բնութեան այդ յատկութիւնների ոչնչացումը, այլ հոգու ծնունդը, աւելի ճիշդ՝ մկրտուողը ստանում է հոգեպէս նոր մարդու սերմը: Մարդուն տրուած է միայն սկիզբը՝ Քրիստոսի վերստին նորոգութեան սերմը: Սուրբ Աւազանի միջոցով ընդունած աստուածային պարգեւի շնորհիւ ու Սուրբ Հոգու առաջնորդութեամբ մենք հիմա ամէն ջանք պէտք է գործադրենք, որպէսզի լինենք ընդունակ պատերազմելու եւ յաղթահարելու մեղքը: Ինչ է ասում Տէր Աստուած. **«Ով յաղթի, ես նրան թոյլ կը տամ՝ ուտելու կեանքի ծառից, որ գտնւում է Աստծու դրախտի մէջ»** (Յայտ. 2, 7): Աստծու շնորհը ձրի է տրւում մեզ, բայց մեզանից է կախուած, թէ ինչպէ՛ս ենք այն գործադրում՝ բազմացնո՞ւմ ենք, թէ՞ կորցնում, ինչպէս Աւետարանի սերմնացանի առակում, երբ սերմը հաւասարապէս ցանուեց, բայց հողի տարբեր որակների պատճառով որոշ սերմեր կոխկրտուեցին, ուրիշները երկնքի թռչունները կերան, ուրիշները չորացան, ուրիշներին էլ փշերը խեղդեցին: Իսկ պարարտ հողի վրայ ցանուածները բուսնելով բազմացան ու հարիւրապատիկ պտուղ տուեցին:

Մկրտութեան խորհրդի մէջ Քրկչի աշխարհ գալու շնորհիւ վերացւում է Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալու նախկին անհնարինութիւնը: Մկրտութեան խորհուրդը վերացնում է սկզբնական մեղքի այս հետեւանքը: Իսկ ինչ վերաբերում է մեր երկրային կեանքին՝ մահկանացու լինելուն, հիւանդութիւններին, հալածանքներին, տառապանքներին եւ այլն, ապա այդ հետեւանքները Մկրտութիւնը չի վերացնում: Աշխարհը վերջնականապէս պիտի վերափոխուի միայն Քրիստոսի Երկրորդ Գալուստից յետոյ: Իւրաքանչիւր անձ դեռեւս ունի ազատ կամք եւ կարողութիւն՝ ընտրելու լինել Աստծու հետ, թէ՞ ոչ: Ուրեմն, մկրուելուց յետոյ մարդու մեղսունակութիւնը չի վերանում: Բայց կայ դրա բուժումը, որ է ապաշխարութիւնը: Եթէ մարդ մարմնաւորապէս հիւանդ է ու չի ուզում բուժուել. ինչ կը լինի նրա հետ: Եթէ չբուժուի, կարող է այնպէս պատահել, որ պարզապէս մահանայ: Այսպէս է գործում մարմնաւոր հիւանդութիւնը: Իսկ մեղքը հոգեւոր հիւանդութիւն է, եւ այն նոյնպէս բուժման կարիք ունի: Եթէ մարդը չզղջայ եւ ասի. «Ինչո՞ւ զղջամ, շարունակեմ մեղանչել», ապա այդպիսի մարդը, ի վերջոյ, կը մահանայ հոգեպէս: Այո, կը քայլի, կուտի, կը խմի, բայց հոգին մեղքի մէջ մեռած կը լինի: Իսկ ապաշխարութիւնը մաքրում է մեզ ամէն մեղքից, որ կամայ թէ ակամայ հաւաքում ենք մեր ողջ կեանքի ընթացքում: Մենք միշտ ենք մեղք գործում: Դրա համար պէտք է գնալ Եկեղեցի, խոստովանել մեղքերը ու մաքրուել Ապաշխարութեան խորհրդով: Եթէ մենք դա չանենք, աւելի ու աւելի շատ մեղքերի մէջ պիտի ընկնենք: Մկրտութիւնը մեզ համար հնարաւորութիւն է բացում՝ սրբուել Եկեղեցու խորհուրդներով, որոնց շնորհիւ հաւատացեալներին տրւում է Աստծու զօրութիւնը, ապրելու եւ ճիշդ ընտրութիւն կատարելու շնորհը: Իհարկէ, իւրաքանչիւր քրիստոնեայ ցանկութիւն ունի շտկելու իր կեանքը, բայց ինչ երաշխիքներ կան, որ նոյն մեղքի մէջ չենք ընկնի: Չարը միշտ գայթակղում է ու չի լքում մեզ: Բայց գլխաւորն այն է, որ մենք ուժ գտնենք կանգնելու եւ առաջ գնալու: Ս. Գիրքն ասում

է. «Եթէ արդարը եօթն անգամ էլ ընկնի, պիտի կանգնի» (Առակ. 24, 16)։ Մենք պէտք է ուժ գործադրենք, որպէսզի ուղղուենք, իսկ ապաշխարութիւնն օգնում է գտնել այդ ուժը։ Այո՛, ինչ-որ մէկը չի կարողանայ անմիջապէս դադարել մեղք գործելուց, բայց եթէ նա կարողանայ այն կրկնել գոնէ աւելի հազուադէպ, վերահսկելով իր անձը, սա արդէն մի քայլ է, որն աւելի կը մօտեցնի Աստծուն։ Ապաշխարութիւնը ամենազարմանալի եւ ամենակարեւոր պարգեւներից մէկն է, որը մեղքի մէջ ընկած մարդն ստացել է Տիրոջից։ Որովհետեւ, իրականում, ինչքան էլ մեղք գործենք, ինչքան էլ Աստծուց հեռանանք, այնուամենայնիւ, Տէրը տալիս է մեզ Իր մօտ վերադառնալու հնարաւորութիւնը, մի տեսակ կամուրջ է դնում մեր մեղքերի անդունդի վրայով։ Այս կամուրջն ապաշխարութիւնն է։ Մենք կարող ենք ասել, որ մեր ամբողջ կեանքն ապաշխարութեան ճանապարհ է՝ Մկրտութեան պահից սկսածց։

Ապաշխարութիւնը՝ որպէս պայման Մկրտութեան, դրսեւորւում է ոչ միայն մեղքը գիտակցելով, այլեւ նախկին մեղաւոր կեանքից հրաժարուելով։ Երանելի Օգոստինոսը դատապարտում է նրանց Մկրտութիւնը, ովքեր հրաժարւում են ապրել քրիստոնէական պատուիրանների համաձայն եւ չեն ցանկանում փոխել իրենց չար ու ամօթալի ճանապարհները՝ մտադիր անելով մնալ այդ մեղսալի վիճակում։ Նա ասում է, թէ՝ «Կան մարդիկ, ովքեր կարծում են, որ բոլորն առանց բացառութեան պէտք է թոյլատրուեն մօտենալու վերածննդի Ս. Աւազանին, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսով է՝ նրանք, ովքեր յայտնի են իրենց յանցանքներով ու սարսափելի արատներով, ովքեր չեն ցանկանում փոխել իրենց չարութեան ամօթալի ճանապարհները եւ հրապարակայնօրէն խոստովանում են, որ մտադիր են շարունակել իրենց մեղսալի կեանքը»։ Սուրբն ասում է. «Աստծու օգնութեամբ ջանասիրաբար զգուշանա՛նք մարդկանց, յետագայ կեղծ հաւաստիացումներ տալուց՝ նրանց ասելով, որ եթէ միայն նրանք մկրտուեն Քրիստոսով, անկախ նրանից, թէ ինչպէ՛ս են ապրելու, հասնելու են յաւիտենական

փրկութեան։ Իվերջոյ, որքան մեծ լինի շնորհը, այնքան աւելի խիստ կը լինի պատիժը նրանց համար, ովքեր յետագայում մեղանչում են»։ Բայց եթէ մարդն իսկապէս ապաշխարում է եւ ցանկանում փոխել իր ապրելակերպը, ապա նրա նախկին բարոյական անկման աստիճանը երբէք խոչընդոտ չի հանդիսանում ընդունելու՝ Ս. Մկրտութեան խորհուրդը, քանի որ ինչպէս նշում է Սբ. Գրիգոր Նիւսացին. «Չկայ այնպիսի մեղք, որը կարող է գերազանցել Տէր Աստծու առատաձեռնութիւնը։ Այնքան մեծ է Տիրոջ ողորմութեան, շնորհի եւ մարդասիրութեան զօրութիւնը, որ Նա ջնջում է ամէն մեղք եւ միայն բարի նպատակներ դրսեւորողներին դարձնում է աւելի պայծառ, քան արեւի ճառագայթները»։

Արդեօ՞ք ծնողները պատասխանատու են, երբ իրենց զաւակները փոքր տարիքում մկրտուած լինելով չափահասութեան տարիքն առնելով լքեն իրենց հաւատքը։ Եթէ փոքր տարիքում մկրտուած մանուկը մեծանալուց յետոյ լքի իր հաւատքը, ի՞նք կը դառնայ պատասխանատուն իր առած քայլի համար եւ ո՛չ թէ իր ծնողները։ Երբ մէկը, չափահասութեան տարիքին հասնելով գիտակցօրէն մերժում է իր հաւատքը՝ ինչպէ՞ս կարող է ուրիշը յանցաւոր կամ պատասխանատու նկատուել։ Ծնողները պատասխանատու են ոչ թէ երբ մկրտուած մանուկը մեծանալուց յետոյ լքի իր հաւատքը, այլ երբ չմկրտուած այն ժամանակ, մանուկը մեծանալուց յետոյ մերժի ընդունել Քրիստոսի հաւատքը։ Ինչո՞ւ. որովհետեւ եթէ ծնողներն իրեն մկրտած լինէին փոքր տարիքում եւ սնուցած՝ Քրիստոսի հաւատքով, շատ հաւանաբար նա չէր լքի իր հաւատքը։ Եթէ ծնողներն իրենց պարտականութիւնները կատարեն սեփական զաւակների նկատմամբ եւ մկրտեն փոքր տարիքում ու հոգ տանեն նրանց հոգեւոր աճի համար, ապա զերծ կը մնան ամէն տեսակ մեղադրանքներից։ Իսկ եթէ ծնողներն սպասեն, որ իրենց զաւակները մեծանան, եւ իրե՞նք որոշեն, եթէ ուզո՞ւմ են մկրտուել կամ ոչ, Քրիստոսի յետեւե՞ն կամ ոչ, նման դէպքում ծնողներն իրենք Աստծու առջեւ կը դառնան պատասխանատու, եթէ իրենց

զաւակները չորդեգրեն հաւատքի ճամբան։ Հետեւեալ հարցը տանք նրանց, ովքեր ասում են, թէ պէտք չէ մկրտել մանկանը, որովհետեւ մեծանալուց յետոյ նա կարող է լքել իր հաւատքը. չափահաս տարիքում մկրտուած անձը ինքը եւս իր Մկրտութիւնից արդեօք յետոյ չի՞ կարող ուրանալ իր հաւատքը...

✝ ✝ ✝

Ինչո՞ւ չի կարելի կրկին մկրտուել

Ոմանք յաճախ հարցնում են, թէ «Հնարաւո՞ր է արդեօք կրկնել Մկրտութիւնը»։ Հաւանաբար այս հարցը կարող է տարօրինակ թուալ, բայց ոմանք իսկապէս հետաքրքրուած են վերամկրտութեան հնարաւորութեամբ եւ այն կարծիքն ունեն, թէ Ս. Մկրտութեան խորհուրդը կարելի է կրկնել։ Ոմանք չափահասութեան տարիքն հասնելուց յետոյ ցանկութիւն են յայտնում նորից մկրտուել։ Ոմանք էլ ասում են, թէ ցանկանում են կրկին մկրտուել՝ առաջին Մկրտութիւնից յետոյ կուտակուած իրենց ծանր մեղքերը լուանալու համար։ Ուրիշները ցանկութիւն են յայտնում իրենց զաւակի կնքահօրը փոխել ինչ-ինչ պատճառներով։ Ոմանք էլ ունեն սնահաւատ տեսակէտ այս խնդրի վերաբերեալ՝ խորհելով, թէ վերամկրտութիւնը նաեւ կօգնի հեռացնել չար աչքը, կը մաքրուի ու կը չէզոքացնի ընտանեկան անէծքը, թուղթ ու գիրը, հիւանդութեան պատճառած վնասները, եւ սրանց պէս այլ խնդիրներ։ Բայց Մկրտութիւնը մոգական միջոց չէ ազատուելու հոգեկան եւ կենցաղային զանազան խնդիրներից։ Կրկնամկրտութեան մասին սովորաբար հարցնում են մարդիկ, ովքեր վստահ չեն, որ պահպանել են Մկրտութեան խորհրդի շնորհները։ Գուցէ նման ցանկութիւն է յայտնում մարդու մէջ, երբ զգում է, թէ հեռացել է Եկեղեցու ուսմունքից եւ իր խիղճը պղծել է տարբեր մեղսալի արարքներով։ Բայց այս դէպքում նա կարող է այն լուանալ խոստովանութեան եւ ապաշխարութեան խորհրդի շնորհիւ ու նորից միանալ Եկեղեցուն՝ առանց երկրորդ անգամ մկրտուելու։ Բաւական են նրա անկեղծ զղջումն ու խոստովանութիւնը։ Սուրբ վարդապետներն ասում են, թէ խոստովանութիւնը կոչւում է նաեւ երկրորդ Մկրտութիւն։ Մկրտութեան խորհրդի գործընթացն անշրջելի եւ անկրկնելի է, որովհետեւ այն հոգեւոր ծնունդ է։ Իսկ

կրկնամկրտութիւնը մեղանչում է Աստծու դէմ։

Մի կին երբ հարցրեց հոգեւորականին, թէ՝ «Կարո՞ղ եմ երեխայիս երկրորդ անգամ մկրտել», նա ժպտալով պատասխանեց. «Իհարկէ՛, կարող ես երեխայիդ եւ երկրորդ անգամ մկրտել, բայց եթէ նոյն երեխայիդ նորից երկրորդ անգամ ծնես»։ Այսինքն՝ ուզեց հասկացնել, որ եթէ մարդ մէկ անգամ մարմնաւոր կերպով է ծնւում, որքան էլ որ ցանկանայ, նա չի կարողանայ կրկնել ու նորից ծնուել։ Նոյնը վերաբերում է հոգեւոր՝ վերստին ծնունդին։ Պօղոս առաքեալը յայտարարում է. «**Մէկ Տէր կայ, մէկ հաւատ, մէկ Մկրտութիւն**» (Եփես. 4, 4-5)։ Մկրտութիւնը մէկ անգամ է, որովհետեւ մէկ Աստծու եւ մէկ Քրիստոսի նկատմամբ է. որովհետեւ ինչպէս մարմնով մէկ անգամ ենք ծնւում, այնպէս էլ՝ հոգով. որովհետեւ Քրիստոս էլ մարմնով մէկ անգամ ծնուեց Կոյսից. որովհետեւ Քրիստոսի մահն ու Յարութիւնը մէկ անգամ եղան. որովհետեւ Հոգու կնիքը երբէք չի կարող աղճատուել. որովհետեւ Քրիստոսի նոյն պատկերն ենք մենք հագնում. եւ որովհետեւ մէկ է սկզբնական մեղքը, որից սրբւում ենք։

Տէր Յիսուս խօսում է երկու տարբեր ծնունդների մասին՝ ասելով. «**Մարմնից ծնուածը մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ հոգի**» (Յովհ. 3, 6)։ Այս իմաստով մեր առաջին ծնունդը տեղի է ունենում, երբ մարմնով լոյս աշխարհ ենք գալիս, իսկ մեր երկրորդ ծնունդը տեղի է ունենում Մկրտութեան պահին, երբ Եկեղեցու արգանդից ծնւում ենք հոգեւորապէս։ Երրորդ կամ այլ ծնունդների մասին բնաւ չի խօսւում Սուրբ Գրքում։ Հետեւաբար, կրկնակի մկրտուելը հակառակ է Տէր Յիսուսի խօսքին ու կամքին, որովհետեւ դա կը լինէր երրորդ ծնունդ, բայց քանի որ երրորդ ծնունդ գոյութիւն չունի, ուրեմն՝ վերամկրտութիւնը վաւերական ու ընդունելի չի նկատւում ո՛չ Աստուածաշնչի, ո՛չ սուրբ Հայրերի, ո՛չ էլ Հայ Եկեղեցու հայեացքով։

Մկրտութիւնը մէկ է, որովհետեւ երեք Անձերի մէկ բնութեան մէջ ենք մկրտւում. որովհետեւ Քրիստոսի միութեան մէջ ենք

մկրտում՝ ստանալով սրբութեան, կոչման ու ժառանգութեան նոյն շնորհները: Մկրտութիւնը կրկնել՝ նշանակում է այլ երրորդութիւն դաւանել, որով եւ մի այլ «Քրիստոս»: Կրկնակի մկրուել՝ նշանակում է դաւանել փրկչական մէկ այլ մահ, այլ «սուրբ Հոգի» եւ այլ հաւատ: Մկրտութիւնը մասնակցութիւն է Քրիստոսի մահուանն ու թաղմանը, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «**Չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք: Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով**» (Հռոմ. 6, 3-4): Եթէ Մկրտութիւնը Քրիստոսի հետ թաղուել է, մարդ քանի՞ անգամ կարող է թաղուել Քրիստոսի հետ: Իսկ ի՞նչ է նշանակում՝ «Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ»: Քրիստոսի հետ թաղուելը նշանակում է մարդու մէջ հին մարդու թաղուելը: Քանի՞ անգամ մարդու մէջ հին մարդը կարող է թաղուել: Պօղոս առաքեալն ասում է. «**Փրկեց մեզ վերստին ծննդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու**» (Տիտ. 3, 5): Հետեւաբար, եթէ Մկրտութիւնը հոգեւոր՝ վերստին ծնունդ է, ապա մարդ քանի՞ անգամ կարող է ծնուել հոգեւորապէս: Աստուածաշնչում չկայ որեւէ անձի օրինակ, որ երկու անգամ ծնուած լինի հոգեւորապէս:

Կրկնակի թաղումը հակասուրբգրային է, եւ ուստի՝ հակասուրբգրային է կրկնակի Մկրտութիւնը: Վարդապետներն ասում են, թէ ինչպէս Տէրը մէկ անգամ մահացաւ, այնպէս էլ պէտք է մէկ անգամ մկրտուել, իսկ բոլոր նրանք, ովքեր մկրտուել են Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով ու նորից են մկրտւում, նրանք բոլորը կրկին խաչում են Քրիստոսին: Այո՛, կրկին մկրտուել նշանակում է խաչել Քրիստոսին, խայտառակել հաւատը, աստուածային կնիքը եւ անպատուել Սուրբ Երրորդութիւնը:

Գրուած է. «**Որովհետեւ մէկ անգամ մկրտուածների համար,- որ ճաշակեցին երկնաւոր պարգեւներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, Աստծու գեղեցիկ խօսքի վայելքն ունեցան եւ գալիք**

աշխարհի զօրութիւնները ճանաչեցին,- եթէ սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարութեամբ նորոգուել, որովհետեւ նրանք վերստին խաչն են հանում Աստծու Որդուն եւ դարձեալ խաղք ու խայտառակ դարձնում» (Եբր. 6, 4-6): Երբ անձը երկրորդ անգամ մկրտուի, ոչ թէ Սուրբ Հոգին կը ստանայ, այլ՝ ընդհակառակը, իր մէջ գտնուող Սուրբ Հոգու օծութիւններն, որ ստացել էր Մկրտութեան ժամանակ, իրենից կը հեռանայ:

*Հերձուածողները պնդում են, թէ կրկնաՄկրտութիւնը կարելի է, քանի որ միեւնոյն է, Աստծու փառքին է ծառայում: Մէջբերելով Աւետարանի խօսքը՝ նրանք ասում են: «Ապա ինչո՞ւ է գրուած, որ Պօղոս առաքեալը հաւատացեալներին կրկին մկրտեց. չէ՞ որ նրանք արդէն մկրտուած էին Յովհաննէսի Մկրտութեամբ»: Նման երեւակայական կարծիքները յետեւանք են հոգեւոր թերամտութեան: Աստուածաշնչում միայն մէկ տեղ կայ, որտեղ նկարագրուած են անցեալում մկրտուած մի քանի աշակերտներ: «Գործք Առաքելոց»-ում մէջ կարդում ենք, որ Պօղոս առաքեալը նրանց հարցնում է. «Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին ընդունեցիք»: Նրանք էլ պատասխանում են, թէ՝«Մենք չենք էլ լսել, որ Սուրբ Հոգի կայ»: Եւ առաքեալը հարցնում է. «Ուրեմն, ինչո՞վ մկրտուեցիք»: Նրանք ասում են. «Յովհաննէսի Մկրտութեամբ»: Իսկ Պօղոս առաքեալը նրանց յայտնում է, թէ՝ «**Յովհաննէսն ապաշխարել եւ մկրտուել քարոզեց եւ ասում էր, թէ, ով գալու է իրենից յետոյ, Նրա՛ն թող հաւատան. այն է՝ Յիսուս Քրիստոսին**» (Գործք 19, 4-5): Եւ երբ նրանք սա լսեցին, մկրտուեցին Տէր Յիսուս Քրիստոսի անունով: Այստեղ ակնյայտ է, որ Պօղոս առաքեալը նրանց նախորդ Մկրտութիւնը չէր համարում ճշմարիտ կամ բաւարար: Նրանք չէին մկրտուել Յիսուսի անունով եւ չգիտէին Սուրբ Հոգու մասին: Յովհաննէսի Մկրտութիւնը հիմնուած էր ապաշխարութեան ու ներման կոչի վրայ: Իսկ Քրիստոսի Մկրտութիւնը նշանակում էր մէկ այլ բան: Հետեւաբար, այդ հաւատացեալների վերստին Մկրտութեան պատճառը կասկածելի չէ, քանի որ ստացել էին*

միայն ապաշխարութեան Մկրտութիւնը, այսինքն՝ «Յովհաննէսի Մկրտութիւնը»։ Հետեւաբար, Պօղոս առաքեալը նրանց Մկրտութիւնը համարեց անվաւեր, ու դա՛ էր պատճառը, որ առաքեալը նորից մկրտեց նրանց։

«Հնարաւո՞ր է երկրորդ անգամ մկրտուել» հարցի պատասխանը երեւում է նաեւ ուղղափառ դաւանանքի հիմնական սկզբունքից՝ «Հաւատոյ Հանգանակը»-ից, մեր հաւատամքը, որն իր մէջ բովանդակում է մարգարէական եւ առաքելական գրուածքների եւ Աւետարանի համառօտութիւնը։ Այն ընթերցւում է Ս. Պատարագի եւ Ս. Մկրտութեան խորհուրդների արարողութեան ժամանակ։ Մենք խոստովանում ենք, որ սա՛ է մեր հաւատալիքը եւ չունենք այլ հաւատալիք, սա՛ է մեր ուղղափառ դաւանութիւնը, Եկեղեցու անսխալ եւ ճշմարիտ վարդապետութիւնը։ Մեր հաւատամքը պարունակում է հետեւալ խօսքերը. «Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի ի մի Մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»։ «Ի մի Մկրտութիւն» նշանակում է, որ Եկեղեցու կանոնների համաձայն՝ իւրաքանչիւր մարդ պէտք է կեանքում մէկ անգամ մկրտուի։ Հետեւաբար, Եկեղեցին սովորեցնում է խոստովանել «մէկ Մկրտութիւն» այն իմաստով, որ Ս. Մկրտութեան խորհուրդն անջնջելի, անշրջելի ու անկրկնելի կնիք է իւրաքանչիւր հաւատացեալի համար։

Մկրտութիւն կրկին կատարւում է միայն նրանց համար, ովքեր նախքան այդ ոչ ճիշդ՝ ոչ Ամենասուրբ Երրորդութեան անունով են մկրտուել, ինչպէս որ Տէրն է սահմանել, եւ որոնք, հետեւաբար, ընդհանրապէս այդ խորհրդի շնորհներին չեն արժանացել։

Մկրտութեան խորհուրդը իւրաքանչիւրի վրայ անջնջելի կնիք է դնում, որը մկրտուողի վրայ մնում է մշտապէս, թէկուզ նա Մկրտութիւնից յետոյ բազմաթիւ մեղքեր գործի կամ նոյնիսկ ուրանայ հաւատքը։ Միահամուռ կերպով ճանաչել եւ խոստովանել են սուրբ Հայրերը եւ Եկեղեցու ուսուցիչները։ Բազմաթիւ վկայու-

թիւններից կը մատնանշենք հետեւեալ խօսքերը։

Սբ. Յովհան Ոսկեբարան. *«Մենք Նրա (Քրիստոսի) մկրութեամբ ի մահ ուղուեցինք, հետեւաբար, ինչպէս անհնար է, որ Քրիստոս երկրորդ անգամ խաչուի, այնպէս էլ անհնարին է երկրորդ անգամ մկրտուելը...»*[1]։

Տէրտուղիանոս. *«Երկրորդ անգամ մկրտուել չի կարելի»*[2]։

Սբ. Եփրեմ Ասորի. *«Տէրն Իր աշակերտներին պատուիրեց, որ միայն մէկ անգամ ջրով մաքրեն մարդկային բնութեան մեղքերը»*[3]։

Թէոդորիտ Երանելի. *«Ինչպէս մէկ անգամ Նա ենթարկուեց չարչարանքների, այնպէս էլ մենք միայն մէկ անգամ կարող ենք հաղորդակից լինել Նրա չարչարանքներին, իսկ մենք Նրա հետ ենք թաղուում եւ Նրա հետ յառնում Մկրտութեան միջոցով, հետեւաբար պէտք չէ երկրորդ անգամ Մկրտութիւն ընդունել»*[4]։

Սբ. Յովհաննէս Դամասկացի. *«Մենք դաւանում ենք մէկ Մկրտութիւն՝ յանուն մեղքերի թողութեան եւ յաւիտենական կեանքի, քանի որ Մկրտութիւնը խորհրդանշում է Տիրոջ մահը, եւ մենք Մկրտութեան միջոցով թաղուում ենք Տիրոջ հետ, ինչպէս ասում է Երանելի Առաքեալը (Կող. 2, 12)։ Այսպիսով, ինչպէս Տէրը մէկ անգամ մեռաւ, այնպէս էլ մէկ անգամ պէտք է մկրտուել, իսկ մկրտուելն էլ՝ ըստ Տիրոջ խօսքի. «Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով (Մատթ. 28, 19՝) սրանով սովորելով դաւանել Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն։ Եւ այսպէս բոլոր նրանք, ովքեր մկրտուած լինելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով եւ սովորած լինելով դաւանել մէկ Աստծու էութիւն՝ երեք դէմքով, նորից են մկրտւում, բոլոր այդպիսիները նորից են խաչում Քրիստոսին՝ աստուածային Առաքեալի խօսքերի համաձայն (Եբր. 6, 4-6))»*[5]։

---

1 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/052023)։

2 Նոյն տեղում։

3 Նոյն տեղում։

4 Նոյն տեղում։

5 Նոյն տեղում։

Առանց հաւատի մկրտուելու մասին

Մկրտութեան խորհուրդը, եկեղեցու այլ խորհուրդների եւ ծէսերի հետ համեմատած, ամենատարածուածն ու ամենապահանջուածն է հայերիս համար: Նոյնիսկ խորհրդային անաստուածութեան ժամանակներում իշխանութիւնների բացասական վերաբերմունքը եկեղեցական արարողութիւնների նկատմամբ եւ մարդկանց մասնակցութեանը դրանց միայն մեծացնում էր շատերի ցանկութիւնը՝ ճաշակելու «արգելուած պտուղը»: Բազմաթիւ պաշտօնեայ կուսակցականներ, անկախ իրենց կարգավիճակից, գաղտնի մկրտում էին իրենց զաւակներին՝ չմտածելով, որ դա ինչ-որ կերպ հակասում է իրենց քաղաքական հայեացքներին: Այդ ժամանակաշրջանում Ս. Մկրտութեան խորհուրդը կատարելուց առաջ քահանաները մեծ մասամբ նախապատրաստութիւն գրեթէ չէին պահանջում մարդկանցից: Թերեւս հաւատքի համար դժուար ժամանակներում՝ մկրտուելու ցանկութիւնը նրանք համարում էին մի տեսակ քաջութիւն, սխրանք, ուստի եւ չէին ցանկանում խոչընդոտներ դնել մարդկանց ճանապարհին՝ նրանցից չպահանջելով նախնական պատրաստութիւն: Միւս կողմից, հրապարակայնութիւնից խուսափելու համար անհրաժեշտ էր ամէն ինչ անել հնարաւորինս արագ, ինչի հետեւանքով ծէսը ենթարկւում էր կրճատումների: Խորհրդային իշխանութիւնն ընկաւ, բայց մարդկանց վերաբերմունքը Մկրտութեան խորհրդի նկատմամբ գրեթէ չփոխուեց: Շատերը բաւարարւում են միայն Մկրտութեան սովորոյթի արտաքին ձեւը պահելով՝ չունենալով հաւատքի դաւանութիւն եւ չհասկանալով խորհրդի բուն իմաստը: Ուստի այս խորհուրդը, կարծես թէ, ոչ միայն ընկալւում է որպէս զուտ եկեղեցական արարողութիւն, այլ սովորոյթի ուժով պարտադիր է դարձել ոչ եկեղեցասէր, նոյնիսկ անհաւատ մարդկանց կեանքում: Այստեղից եզրակացնում են, որ Եկեղեցին

պատրաստ է Մկրտութիւնը տրամադրել բոլորին՝ անկախ իրենց հաւատալիքներից։ Բայց որքանո՞վ է արդարացուած շատերի՝ նման վերաբերմունքն Աստծու այս մեծ պարգեւի նկատմամբ։

Մարդու կողմից Ս. Մկրտութեան խորհուրդն ընդունելը նշանակում է, որ այդ պահից նա դառնում է Քրիստոսի զինուոր ու մեղքի թշնամի։ Բայց մենք լրիւ հակառակն ենք տեսնում։ Սակաւ են մեր մկրտուած այն հայրենակիցները, որոնք կանոնաւոր կերպով Եկեղեցի են գնում եւ մասնակից դառնում Ս. Հաղորդութեանը։ Մկրտուածներից շատերը խուսափում են Եկեղեցի գնալուց՝ ամէն ինչ անելով, որ Եկեղեցին որեւէ կերպ ազդեցութիւն չունենայ իրենց ապրած կեանքի վրայ։ Թէեւ մեր ազգակիցների ճնշող մեծամասնութիւնը մկրտուած է, սակայն դժուար է շատերին անուանել ճշմարիտ հաւատացեալներ։ Նման երեւոյթը մեր ժամանակների ամենահաւոր ու սարսափելի նշաններից է, որը պատճառ է լինում բազում վշտերի ու տառապանքների։

Հարց է ծագում, թէ ինչո՞ւ պէտք է մկրտուես, եթէ քրիստոնեայ չես մնալու։ Ինչո՞ւ է այսքան հեշտ ու նոյնիսկ անօրինական ճանապարհ բացուել դէպի այս մեծ Խորհուրդը։ Իհարկէ, կարելի է զանազան արդարացումներ բերել։ Քահանաներից յաճախ լսում ենք, թէ նրանք խղճի խայթ են զգացել այն բանից յետոյ, երբ Մկրտութեան խորհուրդը կատարուել է այն մարդկանց համար, ովքեր երբէք տրամադրուած չեն եղել՝ իրենց կեանքը կապելու Քրիստոսի հետ։ Կան մարդիկ էլ, որ նոյնիսկ կարծում են, թէ մկրտուելու իրենց ցանկութեամբ ինչ-որ լաւութիւն են անում Եկեղեցուն, եւ երբ, ի պատասխան իրենց մկրտուելու խնդրանքին, քահանայից ստանում են Մկրտութեանը պատրաստուելու յորդորը, շատերը դա ընկալում են որպէս կամայականութիւն եւ օրինազրժութիւն։

*Բայց ո՞րն է Եկեղեցու հիմնական պահանջն այն մարդուց, ով ցանկանում է մկրտուել։ Տէր Յիսուս Քրիստոս պատասխանում է. «**Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի, եւ ով չհաւատայ, պիտի դատապարտուի**» (Մարկ. 16, 16)։ Հետեւաբար, հիմնական պահանջը հաւատքն է, որը «**մեռած է առանց գործերի**» (Յակ. 2, 26)։ Մենք կը*

դատապարտուենք, եւ նոյնիսկ Մկրտութիւնը չի օգնի, եթէ չհաւատանք Տէր Յիսուս Քրիստոսին եւ չհետեւենք Նրա պատուիրաններին: Մկրտութեան ընդունումն առանց հաւատքի եւ ապաշխարութեան կարող է ծառայել որպէս դատապարտութիւն մարդու համար, քանի որ «**ամեն ոք, ում շատ է տրուած, նրանից շատ էլ կ՚ուզուի, եւ ում շատ է վստահուած, նրանից աւելին կը պահանջեն**» (Ղուկ. 12. 48): Պէտք է մկրտուել, որպէսզի դառնալ քրիստոնեայ, ստանալ ճշմարտութեան գիտելիքը, մեղքերի թողութիւնը եւ մահից յետոյ արժանանալ յաւիտենական կեանքին: Բայց դժբախտութիւնն այն է, որ ոմանք գալիս են մկրտուելու ոչ թէ իրենց հաւատքի կամ համոզմունքների թելադրանքով, այլ յաճախ ինչ-որ սնահաւատութեան, չգիտակցուած աւանդոյթը պահելու պատճառով: Մեծամասնութեան համար Մկրտութիւնը պարզապէս աւանդական գեղեցիկ մի ծէս է, բարեկեցութեան գրաւական կամ էլ իրենց կամ իրենց զաւակների առողջութեան եւ փորձութիւններից ազատուելու միջոց: Այս խորհուրդն ընդունելու այլ դրդապատճառները, այսինքն՝ «որպէսզի լինել հայ», «որպէսզի խուսափել չար աչքից», «որպէսզի Աստուած օգնի», «որովհետեւ բոլորը մկրտուած են», «որպէսզի պահապան հրեշտակ ունենալ», եւ այլն, անընդունելի են: Շատ կարեւոր է իմանալ, որ Մկրտութիւնն ինքնին չի կարող լինել ո՛չ երկրային բարեկեցութեան, ո՛չ առողջութեան եւ ո՛չ էլ փրկութեան երաշխիք: Միայն ճիշդ հոգեւոր կեանքով կարող է Մկրտութեան սերմը բողբոջել մարդու հոգում եւ բարի պտուղ տալ: Եթէ մարդիկ իսկապէս գիտակցէին այն ամբողջ պատասխանատուութիւնը, որը վերցնում են իրենց վրայ, երբ համարձակւում են մկրտուել չմտածուած եւ առանց համապատասխան նախապատրաստութեան, ապա նրանք դա անելուց առաջ շատ անգամ կը մտածէին: Բայց դրան խանգարում է Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ նրանց հաւատի բացակայութիւնը:

Քրիստոսի Եկեղեցու գոյութեան առաջին իսկ դարերից քրիստոնեաների մէջ տիրում էր խիստ եւ ակնածալից վերաբերմունք Ս. Մկրտութեան Խորհրդի հանդէպ: Նրանք պատրաստւում էին, որպէսզի մկրտուեն իրենց լաւագոյն հոգեւոր ու բարոյական վիճակում եւ որեւէ

անմաքրութեամբ արգելք չլինեն սրբազան Խորհրդին։

*Եկեղեցին դեռեւս վաղ ժամանակներից համապատասխան կանոններ է սահմանել նորընծայ մկրտուողների համար։ Մկրտութիւնից առաջ նրանք սովորում էին հաւատքի ճշմարտութիւնները, սերտում էին Աստուածաշունչը, մասնակցում էին սուրբ արարողութիւններին։ Նաեւ փորձւում էին հաւատքի ամրութիւնը եւ Քրիստոսին հետեւելու վճռականութիւնը։ Այնուհետեւ քահանայի կողմից մկրտուելուց առաջ անցկացւում էր քննութիւն, ստուգւում էր քրիստոնէական դաւանանքի եւ Սուրբ Գրքի իմացութիւնը։ Այնուհետեւ երկու վկաներ, ովքեր մօտիկից ճանաչում էին մկրտուող անձին, վկայութիւն էին տալիս մկրտուողի բարի վարքի եւ բարոյականութեան մասին։ Մկրտութեան խորհուրդն ընդունելուց առաջ այս բոլոր խստութիւնները պարզապէս անհրաժեշտ են, որպէսզի թաքնուած «յուդաները» յայտնուեն, եւ չլինի այնպիսի երեւոյթ, որն արտայայտւում է յայտնի խօսքերով. «**Մեզնից ելան, բայց նրանք ամէնքը մեզնից չեն**»։ (Ա. Յովհ. 2, 19)։ Մկրտութիւնը պէտք է ընդունի միայն այն մարդը, ով անցեալի մեղքերի համար ապաշխարութեան միջոցով ցանկանում է փոխել իր ապագայ կեանքը։ Մկրտութիւնն անհրաժեշտ է նրանց համար, ովքեր որոշել են մեռնել մեղքի համար, բայց կեանքի են եկել Աստծու համար։ Պողոս առաքեալը Մկրտութիւնն անուանում է մահ մեղքի նկատմամբ՝ ասելով. «**Մենք, որ մեռանք մեղքի նկատմամբ, ինչպէ՞ս տակաւին ապրենք նրա մէջ։ Կամ չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք։ Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով**» (Հռոմ. 6, 2-4)։ Տէր Յիսուս շնորհեց այս խորհուրդը նրանց, ովքեր տեսան իրենց հոգին հիւանդ կրքերով, իսկ յետոյ իսկապէս հասկացան ու հաւատացին, որ բժշկութիւնը կարելի է գտնել միայն ճշմարիտ Բժիշկ Յիսուս Քրիստոսի միջոցով։ «**Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ՝ հիւանդներին... քանզի ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղաւորներին**» (Մատթ. 9, 12-13)։ Մկրտութեան*

վերաբերմունքի էութիւնն այն է, որ արմատական փոփոխութիւն է տեղի ունենում մարդու հոգու ու ողջ կեանքում։ Մարդը մեղքի ստրուկ էր եւ Աստծու թշնամի, նա կատարում էր սատանայի կամքը, իսկ այժմ նա որոշել է հեռացնել մեղքը եւ հաղորդակից լինել իր Տիրոջ հետ։

Այս բոլորը վերաբերում են նաեւ մանուկների Մկրտութեանը։ Անհնար է մանուկներին մկրտել առանց կնքահայրերի, քանի որ անչափահասները, յատկապէս փոքրերը, դեռ չեն կարող լիովին խոստովանել իրենց հաւատքը։ Հետեւաբար, երեխաները պէտք է ներկայացուեն կնքահօր ու ծնողների կողմից։ Քահանան պէտք է տեսնի, թէ ո՛վ է մեծացնում երեխային, ո՛վ պիտի ուղեկցի նրան կեանքի ընթացքում։ Եւ քանի որ խելամիտ չէ Մկրտութիւնից առաջ փոքրիկից նախապատրաստութիւն պահանջելը, այս բոլոր պարտաւորութիւնները դրւում են կնքահօր եւ ծնողների վրայ։

Մենք ուղղակի պէտք է առերեսուենք այն ճշմարտութեան հետ, որ Մկրտութիւնը, որը նախատեսում էր հաւաքել ընտիր ցորենը Քրիստոսի Եկեղեցու ամբարներում եւ մերժել որոմը, վաղուց դադարել է համապատասխանել այդ նպատակին։ Մենք պէտք է անկեղծօրէն ասենք, որ մեծ մասամբ մկրտւում են մարդիկ, ովքեր վճռականութիւն չեն ցուցաբերում ապրելու՝ ըստ Քրիստոսի պատուիրանների։ Նրանց Եկեղեցու պարգեւների նկատմամբ ունեն ինչ-որ հեթանոսական, սպառողական վերաբերմունք եւ չեն ծրագրում մնալ Եկեղեցու գրկում, քանի որ Աստծու տունը համարում են աւելորդ ու անհարկի մի բան։

*Մկրտութիւնը մարդուն բարիք է բերում միայն նրա հաւատքի պայմանով եւ մաքուր խիղճ Աստծուն տրուած խոստումով։ Հակառակ դէպքում մարդն արժանանում է այն դառը ճակատագրին, որի մասին Տէրն արդէն նախազգուշացնում է տաղանդների առակում, երբ խօսում է մէկ տաղանդ ստացողի եւ հողի մէջ թաղածի մասին. «**Իսկ այդ անպիտան ծառային հանեցէ՛ք դուրս, արտաքին խաւարը. այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում**» (Մատթ. 25, 30)։ Որովհետեւ, գրում է առաքեալը. «**մեր Աստուածը ոչնչացնող կրակ է**» (Եբր. 12, 29) եւ «**Սարսափելի է կենդանի Աստծու ձեռքն ընկնելը**» (Եբր. 10, 31)։*

Այս մասին համառօրէն գրում ու զգուշացնում են բոլոր սուրբ Հայրերը: Նրանք խստօրէն զգուշացնում են Մկրտութեան ընդունելութեան չմտածուած եւ առանց հաւատքի զուտ ծիսական արարողութեան դէմ: Նրանք մշտապէս շեշտում են Մկրտութիւնն անլուրջ ընդունելու վտանգի մասին:

Սբ. Կիւրեղ Երուսաղէմացի. *«Եթէ դու կեղծաւոր ես, ապա մարդիկ հիմա քեզ կը մկրտեն, բայց Հոգին քեզ չի մկրտի: Բայց եթէ դու հաւատքով ես եկել, ապա մարդիկ ծառայում են տեսանելիին, իսկ Սուրբ Հոգին տալիս է քեզ անտեսանելին»*[1]:

Մեծն սբ. Մարկոս. *«Հաւատո՞ւմ ես հիմա, որ Սուրբ Հոգին Մկրտութեան ժամանակ անմիջապէս տրւում է նրանց, ովքեր հաւատում են հաստատապէս, իսկ անհաւատներին ու չարամիտներին Մկրտութիւնից յետոյ էլ չի տրւում»*[2]:

Սբ. Յովհան Ոսկեբերան. *«Ո՛չ Մկրտութիւնը, ո՛չ մեղքերի թողութիւնը, ո՛չ գիտելիքը, ոչ Սուրբ Ընթրիքը, ո՛չ Մարմնի պաշտամունքը, ո՛չ Արեան Հաղորդութիւնը, ո՛չ էլ այլ խորհուրդ չեն կարող մեզ որեւէ օգուտ բերել, եթէ մենք ազնուութեամբ եւ խստութեամբ մեղքից զերծ կեանք չվարենք»*[3]:

Սիմէոն Նոր Աստուածաբան. *«Իսկ նրանք, ովքեր ընդհանրապէս նման շնորհ չեն ստացել, այսինքն՝ չեն մկրտուել, եւ նրանք, ովքեր ստացել են, բայց չեն փորձել ճանաչել դա, այդպիսիններն Աստծու թշնամիներն են: Որովհետեւ ամէն ոք, ով անհաղորդ է մնում Աստուածային էութեանը, այսինքն՝ չունի Աստուածային շնորհ, մարմնաւոր է ու չի կարող հաճեցնել Աստծուն, քանի որ մարմնաւոր միտքը թշնամութիւն է Աստծու դէմ, եւ մարմինն ու արիւնը չեն կարող ժառանգել Աստծու արքայութիւնը»*[4]:

---

1 Кирилл Иерусалимский, свт. Поучения огласительные и тайноводственные. М., 2010. С. 299.

2 Марк Подвижник, прп. Нравственно-подвижнические слова. М., 1858. С. 147.

3 Иоанн Златоуст, свт. Творения. Т. 3. Кн.1. СПб., 1897. С. 252-253.

4 https://azbyka.ru/otechnik/Simeon_Novyj_Bogoslov/slovo/51 (ստ 4/05/2023):

Զարմանալին այն է, որ վաւերականօրէն ձեռնադրուած քահանան նոյնիսկ եթէ ձեզ կանոնականօրէն ճիշդ է մկրտում, սակայն արդե՞օք Սուրբ Հոգին նոյնպէս մկրտում է: Միանշանակ բաւական չէ արտաքին գործողութիւններ կատարելը: Անհրաժեշտ է, որ մկրտուողը կատարի Տիրոջ թելադրած պայմանը. «**Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի...**»: Իսկ ի՞նչ է նշանակում՝ «ով հաւատայ»: Սա նշանակում է վստահութիւն, ակնածանք ունենալ, քանի որ մենք մօտենում ենք հէնց Աստծուն, որի նկատմամբ ակնածանքն անպայմանօրէն կապուած է ապաշխարութեան, զղջման, Աստծուն մօտենալու անարժանութեան զգացման հետ: Բացի դրանից՝ մկրտուողը պէտք է ցանկութիւն ունենայ հոգեպէս փոխուելու, նորոգուելու, դառնալու աւելի բարի, աւելի լաւը, մաքրուելու իր մեղսալի կրքերից եւ նմանուելու իր Տէր Քրիստոսին: Կեանքը ցոյց է տալիս, թէ յաճախ որոշ մկրտուածներ աւելի անբարոյ կարող են լինել, քան չմկրտուածները: Սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Շատերը Մկրտութիւնից յետոյ ապրում են աւելի անհոգ, քան նրանք, ովքեր չեն մկրտուել, եւ նոյնիսկ չունեն քրիստոնէական կեանքի որեւէ նշան... Բայց դա կարող է ձեզ պատժի բերել: Նրանք, ովքեր չեն ցանկանում ապրել այս մեծագոյն պատուին համապատասխան, արժանանում են մեծագոյն պատժի»[1]:

Ուստի Քրիստոս առաքեալներին ու նրանց իրաւայաջորդներին խստօրէն պատուիրում է. «**Մի՛ տուէք սրբութիւնը շներին. եւ ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցէք, որպէսզի դրանք ոտքի կոխան չանեն եւ դառնալով ձեզ չպատառոտեն**» (Մատթ. 7, 6): Այս թանկագին մարգարիտը Եկեղեցու Սուրբ Խորհրդի շնորհի պարգեւն է, որը պէտք չէ նետուի որեւէ մէկին, որպէսզի եւ՛ տուողը, եւ՛ այն ընդունողը չընկնեն Աստծու դատապարտութեան տակ: Զափազանց կարեւոր է իմանալ, որ մարդն ստանում է Աստծու շնորհը, պարգեւն ու օրհնութիւնը միայն այն պայմանով, որ նա հաւատայ, ապաշխարի իր մեղքերից եւ հաստատապէս որոշի իր կեանքն ապրել ըստ Աւետարանի: «**Ով չհաւատայ, պիտի դատապարտուի...**», ցոյց է տալիս, թէ ով

1 Иоанн Златоуст, свт. Творения. Т. 7. Кн. 1. СПб., 1901. С. 44.

ընդունում է խորհուրդն առանց հաւատի, ինչ-որ սնոտիապաշտ նախապաշարմունքի կամ արտաքին ու մեքենայացուած սովորոյթի պատճառով, ենթարկւում է Աստծու դատաստանին: Քրիստոս դա բացատրում է հետեւեալ խօսքով. «**Երբ պիղծ դեւը ելնում է մարդուց, շրջում է անջրդի տեղերում, հանգիստ է փնտռում. եւ երբ չի գտնում, ասում է. «Վերադառնամ իմ տունը, որտեղից ելայ»: Եւ գալիս է ու գտնում այն՝ մաքրուած եւ կարգի բերուած: Այն ժամանակ գնում եւ վերցնում է իրենից աւելի չար եօթը այլ դեւեր եւ մտնում, բնակւում է այնտեղ. եւ այն մարդու վերջին վիճակը լինում է աւելի վատ, քան նախկինը»**» (Ղուկ. 11, 22-24): Առանց Քրիստոսի հանդէպ հաւատի ընդունած Մկրտութիւնը, առանց քրիստոնէավայել կեանքով ապրելու որոշման, մկրտուած անձը ենթարկւում է Աստծու բարկութեանն ու անէծքին, քանի որ, ինչպէս Ս. Գիրքն է վկայում, «**թող անիծեալ լինի նա, ով Տիրոջ գործը ծուլութեամբ կը կատարի**» (Երեմ. 48, 10): Տէրը պատուիրեց Իր աշակերտներին. «**Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի...**» (Մատթ. 28, 20-21):

Ֆրանսիացի յայտնի մաթեմատիկոս, ֆիզիկոս, իմաստասէր եւ գրող Բլեզ Պասկալը դառնօրէն խորհում էր այն մասին, թէ ինչպէ՛ս էր հոգեւոր ծննդեան այս մեծ խորհուրդը՝ Ս. Մկրտութիւնը, իր ժամանակներում շատերի համար դարձել դատարկ մի սովորոյթ: Որովհետեւ հնում եկեղեցու անդամ էին դառնում միայն մեծ աշխատանքից ու երկար ջանքերից յետոյ, երբ մարդը հրաժարւում էր իր նախկին կեանքից, աշխարհից, մարմնական աւելորդ ցանկութիւններից եւ սատանայից: Վերջապէս, հին ժամանակներում եկեղեցի մտնելու համար անհրաժեշտ էր լքել աշխարհը, մինչդեռ այսօր եկեղեցի եւ աշխարհ մտնում են միաժամանակ: Այդպիսի գործերով էր, որ այն ժամանակ ճանաչուեց աշխարհի եւ եկեղեցու խորը տարբերութիւնը: Մկրտութիւնը մուտքն է դէպի եկեղեցի, որը արտաքին պարզ գործողութիւն չէ, ինչպէս մուտքն աշխարհիկ որեւէ կազմակերպութիւն: Դա խորապէս հոգեւոր ու

բարոյական արարք է, որը լիովին կախուած է մարդու համոզմունքից ու խղճից, որը մեծ չափով որոշում է նրա յաւէրժական ճակատագիրը:

Սակայն ինչպէս պէտք է պատրաստուել Մկրտութեանը: Զափահաս մարդը նախ եւ առաջ պէտք է հաւատքով գայ այն հաստատուն համոզմանը, որ Տէր Յիսուս Քրիստոս իսկապէս Աստուածն ու Փրկիչն է, իսկ Նրա Աւետարանը՝ կեանքի ճշմարիտ ուղին: Սա պահանջում է լուրջ ծանօթութիւն Աւետարանի եւ Նոր Կտակարանի այլ գրքերի հետ, ուղղափառ հաւատքի հիմնական սկզբունքների եւ հոգեւոր ու բարոյական կեանքի ըմբռնում: Մկրտութիւնն ընդունելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ապաշխարել խղճի դէմ կատարուած չար արարքների համար այլ մարդկանց հետ կապուած՝ սկսած ձեր ընտանիքի անդամներից: Մկրտութեանը պէտք է գնալ բոլորի հետ հաշտուելով: Ապաշխարութիւնը եւ Աւետարանի պատուիրաններով ապրելու որոշումը ուղղափառ հաւատքի ընդունման սկիզբն ու հիմքն են: Հակառակ դէպքում Մկրտութիւնը մարդու համար կարող է դառնալ անօգուտ եւ նոյնիսկ վտանգաւոր:

Ահա մարդը մկրտուեց, խորհուրդն աւարտուեց, իսկ շատերը բաւարարւում են միայն դրանով՝ հաւատալով, թէ կատարել են անհրաժեշտ ծէսերը, եւ նրանցից այլեւս աւելի ոչինչ չի պահանջւում: Խորը մոլորութիւն է սա: Մկրտութիւնը փրկութեան նախադուռն է եւ ճանապարհի սկիզբը միայն: Յիշենք, որ Մկրտութիւնը մարդու մէջ լուանում է սկզբնական մեղքն ու բոլոր անօրէնութիւնները, որոնք կատարուել են Մկրտութիւնից առաջ: Բայց մեղքի բողբոջը՝ մեղսաւոր սովորութիւններն ու մեղքի հակումը մնում են մարդու մէջ: Եւ դրանք յաղթահարւում են հէնց մարդու ապրած ողջ կեանքի ընթացքում նրա ջանքերի շնորհիւ, քանզի ըստ Տիրոջ խօսքի. «**Երկնքի արքայութիւնը հզօրներն են յափշտակում**» (Մատթ. 11, 12): Իսկ Եկեղեցու միւս խորհուրդները, աղօթքներն ու աստուածային արարողութիւնները քրիստոնեային սրբացնելու միջոցներն են: Դրանցում քրիստոնեան, ըստ իր հաւատքի ու կարիքի, ստանում է աստուածային շնորհը, որը նպաստում է նրա փրկութեանը: Առանց այդ շնորհի, ըստ առաքելական

ուսմունքի, մենք չենք կարող բարութիւն անել։ Այնուամենայնիւ, սա չի նշանակում, որ ոչինչ կախուած չէ հէնց մարդուց։ Դա կախուած է նրանից, թէ մարդը կ՚ընդունի՞ աստուածային շնորհը, թէ՞ ոչ, կ՚ուզենա՞ կատարել Աստծու կամքը եւ որքա՞ն նախանձախնդրութեամբ ու վճռականութեամբ այն կը կատարի։

*Փրկութիւնը պահանջում է եւ հաւատք, եւ Մկրտութիւն։ Իսկապէս, Մկրտութիւնը հաւատքի կնիքն է։ Այնուամենայնիւ, մենք չենք ակնարկում, որ ցանկացած Մկրտութիւն առանց հաստատուն եւ գիտակցուած հաւատքի անվաւեր է. չէ՞ որ իւրաքանչիւր նման դէպք պէտք է գնահատուի առանձին, այլ ոչ թէ ինքնաբերաբար։ Տիրոջ խօսքը, թէ՝ «**Ով հաւատայ ու մկրտուի, կը փրկուի**», վերաբերում է չափահասներին, բայց հաւատքն իբրեւ նախապայման ծայրայեղօրէն պէտք չէ ընդունել։ Եթէ մենք վճռական ծայրայեղութեամբ ընդունենք հաւատքն իբրեւ նախապայման, ապա Մկրտութիւնից պիտի զրկուեն նաեւ նրանք, որոնք մտաւոր այնքան կարողութիւն կամ հասունութիւն չունեն՝ ըմբռնելու հաւատքին վերաբերող սկզբունքներն ու խորութիւնները, ինչպէս շատ անգրագէտներ, թերի կրթութիւն ունեցողներ եւ նրանք, որոնք ունեն խիստ սահմանափակ մտաւոր ունակութիւններ՝ ընկղմուելու աստուածաբանական խնդիրների խորքերը։ Ուրեմն ի՞նչը պէտք է լինի այսպիսի անհատների հաւատքի ընդունելութեան չափանիշը։ Միայն Աստուած գիտի մարդկանց սրտերն ու հաւատքի կարողութիւնները, իսկ մարդը սխալական է եւ սահմանափակ։ Շատ օրինակներ կան, երբ մարդիկ վերարժեւորել են իրենց կեանքն ու դարձի եկել մկրտուելուց տարիներ անց։ Ինչպէս արդէն նշել էինք, աստուածային շնորհով լցուած սերմը Ս. Մկրտութեան խորհրդով ցանւում է մարդու մէջ։ Այն, ինչ մենք ընդունեցինք Քրիստոս Յիսուսով, չի ոչնչանում, այլ ինքն իրեն թաղւում է մեր մէջ, ինչպէս գանձը՝ հողի մէջ։ Քրիստոս սերմանւում է մեր մէջ, եւ աստուածային այս պարգեւը կատարեալ է, սակայն մենք կա՛մ զարգացնում ենք եւ աճեցնում այն, կա՛մ էլ պարզապէս խեղդում ենք մեր մեղսալի ապրելակերպով։ Աստուածային պարգեւն իր ողջ շնորհով փայլում ու լուսաւորում է միայն նրանց մէջ ու այն չափով,*

ովքեր իրենց մշակում են եւ ապրում Աւետարանի պատուիրաններով։ Մարդն ստանում Մկրտութեան շնորհի յաւիտենական կեանքի սերմը, որը մանանեխի հատիկի նման է, եւ մենք չգիտենք, թէ այն ե՞րբ կը բուսնի ու կաճի։ Կարեւոր է, թէ ի՞նչ հողի վրայ է ցանւում։ Եւ քանի որ տրւում է սերմը եւ ոչ թէ ծառն ու պտուղը, մենք չենք կարող լիովին ըմբռնել, թէ Տէր Աստուած ի՞նչ պայմաններում այն պտղաբեր կը դարձնի։ Հետեւաբար, մենք պէտք չէ զրկենք այդպիսիներին Մկրտութիւնից։ Իսկ եթէ դուք կասկածներ ունէք ձեր Մկրտութեան վաւերականութեան համար, գուցէ անհաւատ էք եղել այն ժամանակ, եւ հիմա հաւատքն արթնացել է ձեր մէջ, ուրեմն իմացէ՛ք, որ կարիք չկայ նորից մկրտուելու, քանի որ կրկնամկրտութիւնն արգելուած է Սուրբ Գրքում։ Մկրտութեան վաւերականութեան մէջ կասկած չկայ։ Դուք մեծ հնարաւորութիւն ունէք՝ վերարժեւորելու ձեր կեանքը, ապաշխարելու ու վերադառնալու Եկեղեցու գիրկը, եւ դա հաճելի կը լինի Աստծուն։

Սիրելի՛ ընթերցող, եթէ դեռ մկրտուած չես եւ քո մէջ հասունացել է հոգեւոր վերածննդի պահը, մի՛ երկմտիր, հաւատա՛ Աստծու առաջնորդութեանը, գնա՛ Եկեղեցի ու կնքի՛ր Աստծու հետ հաշտութեան դաշինքը, որը կենսորոշ ու վճռական է իւրաքանչիւր մարդու համար։

Տէ՛ր, աղաչում եմ Քեզ, օգնի՛ր ինձ՝ մեղաւորիս, հասկանալու Քո գաղտնիքները։ Բացի՛ր իմ աչքերը՝ տեսնելու Քո անտեսանելի խորհուրդները, եւ ուժ տուր ինձ՝ ծնուելու Մկրտութեան Սուրբ Աւազանից։ Ամէն։

✝ ✝ ✝

Ինչո՞ւ են ոմանք մերժում մանուկների Մկրտութիւնը

*Մարդիկ յաճախ հարցնում են. «Եթե հաւատքը կարեւոր նախապայման է, ուրեմն ինչո՞ւ է կատարւում մանկանց Մկրտութիւնը»: Ոմանք էլ ասում են, թէ մանկամկրտութիւնը լոկ մարդկային կարգադրութիւն է. մանուկներին կարիք չկայ մկրտել, քանի որ Աւետարանում էլ գրուած է. «**Ով որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի, իսկ ով որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի**» (Մարկ. 16, 16): Ուրեմն՝ «ինչո՞ւ է պէտք մկրտել մանուկներին, եթէ նրանք հաւատալու կարողութիւն չունեն»:*

Նրանք, ովքեր մերժում են մանուկների Մկրտութիւնը նշուած Աւետարանի այս նոյն համարի վրայ, հիմնուելով իրենց հակասելով մերժում են նաեւ մանուկների փրկութիւնը, որովհետեւ եթէ պիտի առարկեն, թէ՝ «Մանուկները չեն կարող մկրտուել, քանի որ չեն կարող հաւատալ», ուրեմն կարելի է իր հերթին առարկել, թէ՝ «Մանուկները չեն կարող նաեւ փրկուել, քանի որ չեն կարող հաւատալ»: Բայց ինչպէս որ չենք կարող մերժել մանուկների փրկութիւնը՝ պարզապէս այն բանի համար, որ նրանք չեն կարող հաւատալ, նոյնպէս էլ պէտք չէ մերժել մանուկների Մկրտութիւնը, քանի որ հաւատքի գիտակցութիւնը դեռ չունեն:

Եթէ «ով որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի» խօսքը հասկանանք տառացիօրէն, ապա եզրակացութիւնը կը լինի այն, որ մանուկները չեն կարող նաեւ փրկուել, որովհետեւ հաւատքի գիտակցութիւն չունեն: Բայց պէ՞տք է արդեօք մանուկից պահանջել մի բան, որ իր մտքի ու հոգու ընդունակութեան սահմաններից եւ հասողութիւնից վեր է: Ճիշդ է, որ փրկութիւնը հաւատացողների համար է, եւ ով որ չհաւատայ, չի փրկուի, բայց այդ «ով որ չհաւատայ» խօսքը գիտակից, չափահաս եւ հաւատալու ընդունակ

մարդկանց համար է, այլ ոչ թէ մանուկների։ Մենք չենք կարող մանուկին ասել, որ «եթէ չհաւատաս, չես կարող փրկուել», որովհետեւ մանուկը ոչ թէ չի հաւատում, այլ՝ չի կարող հաւատալ, քանի դեռ չունի այդ ընդունակութիւնը։

Ոմանք ասում են, թէ մանուկներին կարիք չկայ մկրտել, քանի որ արդէն գրուած է. «**Այդպիսիներինն է Աստծու Արքայութիւնը**» (Մատթ. 19, 14։ Ղուկ. 18, 16։ Մարկ. 10, 14)։ Պատասխանենք, որ Ս. Մկրտութեան խորհուրդը Յիսուս հաստատեց համայն մարդկութեան՝ թէ՛ չափահասների եւ թէ՛ անչափահասների համար։ Քանի որ բոլորն էլ ի ծնէ անխտիր ժառանգում են ադամական (սկզբնական) մեղքը, ուստի կարիք ունեն դրանից սրբուելու, որպէսզի կարենան ժառանգել Աստծու երկնային Արքայութիւնը։ Յոբն ասում էր. «**Իսկ այն ո՞վ է, որ մաքուր է աղտից. ո՛չ ոք**» (Յոբ 14, 4)։ Դաւիթ թագաւորն ասում էր. «**Անօրէնութեամբ յղիացաւ եւ մեղքերի մէջ ծնեց ինձ մայրն իմ**» (Սաղմ. 50, 7)։ Նոյնպէս՝ Պօղոս առաքեալն էր ասում. «**Ինչպէս որ մէկ մարդով մեղքն աշխարհ մտաւ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետեւ բոլորն էլ մեղանչեցին**» (Հռոմ. 5, 12)։

Մարդկութեան փրկութեան համար հաստատուեց Եկեղեցին իր գլխով՝ Յիսուս Քրիստոսով. իսկ Եկեղեցու մուտքը Մկրտութեան խորհուրդն է, որի շնորհիւ մարդիկ ստանում են մեղքերի թողութիւն եւ ընդունելով Սուրբ Հոգին՝ որդեգրւում են Հայր Աստծուն ու դառնում Քրիստոսի Մարմնի սրբուած անդամներ։ Առանց Մկրտութեան սրբարար խորհրդի չի կարող լինել փրկութիւն, քանի որ Տէրն ասում է. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։ Յիսուս յստակօրէն ասել է այս խօսքը ոչ միայն չափահասներին, այլեւ համայն մարդկութեանը, որովհետեւ Մկրտութիւնը բոլորիս համար է։ Պօղոս առաքեալը հրահանգում է՝ ասելով. «**Զեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով**» (Գործք 2, 38)։ Ուստի նրանք, ովքեր գալիս

են Քրիստոսի մօտ, պէտք է մկրտուեն։ Յիսուս ասում է. «**Բոլոր նրանք, ում Հայրն ինձ տալիս է, կը գան ինձ մօտ, եւ ով որ ինձ մօտ կը գայ, դուրս չեմ անի**» (Յովհ. 6, 37)։

Աստուածաշնչում չկայ որեւէ համար, որն արգելի մանկամկրտութիւնը։ Յիսուսի աշակերտներն անգիտակցաբար ցանկացան արգելել մի խումբ կանանց, երբ իրենց մանուկներին բերեցին Նրա մօտ։ Այդ պատճառով Յիսուս յանդիմանեց նրանց՝ ասելով. «**Թո՛յլ տուէք այդ մանուկներին գալ ինձ մօտ եւ արգելք մի՛ եղէք նրանց, որովհետեւ Աստծու Արքայութիւնն այդպիսիներինն է**» (Մարկ. 10, 14)։ Եթէ փրկութեան հասնելու համար գիտակից հաւատքը բացարձակ պայման ու պահանջ է, այդ դէպքում մանուկները չեն կարող փրկուել. եւ եթէ չեն կարող փրկուել, այդ դէպքում ինչպէս պէտք է հասկանալ Տիրոջ այս խօսքը։ Առաքեալներն այն համոզումն ունէին, թէ մանուկներին Յիսուսի մօտ բերելն անիմաստ է, քանի որ նրանք որեւէ բան պիտի չհասկանային Տիրոջ խօսքերից, բայց Յիսուս նրանց սխալն ուղղելով, մանուկներին կանչեց եւ «**վերցնելով նրանց Իր գիրկը՝ նրանց վրայ ձեռքը դրեց եւ օրհնեց նրանց**» (Մարկ. 10, 16)։ Հետեւաբար, մանուկներն էլ կարող են ընդունել Աստծու շնորհն ու օրհնութիւնները։ Եթէ Յիսուս, մանուկների վրայ ձեռք դնելով եւ նրանց օրհնելով, կարող էր օրհնութիւն փոխանցել, ուրեմն ինչո՞ւ Մկրտութեան ժամանակ պիտի չկարողանայ օրհնութիւն փոխանցել նրանց։ Երբ աւետարանիչները խօսում են մանուկներին օրհնելու մասին, մեզ համար շատ յստակ է դառնում, որ Տէր Յիսուսի կողմից օրհնուելու եւ օրհնութիւն ստանալու խնդիրը տարիքի հետ կապ չունի։ Եւ եթէ տարիքի հետ կապ չունի, ուրեմն մենք պատճառ չունենք մեր մանուկներին չմկրտելու։

Աշակերտների նման սխալւում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թէ Մկրտութեան բերուած մանուկները չեն օգտուի, չեն փոխուի ու չեն օրհնուի։ Յիսուսի կոչ է ուղղում մարդկանց, որ մանուկներին նմանուեն։ Յիսուս, որ այսքան սէր ունէր մանուկների հանդէպ,

չէր արգելի Իր անունով մանուկներին մկրտելու արարողութիւնը։ Եթէ համարձակուենք ասել, որ մանուկների վրայ Յիսուսի ձեռք դնելը եւ նրանց օրհնելը ո՛չ մի օգուտ չունի, միայն այ՛ն ժամանակ կարող ենք ասել, թէ մանուկների Մկրտութիւնը օգուտ չունի նրանց համար։ Բայց ո՞վ է այն մարդը, որ յանդգնում է ասել, թէ՝ Յիսուսի մանուկների վրայ ձեռք դնելն ու նրանց օրհնելը՝ օգուտ չունեն նրանց համար։

*Սուրբ Գրքում գրուած չէ, թէ անխտիր բոլոր մանուկները Եկեղեցու անդամ են կամ թէ Աստծու Արքայութեան մէջ են, այլ միայն գրուած է «այդպիսիներինն է», այսինքն՝ մանուկներին։ Պօղոս առաքեալը խրատում է նրանց նմանուել. «**Եղէ՛ք երեխայ չարութիւն գործելու մէջ**» (Ա. Կորնթ. 14, 20)։ Նրանց նման խոնարհ ու բարեսիրտ, անկեղծ եւ անաչառ պէտք է լինել, որպէսզի կարելի լինի Աստծու Արքայութեանն արժանանալ։ Իսկ այնպիսիները, որոնք ասում են, թէ իրենց զաւակները փրկւում են առանց Մկրտութեան, ուստի եւ պէտք է նաեւ ընդունել, որ չափահասներն էլ կարող են Եկեղեցու անդամ դառնալ առանց Մկրտութեան ու փրկուել՝ հակառակ Տիրոջ այն խօսքի, թէ՝ «**Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով Աստծու Արքայութիւնը չընդունի** (այսինքն՝ առանց Մկրտութեան) **որպէս մանուկ, նրա մէջ չի մտնելու**» (Մարկ 10, 15)։ Ուստի, անմտօրէն կարող ենք ասել, թէ փոքրիկ երեխայի նման լինենք, այլեւս պէտք չէ մկրտուել ու փրկուած ենք։*

252 թ. Կարթագինէի եպիսկոպոսաց ժողովը *սահմանեց. «Մենք պէտք չէ որեւէ մէկին հեռացնենք ողորմած ու բարեգութ Աստծու շնորհից ու Մկրտութեան խորհրդից։ Եթէ վերաբերում է բոլորին, ուրեմն, ինչպէս մտածում ենք, սա յատկապէս պէտք է կատարել նորածինների նկատմամբ, ովքեր արդէն իսկ նրանով են արժանի Աստծու ողորմածութեանն ու մեր օգնութեանը, որ նրանք հէնց ծննդեան սկզբից լացով ու արտասուքներով արտայայտում են միայն իրենց աղաչանքը»*[1]։

1 https://vk.com/topic-36524265_28634654 (ստ 4/04/23)։

Հայր Որոգինէսը *երեխաների Մկրտութեան մասին խօսում է որպէս առաքելական աւանդոյթի: Նա ասում է, որ «առաքեալ-ները Եկեղեցուն փոխանցեցին նաեւ մանուկներին մկրտելու աւանդութիւնը, քանի որ նրանք, որոնց յանձնարարուեցին աստուածային խորհուրդների գաղտնիքները, գիտէին, թէ իւրաքանչիւր մարդ ունի բնածին արատներ, որոնք մաքրւում են ջրի ու Հոգու միջոցով»*[1]*:*

Մանուկները, որոնք դեռ ընդունակ չեն ո՛չ ունենալու, ո՛չ էլ վկայելու իրենց հաւատը եւ ապաշխառելու Մկրտութիւնից առաջ, նրանք մկրտւում են ըստ ծնողների եւ կնքահօր հաւատի, որոնք նրանց անունից արտասանում են թէ հաւատոյ խոստովանութիւնը, թէ՛ սատանայից եւ նրա բոլոր գործերից հրաժարումը՝ Եկեղեցու առաջ միասին պատրաստուելով դաստիարակել մկրտուող երեխաներին՝ հաւատով եւ բարեպաշտութեամբ, երբ նրանք հասակ առնեն:

Սբ. Դիոնիսիոս Արիսպագացին *Եկեղեցու այս սովորութիւնը ծագեցնում է անմիջապէս առաքեալներից. «Աստուածային մեր Վարդապետը,- ասում է նա,- հաճեց թոյլատրել Մկրտութիւն նաեւ մանուկներին այն պայմանով, որ երեխայի բնական ծնողները նրան յանձնարարեն հաւատացեալներից մէկին, որը նրան լաւ կը սովորեցնի Աստուածային առարկաները եւ կը հոգայ երեխայի մասին որպէս հայր՝ ի վերուստ մատնանշուած եւ որպէս նրա յաւիտենական փրկութեան պահապան: Հէնց այդ մարդուն, երբ նա խոստում տայ պատանուն առաջնորդել բարեպաշտական կեանքի, եպիսկոպոսն թելադրում է արտասանել «Հրաժարիմքը» եւ սուրբ խոստովանութիւնը»*[2]*:*

Առաքելական ժամանակներից սովորութիւն է դարձել

---

1 Origen, Commentaries on Romans 5:9. https://carm.org/early-church-fathers-baptism (ստ 4/04/23):

2 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (ստ 4/04/2023):

մանուկներին մկրտել, ինչպէս որ Հին Ուխտի մէջ ութօրեայ թլփատութիւնն էր (տե՛ս Ծննդ. 17, 12)։ Ուստի, Քրիստոս Հին Ուխտի թլփատութիւնը փոխարինեց Նոր Ուխտի Մկրտութեամբ։ Պօղոս առաքեալն ասում է. «**Նրանով դուք անձեռագործ թլփատութեամբ թլփատուեցիք հաւատով՝ մերկանալով մեղանչական մարմնից Քրիստոսի թլփատութեամբ, թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով**» (Կող. 2, 11-12)։ Եթէ Հին Ուխտում Աստծու խոստումներն ու ժողովրդի ընտրուածութիւնն ընդգրկում են բոլոր թլփատուած հրեայ մանուկները, ուստի ինչո՞ւ Նոր Ուխտում Աստծու «**ընտիր ցեղը**», «**սուրբ ազգը**» եւ «**Աստծու սեփական ժողովուրդը**» (Ա. Պետր. 2, 9) իր զաւակներին պէտք է արգելի այն խոստումներից, որոնց մասին խօսում է Պետրոս առաքեալը. «**Մեծամեծ եւ թանկագին խոստումներ պարգեւուեցին մեզ, որպէսզի հաղորդակից լինէք աստուածային բնութեանը**» (Բ. Պետր. 1, 4)։ Ինչո՞ւ Նոր Ուխտի մանուկները չեն կարող Քրիստոսի Մարմնի անդամ դառնալ եւ հաղորդակից լինել աստուածային բնութեանը։ Ինչո՞ւ Նոր Ուխտի մանուկները չեն կարող լինել «**Քրիստոս Յիսուսի միջոցով ժառանգակից, նոյն մարմնի անդամ եւ նրա խոստմանը հաղորդակից՝ Աւետարանով**» (Եփես. 3, 6)։ Աստծու խոստման համաձայն՝ Նոր Ուխտի մանուկները մկրտւում եւ ընդունում են Աստծու Սուրբ Հոգու պարգեւը՝ ստանալով սկզբնական մեղքի թողութիւն։ Պօղոս առաքեալն ասում է. «**Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք**» (Գաղ. 3, 27)։ Պետրոս առաքեալը խրատում է՝ ասելով. «**Զեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը**» (Գործք 2, 38)։ Ապա աւելացնում է. «**Որովհետեւ խոստումը ձեզ համար է, ձեր որդիների եւ բոլոր հեռաւորների համար, որոնց կը կանչի մեր Տէր Աստուածը**» (Գործք 2, 39)։

Սակայն աղանդաւորները պնդում են, որ այստեղ տրուած

խոստումն անչափահասների համար չէ, այլ չափահասների եւ այն ժառանգորդների համար, որոնք կարող են լսել ու հասկանալ Տէր Աստծու կանչը: Ասենք, որ բոլոր չափահաս հաւատացեալներն իրենց հայրերի «որդիներն» են: Արդեօ՞ք յարութիւն առնելու այս խոստումը չի վերաբերում նաեւ մեր փոքրիկներին: Անշուշտ, Տէրը նրանց էլ պէտք է յարութիւն առնել տայ: Աստուածաշնչի մի շարք համարներում (Ա. Պետր. 3, 6: Տիտ. 3, 6: Դ. Թագ. 17, 41), չափահասները նոյնպէս իրենց ծնողների «զաւակներն» են կոչւում: Միթէ սա նշանակում է, թէ անչափահասները զրկւում են «զաւակներ» կոչուելու իրաւունքից եւ այդ դէպքում էլ չեն կարող մեղքերի թողութեան եւ որդեգրութեան շնորհն ընդունել:

Յիսուսի մօտ էին բերում հրեայ փոքրիկներին, որոնք թլփատուած էին՝ համաձայն հրէական օրէնքների, եւ նրանք կարող էին գալիք Մեսիայի հաւատով փրկուել, ինչպէս Հին Ուխտի բոլոր հաւատացեալները: Իսկ աղանդաւորների զաւակները ո՛չ թլփատուած են, ո՛չ էլ մկրտւում են: Ինչ պիտի լինեն նրանք երբ մեռնեն: Նրանք կարծում են, թէ բոլորն անխտիր պիտի Աստծու Արքայութեան մէջ գտնուեն: Եթէ այսպէս մտածենք, ուրեմն այնտեղ պիտի գտնուեն նաեւ բոլոր չմկրտուած կռապաշտ հեթանոսները: Հետեւաբար, ինչ է տարբերութիւնը կռապաշտ հեթանոսների եւ քրիստոնեաների միջեւ:

Նոր Կտակարանում մենք տեսնում ենք, թէ ինչպէ՛ս է Աստուած փրկում մանուկներին իրենց ծնողների հաւատով: Դիւահարուածը բուժւում է հօր հաւատի շնորհիւ (տե՛ս Մարկ. 9, 17-27): Քանանացի կնոջ աղօթքով փրկւում է նրա դիւահարուած դուստրը (տե՛ս Մատթ. 15, 22-28): Կափառնայումի մէջ մի պաշտօնատարի հաւատով բուժուեց իր հիւանդ որդին (տե՛ս Յովհ. 4, 46-53): Աստծու շնորհով մահացած երեխաները վերադարձան կեանքի (տե՛ս Ղուկ. 7): Ինչպէս տեսնում ենք, Սուրբ Հոգու շնորհը կարող է հպուել երեխաներին անկախ իրենց գիտակցութիւնից: Ինչո՞ւ մերժել երեխաներին Մկրտութեան եւ Հաղորդութեան շնորհներից:

Եթէ հաւատի գիտակցութիւնը չունենալով հանդերձ, մանուկները կարող են Աստծու Սուրբ Հոգու պարգեւներն ու օրհնութիւններն ընդունել, հետեւաբար նրանք կարող են եւ ընդունակ են Աստծու շնորհն ընդունել նաեւ Ս. Մկրտութեան խորհրդի միջոցով։

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ մանուկներին պէտք չէ մկրտել, քանի որ նրանք չեն կարող վկայութիւն տալ առ Աստուած

*Տարբեր կրօնական շարժումների հետեւորդները յայտարարում են, թէ մանուկները չեն կարող բարի խղճմտանքի վկայութիւն տալ առ Աստուած, ուրեմն՝ պէտք չէ մկրտուեն, քանի որ գրուած է. «**Մկրտութիւն էլ, ըստ նոյն օրինակի, ապրեցնում է ձեզ (ոչ թէ մարմնի կեղտը հեռացնելու համար, այլ որպէս մաքուր խղճով յանձնառութիւն առ Աստուած) Յիսուս Քրիստոսի յարութեան միջոցով**» (Ա. Պետր. 3, 21)։ Նրանք բացատրում են, թէ փորձառութիւնը ցոյց է տալիս, որ Մկրտութիւնը երեխաներին ո՛չ փրկում է եւ ո՛չ էլ նրանց օգուտ է բերում, որովհետեւ նրանք ո՛չ կարող են հաւատալ եւ ո՛չ էլ բարի խղճմտանքի վկայութիւն տալ։ Երեխաները չեն կարող մկրտուել, քանի որ նրանք չեն կարող խոստովանել ու վկայել իրենց հաւատը, իսկ Մկրտութիւնը, ինչպէս ասում է Պետրոս առաքեալը, մաքուր խղճով յայնձնառութիւն է առ Աստուած։ Նրանք յայտարարում են, թէ. «Մենք արդէն իսկ մէկընդմիշտ փրկուած ենք ապաշխարութեամբ ու հաւատով, եւ այս կամ այն եկեղեցին իր խորհրդակատարութիւններով մեզ չեն կարող փրկել»։ Շատերն են այսօր փնտռում փրկութեան հարթ, հեշտ, հաճելի ու փափուկ ճանապարհներ՝ վստահ լինելով, թէ ունեն փրկութեան բացարձակ ապահովագրութիւն՝ Աստծու երկնային Արքայութիւնը մտնելու, եւ կարեւոր չէ, թէ այժմ ինչպէ՞ս են ապրում, միայն թէ հաւատան եւ անպատճառ փրկուելու են։ Շատերի համար փրկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անձի երեւակայելի գիտակցութեան համոզմունք, թէ ինքն արդէն իսկ փրկուած է, ու կարեւոր չէ, թէ ինչպիսի՛ կեանք է վարում։*

Հերձուածողներն ասում են. «Եկեղեցին մեզ չի փրկում իր խորհրդակատարութիւններով, այլ փրկում է միայն Քրիստոսը»։ Բայց չէ՞ որ Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է, իսկ Քրիստոս Եկեղեցու գլուխն է։ Քրիստոսին բաժանել Իր Եկեղեցուց նոյնն է, ինչ բաժանել գլուխը մարմնից։ Ինչպէս գլուխն է անբաժան մարմնից, այդպէս էլ անբաժանելի են Եկեղեցին ու Քրիստոս։ Ուստի, եթէ անհնար է փրկուել առանց Քրիստոսի, այդպէս էլ հնարաւոր չէ փրկուել առանց Քրիստոսի հիմնած Եկեղեցու եւ իր փրկարար խորհուրդների։ Իհարկէ, որեւէ մարդ, որ արդարութիւն է գործում, ընդունելի է Աստծու համար, բայց դա չի նշանակում, թէ Եկեղեցուց դուրս՝ առանց սրբարար խորհուրդների կարելի է փրկուել։ Ով որ արդարութիւն է գործում, Աստծու ուշադրութիւնն իր վրայ է հրաւիրում, ու Տէրը նրան առաջնորդում է դէպի Իր Եկեղեցին, ինչպէս որ կատարուեց, օրինակ, Կոռնելիոսին եւ նրա ազգականներին, երբ նրանք հաւատացին եւ անմիջապէս յետոյ մկրտուեցին։

Այն օտարամուտ ուսմունքները, որոնք բաժանում են հաւատքը Մկրտութիւնից կամ էլ մկրտւում են ձեւականօրէն, քանի որ համարում են, որ Մկրտութեամբ չէ վերստին ծնունդը, պնդում են, թէ Մկրտութիւնը խորհուրդ չէ, այլ պարզապէս մեր բարի խղճմտանքի հանդիսաւոր խոստումի վկայութիւնն առ Աստուած ու մեր հաւատքի տեսանելի խորհրդանիշը։ Ահա մի քանի յայտարարութիւն։ Ասում են. «Մկրտութիւնը հրապարակային խոստովանութիւն է առ Տէր Յիսուս Քրիստոս՝ որպէս անձնական Փրկիչ եւ Աստծու ծառայութեան համար անձի կամաւոր նուիրումի հանդիսաւոր գործողութիւն»[1]։ «Մկրտութիւնը մեր հրապարակային վկայութիւնն է մարդկանց եւ Աստծու առաջ, եթէ՝ Քրիստոսի մահով մենք փրկուեցինք։ «Մկրտութիւնը բարի խղճմտանքի վկայութիւնն է առ Աստուած ու հաւատի Մեծ Փորձաքարը... Ուստի,

1 «Աւետարանական քրիստոնեայ-բապտիստների հաւատքի հիմնական սկզբունքները», Օդեսա 1992, էջ 114։

Մկրտութիւնը ճշմարիտ հաւատի ու փրկութեան Վկայութիւնն ու Ապացոյցն է»[1]*: Բարենորոգչական շարժման հետեւորդները պնդում են, թէ Մկրտութիւնը հրապարակային վկայութիւնն է Աստծու եւ մարդկանց առաջ եւ արդէն իսկ փրկուած լինելու հաստատումը: Նրանք, ինչպէս միշտ, մէջբերում են Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքերը. «**Մկրտութիւն է, որ այժմ էլ մեզ փրկում է՝ ոչ թէ մարմնի կեղտը հեռացնելով, այլ որպէս բարի խղճմտանքի վկայութիւն առ Աստուած, Յիսուս Քրիստոսի յարութեան միջոցով**» (Ա. Պետր. 3, 21): Ուրեմն, փորձելով մեկնաբանել առաքեալի այս խօսք՝ շատերը Մկրտութիւնը վերածում են Աստծուն հաւատարիմ լինելու երդում կամ խոստում տալուն, ուստի Մկրտութիւնն իրենց համար խորհուրդ չէ, այլ մի խորհրդանշական ու ձեւական արարողութիւն: Բայց առաքեալի մէջբերուած խօսքերը Մկրտութեան վերաբերեալ ոչ թէ Աստծուն բարի խղճմտանքի խոստում տալն է, այլ Աստծուց բարի խղճմտանքի կամ մաքուր խղճի պարգեւն ստանալու խնդրանքն է:*

Սբ. Գրիգոր Նազիանզացի Աստուածաբանը *դեռ չորրորդ դարում ասում էր, թէ այստեղ Պետրոս առաքեալը խօսում է Մկրտութեան շնորհիւ բարի խղճմտանքի պարգեւն ստանալու մասին: Պետրոս առաքեալի մէջբերման մէջ «վկայութիւն» բառը շփոթութիւն է ստեղծում շատերի համար: Նորկտակարանային լուսաբանութեան ներքոյ «բարի խղճմտանքի վկայութիւնն առ Աստուած» նախադասութեան մէջ «վկայութիւն» բառը յունարէն բնագրերում՝* **"ἐπερωτήσαι"** *(էպէրո՛տիսէ) բառն է, որը նշանակում է «հարցնել» կամ «խնդրել»: Եւ չկայ մէկ այլ տեղ Նոր Կտակարանում, որտեղ այս բառը խոստում տալու կամ վկայելու իմաստն ունենայ: Գրաբար բնագրի թարգմանութիւնը բառացիօրէն այսպէս է հնչում. «**Մկրտութիւն ասեա խնդրանք է Աստծուն՝ մաքուր խիղճ ունենալու համար**» (Ա. Պետր. 3, 21): Իսկ*

1 Յովհաննէս Մարգարեան [Ճան Մարգ], Աստուծոյ փրկութեան ծրագիրը, Բէյրութ, 1971, էջ 549:

լատինական թարգմանություններում օգտագործում է՝ **"rogare"** *բառը, որը նույնպէս նշանակում է՝ հարցնել կամ խնդրել։ Այս բառը նոյն իմաստն ու նշանակությունն ունի Նոր Կտակարանի բոլոր այլ համարներում (տե՛ս Մատթ. 22, 46։ Մարկ. 9, 32։ 11, 29։ Ղուկ. 2, 46։ 6, 9։ Հռոմ. 10, 20։ Ա. Կորնթ. 14, 35։ Ա. Պետր. 3, 21)։ Հետեւաբար, Մկրտությունն առաջին հերթին խնդրանք է։ Իսկ թէ ինչի՞ մասին է այդ խնդրանքը, Պետրոս առաքեալը բացատրում է նոյն համարում՝ ասելով.* ***«Մկրտությունն է, որ այժմ էլ մեզ փրկում է... Յիսուս Քրիստոսի յարութեան միջոցով»*** *(Ա. Պետր. 3, 21)։ Ուրեմն, Մկրտությունն Աստծու շնորհի պարգեւն է Յիսուս Քրիստոսի յարութեամբ։ Այն փրկարար է, ոչ թէ այն ժամանակ, երբ Աստծուն ինչ որ բան ենք խոստանում կամ վկայում, այլ երբ Փրկիչը շնորհում է մեզ բարի եւ նորոգուած խղճմտանքի շնորհը, մաքուր խիղճ ձեռք բերելու պարգեւը, որպէսզի մեղքի ճշմարիտ գիտակցությունն ունենանք՝ ճշմարիտ զղջման եւ ապաշխարության համար։ Մանուկների փոխարէն բարի ու մաքուր խիղճ կարող են խնդրել նրանք, ովքեր հաւատով նրանց բերում են մկրտելու (տե՛ս Մարկ. 10, 13)։*

Եթէ մարդ առանց Քրիստոսի էլ ունի բարի ու մաքուր խղճմտանք, որի համար այնպէս վստահ է, որ մինչեւ իսկ երդում էլ է տալիս, թէ միշտ պիտի բարի ու մաքուր խիղճ ունենայ, ուրեմն՝ ինչո՞ւ է պէտք «թաղուել Մկրտությամբ մահուան համար»։ Եթէ առանց Մկրտության անհրաժեշտ ամէն բան արդէն իսկ ունի փրկության համար, աւելորդ չէ՞ արդեօք Մկրտությունն ընդհանրապէս։ Պետրոս առաքեալը հրահանգում է բոլոր հաւատացողներին, որ մկրտուեն՝ ասելով. ***«Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը»*** *(Գործք 2, 38)։*

Առաքեալը քարոզում է բոլոր նրանց, ովքեր հաւատացին. ***«Եւ հրամայեց նրանց մկրտուել յանուն Յիսուս Քրիստոսի»***

(Գործք 10, 48)։ Պետրոս առաքեալի խօսքերից հետեւում է, թէ մարդ սկզբից պէտք է հաւատայ Քրիստոսին եւ ապաշխարի։ Իսկ մեղքերի թողութիւն ստանալու համար եւ Սուրբ Հոգու պարգեւն ընդունելու համար նա պարտաւոր է մկրտուել՝ վերստին ծնուելով սրբարար Աւազանից։ Եթէ Մկրտութիւնը կարեւոր չէ, ուրեմն Պօղոս առաքեալն էլ իզուր մկրտուեց։ Նա Փրկչին տեսաւ, հաւատաց եւ ապաշխարեց։ Բայց Անանիան նրան ինչ ասաց. ***«Արդ, ինչո՞ւ ես յապաղում, վե՛ր կաց, մկրտուի՛ր եւ լուա՛ քո մեղքերը՝ նրա անունը կանչելով»*** *(Գործք 22, 16)։ Ուստի, Պօղոս առաքեալն իր մեղքերին թողութիւն ստացաւ միայն ա՛յն ժամանակ, երբ մկրտուեց։ Հաւանաբար, Պօղոսի փոխարէն հերձուածող «աստուածաբանները» Անանիային կը պատասխանէին, թէ կարիք չկայ «մկրտուի՛ր» բառից յետոյ աւելացնես՝ «եւ լուա՛ քո մեղքերը» խօսքերը, քանի որ հաւատի միջոցով միայն կարելի է լուանալ մեղքերը եւ թողութիւն ստանալ։ Իսկ Պօղոս առաքեալը բոլոր քրիստոնեաներին հրահանգում էր, որ մկրտուեն։ Ուրեմն, չի կարելի նախնական մեղքերի թողութիւն ստանալ ու միանալ Քրիստոսի Մարմնին՝ Եկեղեցուն այլ կերպ, քանի որ առաջնային մեղքերի թողութիւնը եւ որդեգրութիւնը տրւում են միայն Ս. Մկրտութեան խորհրդի շնորհիւ։ Սակայն նրանք առարկում են, թէ ջրով մկրտուելը կարեւոր չէ, քանի որ գրուած է.* ***«Բոլոր մարգարէները նրա մասին վկայում են, որ բոլոր նրան հաւատացողները նրա անունով մեղքերի թողութիւն կը ստանան»*** *(Գործք 10, 43)։ Նոյնպէս պնդում են, թէ «մեղքերի թողութիւն ենք ստանում Յիսուսի անունով, եւ ոչ թէ մկրտուելով»։ Մի՞թէ Մկրտութիւնը միայն անձի կողմից գործողութիւն է, թէ՞ բացի մարդուց նաեւ Աստուած է գործում։ Արդեո՞ք Մկրտութիւնը միայն այն է, ինչ որ ես եմ ուզում վկայել ու խոստովանել Աստծու առջեւ, թէ՞ Մկրտութեան մէջ կայ նաեւ Արարչի շնորհաբաշխութեան փոխադարձ ազդեցութեան գործողութիւնը։ Եթէ միայն առաջինն է ճշմարիտ, ապա Մկրտութիւնը ոչ այլ ինչ է, քան տարօրինակ,*

զուտ մարդկային արարողութիւն կամ մարդասիրական արարողութիւն: Իսկ միւս կողմից, եթէ ընդունում ենք, որ Աստուած Ինքն է գործում Մկրտութեան մէջ, ապա Մկրտութիւնը խորհուրդ է, այսինքն՝ մարդկային այնպիսի մի արարք, որն Աստծու շնորհն է բերում մարդկային կեանքերում: Իսկ եթէ աղանդաւորի համար փրկութիւնը կախում չունի Մկրտութիւնից, եւ միայն խորհրդանշական է համարւում՝ փրկուած լինելու համոզումը գոյացնելու համար, ապա ճշմարիտ հաատացեալի համար Մկրտութիւնը սկիզբն է Վերին Երուսաղէմի, ինչպէս ասում էր Պօղոս առաքեալը. «Փրկութեան համար աշխատեցէ՛ք» (Փիլիպ. 2, 12): Նաեւ՝ «Նա ամէն ինչ հնազանդեցրեց Յիսուսի ոտքերի տակ եւ նրան հաստատեց՝ իբրեւ գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրայ, եկեղեցի, որ նրա մարմինն է, «լրումը նրա, ով ամէն ինչ լցնում է ամէն բանի մէջ» (Եփես. 1, 22-23): Եկեղեցու կեանքն է միայն կենդանարար ու փրկարար՝ Քրիստոսով, քանի որ Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է, իսկ մենք «անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից» (Եփես. 5, 30): Մկրտութիւնը մուտքն է Եկեղեցու, որով մկրտուողը դառնում է Մարմնի անդամ եւ Անմահ Գառան զոհաբերութեամբ հաստատուած յաւիտենական թագաւորութեան ժառանգորդ: Աստծու Որդին՝ Իր մէջ ընդունելով մարդկային բնութիւնը մարդուն վերստեղծեց ու հնարաւորութիւն տրուեց Իր Մարմնի՝ Եկեղեցու մարմնակից անդամ դառնալ՝ «Քրիստոս Յիսուսի միջոցով ժառանգակից, նոյն մարմնի անդամ եւ նրա խոստմանը հաղորդակից» (Եփես. 3, 6): «Իսկ եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է» (Բ. Կորնթ. 5, 17),- ասում է Պօղոս առաքեալը: Մկրտուել չի նշանակում միայն մաքրուել, այլ Ս. Մկրտութեան խորհրդով միանալ Եկեղեցու Մարմնին եւ որպէս պտղաբեր ճիւղեր հաստատուել ճշմարիտ Որթատունկի՝ Քրիստոսի վրայ (տե՛ս Յովհ. 15): Խոստովանել, վկայել, ապաշխարել ու խօսքով մաքրուել կարելի է բազում անգամներ, իսկ մկրտուել, այսինքն՝ վերստին ծնուել միայն մէկ անգամ (տե՛ս Եփես. 4, 5):

Սբ. Կիւրեղ Երուսաղէմացին *ասում է. «Այս բոլորից յետոյ առաջնորդուէ՛ք դէպի Մկրտութեան սուրբ Աւազանը, ինչպէս որ Քրիստոս խաչից վար բերուելով դրուեց մեր առջեւը գտնուող այս գերեզմանը, եւ եթէ ձեզանից իւրաքանչիւրին հարց տրուի, թէ արդեօք հաւատո՞ւմ է Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, դուք հաւատով մօտեցէ՛ք փրկարար խոստովանութեանը՝ երեք անգամ սուզուելով ջրի մէջ Իսկ փրկարար այդ ջուրը ձեզ համար հանդիսանում է թէ՛ գերեզման եւ թէ՛ մայր: Այս առիթով Սողոմոնն ասել է. «Ծնուելու ժամանակը եւ մեռնելու ժամանակը»: Իսկ ձեր դէպքում հակառակը՝ մեռնելու ժամանակը եւ ծնուելու ժամանակը: Այս երկուսի ստեղծողն ու նպաստողը եղած է միեւնոյն ժամանակը: Ուստի, մահուան ուղեկիցը եղել է ձեր ծնունդը»*[1]:

1 Կիւրեղ Երուսաղիմացի, Կոչումն Ընծաութեան, Էջմիածին, 2007, էջ 368:

Ինչո՞ւ են մկրտւում աղջիկները, եթէ Հին Ուխտի թլփատութեան օրէնքը, որ նախատիպ էր Նոր Ուխտի Մկրտութեան, նրանց չէր վերաբերում

Եթէ Հին Ուխտի թլփատութիւնն ընդունենք որպէս մանուկների Մկրտութեան նախատիպ եւ ճշմարտութեան հաստատման գրաւական, ուրեմն արդեօք հակասութիւն կամ անարգութիւն չէ՞, երբ միայն ութօրական արու զաւակը կարող էր թլփատուել ու ստանալ քաղաքացիութեան իրաւունք, իսկ անչափահաս աղջիկները՝ ոչ։ Արդեօ՞ք Աբրահամի ուխտը ներառում է հրեայ աղջիկներին։ Ինչպէ՞ս են կանայք ընդգրկւում արուական կողմնորոշում ունեցող ուխտի մէջ, որն սկսւում է Աբրահամից եւ թլփատութիւնից։ Մենք գիտենք, որ համաձայն Աստուածաշնչի «Ծննդոց» գրքի՝ թլփատութիւնն արւում էր արու զաւակների ծննդեան ութերորդ օրը։

*Կողոսացիներին ուղղուած իր նամակում Պօղոս առաքեալը նշում է հետեւեալը. «**Դուք անձեռագործ թլփատութեամբ թլփատուեցիք հաւատով՝ մերկանալով մեղանչական մարմնից Քրիստոսի թլփատութեամբ. թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք՝ Աստծու զօրութեանը հաւատալով, որը նրան յարութիւն տուեց մեռելներից»** (Կող. 2, 11-12)։ Առաքեալն այստեղ պարզ յայտնում է, որ Հին Ուխտի թլփատութիւնը փոխարինուեց Նոր Ուխտի Մկրտութեամբ։ Կարելի՞ է ասել, թէ թլփատութեամբ Աստուած ուխտ հաստատեց միայն Աբրահամի ու նրա արու զաւակների միջեւ, իսկ կանայք եւ աղջիկներն ընդհանրապէս դուրս մնացին այս կրօնական ուխտից։ Բայց գուցէ Աստծու հետ կապ հաստատելու համար Սառան եւ միւս մայրերն ունէին իրենց իւրայատուկ կրօնական սովորութիւններն ու աւանդոյթները։*

Հին Ուխտի կարեւոր խոստումն այն էր, որ Աբրահամը կը լինի պտղաբեր ու կը դառնայ ազգերի հայր: Հետեւաբար, կանանց մայր լինելու դերը, ուխտի իմաստով, կենտրոնական նշանակութիւն ունէր: Աստուած Սառային ուղիղ չի դիմում Ծննդոց գլխում, երբ հաստատում է թլփատութեան օրէնքը, սակայն խօսելով Աբրահամի հետ՝ փոխում է Սառայի անունն այնպէս, ինչպէս որ փոխել էր Աբրահամի անունը: Սկզբում նա կոչւում էր «Սարա» ("Sarai," שָׂרַי), որ եբրայերէնով նշանակում է «իմ արքայադուստր» կամ «ազնուական մի կին»: Աւելի ուշ նա կոչուեց «Սառա» ("Sarah," שָׂרָה), այսինքն՝ «արքայադուստր»: «Սարա» («իմ արքայադուստր») անունը վերաբերում էր միայն մի ընտանիքին, իսկ փոխած «Սառա» անունն արդէն ներառում էր շատ ընտանիքներ՝ «Աբրամ» անունից «Աբրահամ» փոխարինելու հետ զուգահեռ: Աստուած ասում է Աբրահամին. «**Քո կին Սարայի անունն այլեւս Սարա թող չլինի, այլ Սառա թող լինի նրա անունը: Ես կ'օրհնեմ նրան եւ նրա միջոցով քեզ զաւակ կը պարգեւեմ, ես կ'օրհնեմ նրան, նա ազգերի նախամայր կը դառնայ, նրանից ցեղերի թագաւորներ կը ծնուեն**» (Ծնն. 17, 15-16): Նոյնիսկ այն ժամանակ, երբ Աբրահամը կասկածում էր Սառայի յղիանալու ունակութեան վրայ, եւ ենթադրելով, թէ Աստծու Ուխտը շարունակուելու է Իսմայէլի միջոցով, Աստուած հաւաստիացնում է նրան, թէ այն կատարուելու է Սառայի որդի Իսահակի միջոցով: Այսպիսով, Աստուած պարզ յայտնում է, թէ Աբրահամի ոչ բոլոր սերունդներն են այս Ուխտի մասը կազմում, այլ միայն նրանք, ովքեր Սառայի միջոցով են Ուխտի մասը կազմել: Սա ընդգծում է Սառայի կարեւորագոյն ու վճռական դերը Աստծու կնքած Ուխտի մէջ: Սառան եւ Աբրահամը ֆիզիկապէս հաւասար անդամակիցներ են Աստծու Ուխտի մէջ:

Թլփատութիւնն Աստծու Ուխտի նշանն էր, որ ցոյց էր տալիս, թէ Աբրահամի սերունդն Աստծու հետ ուխտեալ յարաբերութիւն ունեցող միակ ժողովուրդն էր: Այն նախատեսուած էր ոչ թէ միայն

Աստծու եւ թլփատուած անհատի միջեւ, այլ Աստծու ողջ ժողովրդի հետ։ Ծննդոց գրքի 17-րդ գլխի 9-11 համարները ցոյց են տալիս, որ երբ տղամարդիկ թլփատուեցին, ողջ ազգը համարուեց Ուխտի նշանը կրող ժողովուրդ։ Թլփատութեան Ուխտը երբէք չի եղել միայն տուեալ անձի՝Աստծու Ուխտի մէջ լինելու անդամակցութեան նշան։ Քանի որ կանայք ազգի մասն են, նրանք համարւում էին Աստծու Ուխտի ժողովուրդ՝ տղամարդկանց ներկայացուցչի միջոցով։ Հրէական Թալմուդում նշուած է, որ հրեայ կանայք համարւում են բնական կերպով թլփատուած։ Իսկ երբ Մկրտութիւնը՝ որպէս Նոր Ուխտի նշան, փոխարինեց թլփատութեանը, այն շարունակեց ներկայացնել Աստծու եւ նրա ժողովրդի միջեւ տեղի ունեցած Ուխտը։ Սակայն Մկրտութիւնը կիրառւում է հաւասարապէս թէ՛ տղամարդկանց եւ թէ՛ կանանց համար՝ անկախ նրանց տարիքի։

Հին Կտակարանում կանանց համար գոյութիւն ունէր ակնյայտ ֆիզիկական պատճառներ թլփատութիւն չկիրառելու, սակայն չկայ ոչ մի ֆիզիկական խոչընդոտ Մկրտութեան համար։ Նոր Ուխտի յայտնութեան լոյսի ներքոյ եւ՛ տղամարդիկ, եւ՛ կանայք հաւասարապէս ստանում են ուխտի բոլոր օրհնութիւնները միայն Քրիստոսի հետ միանալու միջոցով։ Քրիստոսի մէջ մենք արդէն համարւում ենք մէկ, ազատ, արական, ժառանգներ՝ ըստ խոստման, թլփատուած հրեայ՝ Յիսուսի անունով, որը կատարելապէս իրագործեց Աստծու ուխտն ու ժառանգեց բոլոր օրհնութիւնները (տե՛ս Գաղ. 3, 26-29։ Ֆիլիպ. 3, 3։ Կող. 3, 11)։ Ինչպէս ասում է Պօղոս առաքելը. «***Այլեւս չկայ հրեայ, ոչ էլ հեթանոս, թլփատութիւն եւ անթլփատութիւն, բարբարոս, սկիւթացի, ծառայ, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամէն ինչ է ամէն բանի մէջ***» (Կող. 3, 11)։ Իսկ փիլիպեցիներին ասում է. «***Քանզի իսկական թլփատութիւնը մենք ենք, որ Աստծուն ծառայում ենք Հոգով եւ պարծենում ենք Քրիստոս Յիսուսով, իսկ մարմնով չենք պարծենում***» (Փիլիպ. 3, 3)։ Ուրեմն, ո՞րն էր կանանց այլընտրանքն արուական թլփատութեան

դիմաց: Այս առումով, Ուխտի մեծագոյն նշանն Աստծու խոստումի կատարումն էր, որ Սառան պիտի զաւակ ունենար ու դառնար ազգերի նախամայր: Սառայի յղիութիւնն ու Իսահակի ծնունդը շոշափելի ապացոյցն են, որ Աստուած կատարում է ուխտերի բոլոր խոստումները: Թերեւս մայրերը, Սառայից՝ որպէս նոր կեանք կրողից յետոյ, շարունակաբար կատարում են ուխտը՝ Աստծու, Աբրահամի եւ Սառայի ժառանգների միջոցով հիմնականում ֆիզիկական եղանակով: Հնարաւոր է, ինչպէս որ թլփատութեան արարողութեամբ տղամարդիկ ֆիզիկական ձեւով ներգրաւում են Ուխտի մէջ, նոյնպէս եւ կանայք ֆիզիկական ձեւով իրականացնում են ուխտն իրենց մարմնում որովայնում կրելով յաջորդ սերունդը:

Աստծու Հին Ուխտը լոկ մարմնաւոր նշանն էր սրտի թլփատութեան (տե՛ս Երկ. Օր. 10, 12-22: 30, 1-10): Քրիստոսի Նոր Ուխտի մէջ հաւատացեալները մտնում են ո՛չ թէ ըստ մարմնի, այլ ըստ հոգու՝ Քրիստոսով անձեռագործ թլփատութեամբ, որտեղ չկայ ո՛չ արու, ո՛չ էլ էգ: Սբ. Պօղոսն ասում է. «**Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք. ուրեմն խտրութիւն չկայ ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի. որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս: Իսկ եթէ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Աբրահամի սերունդ էք, ժառանգներ՝ ըստ խոստման**» (Գաղ. 3, 27-29): Հետեւաբար, բոլոր մանուկները, անկախ նրանց տարիքից, պէտք է մկրտուեն ու դառնան Նոր Ուխտի ժողովուրդ:

Ի՞նչ պէտք է պատասխանենք նրանց, ովքեր ասում են, թէ «անձեռագործ թլփատութիւնը» խորհրդանշում է ո՛չ թէ Մկրտութիւնը, այլ սրտի հոգեւոր թլփատութիւնը, այսինքն՝ մեղքերի «թլփատութիւնը»

Մանուկներին պէտք է մկրտել, որովհետեւ Հին Ուխտի ժամանակ նրանց թլփատում էին, իսկ Նոր Ուխտի Մկրտութիւնը փոխարինում է Հին Ուխտի թլփատութեանը: Գրուած է. «Դուք ***անձեռագործ թլփատութեամբ թլփատուեցիք հաւատով՝ մերկանալով մեղանչական մարմնից Քրիստոսի թլփատութեամբ. թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք Աստծու զօրութեանը հաւատալով»*** *(Կող. 2, 11-12): Սակայն ոմանք պնդում են, թէ «անձեռագործ թլփատութիւնը» խորհրդանշում է ոչ թէ Մկրտութիւնը, այլ՝ սրտի հոգեւոր թլփատութիւնը, այսինքն՝ մեղքերի թլփատութիւնը:*

«Մեղքերի թլփատութիւնը» Մկրտութիւնն է, որովհետեւ գրուած է. ***«Զեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար»*** *(Գործք 2, 38): Ուրեմն, մեղքերը Մկրտութեամբ են թլփատւում եւ Մկրտութիւնը փոխարինում է Հին Ուխտի թլփատութեանը: Հետեւաբար, մանուկները պէտք է մկրտուեն, որպէսզի թողութիւն ստանան, սրբուեն եւ ազատուեն ժառանգած սկզբնական մեղքից: Քրիստոս եկաւ կորսուածը փրկելու (տե՛ս Մատթ. 18, 11): Աստուած Իր Որդուն աշխարհ ուղարկեց,* ***«որպէսզի աշխարհը նրանով փրկուի»*** *(Յովհ. 3, 17: Ղուկ. 9, 56): Այդ երբուանից աշխարհն իր մէջ չի ընդգրկում մանուկներին: Իսկ եթէ Քրիստոս փրկում է մանուկներին, ուրեմն պէտք է, որ նրանք պատկանեն Նոր Ուխտին, այսինքն՝ Սուրբ Եկեղեցուն: Ի՞նչ հիմքեր ունենք հաւատալու, թէ*

մանուկները դէմ են Քրիստոսին միանալուն:

Ուրեմն մանուկներն այնքան չա՞ր են, որ տեղ չունեն Եկեղեցում ու նրանց Մկրտութիւնը դիտւում է որպէս բռնութիւն իրենց կամքի դէմ: Յանկացած մարդ, ով կարդացել է Աստուածաշունչը, գիտէ, թէ Հին Կտակարանում կան Նորկտակարանային Մկրտութեան մի քանի նախատիպեր: Եւ Հին Կտակարանի բոլոր այն դէպքերն ու օրէնքները, որոնք Նոր Կտակարանի Մկրտութեան նախատիպերն էին, ընդգրկում էին բոլոր անչափահասներին:

Մկրտութեան առաջին նախատիպը Կարմիր ծովի միջով անցնել էր: Ամբողջ Իսրայէլը ծովի միջով անցաւ նորածինների հետ: Պօղոս առաքեալի համար դա արդէն Մկրտութեան նշան է. **«Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ ամպի առաջնորդութեան տակ էին եւ բոլորն էլ ծովով անցան. եւ բոլորը, հետեւելով Մովսէսին, մկրտուեցին ամպ ու ծովի մէջ» (Ա. Կորնթ. 10, 1-2): Եթէ մանուկները մասնակցեցին Հին Կտակարանի Մկրտութեանը, ապա ի՞նչ հիմքով նրանց պէտք է մերժել Նոր Կտակարանի Մկրտութիւնն ստանալու հնարաւորութիւնից:**

Մկրտութեան երկրորդ նախատիպը թլփատութիւնն էր, որն Աստծու ժողովուրդ դառնալու Ուխտի նշանն էր: Համաձայն «Ծննդոց» գրքի՝ դա արւում էր արու զաւակների ծննդեան ութերորդ օրը: **«Դու եւ քեզնից յետոյ գալիք քո զաւակները, սերնդից սերունդ, պէտք է պահէք իմ ուխտը: Սա՛ է իմ ուխտը, որ պիտի պահես իմ եւ քո միջեւ ու քեզնից յետոյ գալիք քո զաւակների միջեւ, սերնդից սերունդ: Ձեր բոլոր արու զաւակները պիտի թլփատուեն, պիտի թլփատէք ձեր անդամների թլիփները, եւ դա թող լինի իմ եւ ձեր միջեւ ուխտի նշանը: Ձեր մանուկները՝ ձեր ցեղերի բոլոր արուները, ընդոծինն ու արծաթով գնուած ստրուկները, ամէն մի օտարածին, որ քո սերնդից չէ, ութօրեայ հասակում պէտք է թլփատուեն: Պէտք է անպայման թլփատուեն քո տան ընդոծինն ու արծաթով գնուած քո ստրուկը: Ձեր թլփատութեան մասին իմ ուխտը թող յաւիտենական ուխտ լինի: Ութերորդ օրը թլիփը չթլփատուած արուն թող վերա-**

նայ իր ցեղի միջից, որովհետեւ խախտած կը լինի իմ ուխտը» (Ծնն. 17, 9-14): Ուրեմն, եթէ մինչեւ Քրիստոս մանուկները կարող էին լինել Աստծու ժողովրդի անդամակից, ուրեմն ինչո՞ւ դա անհնար պիտի լինի Յիսուսի յարութիւնից յետոյ: Քրիստոս եկաւ, որպէսզի մարդկանց ճանապարհն առ Աստուած աւելի հեշտացնի, թէ՞ աւելի դժուարացնի: Արդեո՞ք Քրիստոս եկաւ միայն մեծահասակների համար, թէ՞ նաեւ անչափահասների: Պօղոս առաքեալը պարզ ասում է, թէ թլփատութիւնը փոխարինուեց Մկրտութեամբ. ***«Դուք անձեռագործ թլփատութեամբ թլփատուեցիք հաւատով՝ մերկանալով մեղանչական մարմնից Քրիստոսի թլփատութեամբ. թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք Աստծու զօրութեանը հաւատալով, որը նրան յարութիւն տուեց մեռելներից»*** *(Կող. 2, 11-12):*

Յայտնի է, որ թլփատութեան ժամանակ մարմնի մի մասը կտրւում է ու մեռնում: Մկրտութեան ժամանակ սա խորհրդանշում է տեղի ունեցող մահուան խորհուրդը: Եւ ինչպէս որ թլփատութիւնը մի նշան էր, որը հնարաւոր չէր վերացնել, այդպէս էլ Մկրտութիւնը չի կարող ջնջուել: Ինչպէս որ թլփատութեան ժամանակ է արիւն հեղւում, այդպէս էլ Մկրտութեան ժամանակ վերստին ծնուած նոր կեանքը հիմնուած է Քրիստոսի հեղած Արեան վրայ:

Ինչպէ՞ս է հնարաւոր, որ Հին Ուխտը Նորի փոխուելու արդիւնքում մանուկներն այլեւս ի վիճակի չեն դառնալու խորհրդաւոր Մարմնի անդամը: Բայց չէ՞ որ Հին Ուխտն էլ հաստատուեց ոչ թէ Մովսէսի եւ Ահարոնի համար, այլ՝ Իսրայէլի ամբողջ ժողովրդի: Այդպէս էլ Փրկիչը Նոր Ուխտը հաստատեց ոչ թէ առաքեալների, այլ Աստծու նոր ժողովրդի համար (տե՛ս Ա. Պետր. 2, 10): Քրիստոս հրաւիրում է բոլորին: Աստուած Իր շնորհն ու պաշտպանութիւնը տալիս է ոչ թէ միայն մէկ մարդուն, այլ մարդկանց համայնքին՝ Եկեղեցուն: Հետեւաբար, շատ կարեւոր է հասկանալ, որ թէ՛ Հին Ուղտի թլփատութիւնը եւ թէ՛ Մկրտութիւնը միայն անձնական կամ ընտանեկան միջոցառում ու պահանջն չէ, այլ համամարդկային

իրադարձութիւն է: Ուխտի մէջ մտնել նշանակում է ստանալ Աստծու սեփական ժողովրդի քաղաքացիութեան իրաւունքը: Աստուած սիրում է բոլոր մարդկանց, բայց Աստծու համար Իսրայէլը յատուկ ժողովուրդ էր, որովհետեւ Ուխտի ժողովուրդ էր: Հետեւաբար, թլփատուածները յատուկ էին Տիրոջ համար (տե՛ս Ես. 44, 1-3: 43, 1-5: Երկ. Օր. 32, 9-12: Զաք. 2, 8):

Փրկութիւն ձեռք բերելու համար պէտք է մտնել այն սրբատեղին՝ Եկեղեցին, որի միջոցով տրւում է շնորհի լոյսն այս աշխարհում: Եկեղեցին Աստծու ժողովուրդն է: Իսկ կարո՞ղ է արդեօք լինել ժողովուրդ առանց մանուկների: Հին Ուխտի օրէնքները, ընտրուածութիւնը, իրաւունքներն ու խոստումները տրուեցին նաեւ երեխաների համար: Աստծու Ուխտի մէջ մտնելու համար առաջին հերթին նշանակում էր միանալ Աստծու ընտրեալ ժողովրդին, իսկ մարդիկ Աստծու ժողովուրդ էին դառնում դեռ մանուկ հասակից: Դրա համար բաւական չէր, որ երեխան ծնուեր հրեայ ընտանիքում. անհրաժեշտ էր կատարել թլփատութեան խորհուրդը:

Երեխան որքանո՞վ էր տեղեակ Աստծու ժողովրդին անդամակցելու այս իրողութեանը: Իրօք, նա այս մասին ոչ մի հասկացողութիւն չուներ, սակայն թլփատւում էր իր ծնողների հաւատով եւ դառնում Աստծու ժողովրդի անդամ ու կրողը բոլոր այն խոստումների, որոնք Աստուած տուեց Աբրահամին: Նոյնպէս էլ այսօր, բաւարար չէ, որ երեխան ծնուի քրիստոնէական ընտանիքում, անհրաժեշտ է կատարել սուրբ Մկրտութեան խորհուրդը: Այս խորհուրդներով ծնողներն իրենց երեխաներին ներառում են Աստծու ժողովրդի մէջ:

Իսկ ի՞նչ կարելի է ասել Կարմիր ծովն անցնող ծնողների գրկին գտնուող մանուկների մասին: Չէ՞ որ նրանք իրենց ծնողների հաւատով ստրկութիւնից փրկուեցին ու ծովն անցնելով մկրտուեցին՝ չհասկանալով, թէ ի՞նչ էր տեղի ունենում: Նոյնպէս հրեայ երեխաները Եգիպտոսի դաժան մահուան գիշերը փրկուե-

ցին զատկական արեամբ, երբ Աստուած Մովսէսին հրամայեց մորթել մէկ տարեկան եւ արատ չունեցող արու գառ եւ արիւնը քսել հրեաների դռների սեմերին: Զատկական գառան արիւնը խորհրդանշում էր Տէր Յիսուս Քրիստոսի արիւնը, որով մենք փրկութիւն ընդունեցինք, ինչպէս Պողոս առաքեալն է ասում. **«Քանզի Քրիստոս՝ մեր Զատիկը, մորթուեց»** (Ա. Կորնթ. 5, 7): Եւ ինչպէս Հին Ուխտի երեխաները պաշտպանուեցին ու փրկուեցին մահուան հրեշտակից, այդպէս էլ քրիստոնէական դարաշրջանում երեխաները պաշտպանւում ու փրկւում են ճշմարիտ Գառնուկի Արեամբ եւ Նրա կնիքով, այսինքն՝ Մկրտութեամբ: Մանուկներն ինչ գիտէին Աստծու եւ Մովսէսի միջեւ եղած Ուխտի կամ զատկական գառան արեան միջոցով փրկուելու մասին: Անշուշտ, նրանք ոչինչ էլ չգիտէին, բայց փրկուեցին իրենց ծնողների հաւատով, ովքեր հաւատացին զատկական գառան արեանը՝ մահուանից փրկուելու համար: Թլփատութեամբ, Կարմիր ծովով անցնելով ու զատկական գառան արեամբ փրկուած մանուկներն այս բոլորի նշանակութիւնն իմանում էին աւելի ուշ՝ արդէն գիտակցական տարիքում: Հետեւաբար, Ուխտի պատկանելիութիւնն աստուածընտիր ժողովրդի համար դատարկ ձեւականութիւն չէր: Այն պայմանագիր կամ համաձայնագիր չէր առանձին անհատների համար:

Ինչպէս տեսնում ենք, այն մի աւելի մեծ բան էր՝ մուտք դէպի համամարդկային Ուխտ Աստծու հետ: Իսկ լինել Ուխտի մէջ՝ նշանակում է Աստծու հովանին մտնել, ապրել աստուածային շնորհի մէջ: Հին Ուխտի թլփատութիւնը, ըստ Պողոս առաքեալի վկայութեան, Նոր Ուխտի Մկրտութեան խորհրդանիշն էր: Իսկ Նոր Ուխտը մարդուն առաւել մօտեցրեց Աստծուն: Եթէ Հին Ուխտի գոյութիւնն ու խոստումները երեխաների համար էին, ապա ինչո՞ւ Նոր Ուխտի «ընտիր ցեղը, թագաւորութիւնը, քահանայութիւնը, սուրբ ազգը ու սեփական ժողովուրդը» (տե՛ս Ա. Պետր. 2, 9) փոքրիկներին պիտի զրկէ այն խոստումներից, որոնց մասին Պետրոս առաքեալն ասում է. **«Դրանցով մեծամեծ եւ թանկագին**

խոստումներ պարգեւուեցին մեզ, որպէսզի հաղորդակից լինէք աստուածային բնութեանը» (Բ. Պետր. 1, 4)։ Ինչո՞ւ նորկտակարանային մանուկները չեն կարող «Քրիստոս Յիսուսի միջոցով ժառանգակից, նոյն մարմնի անդամ եւ նրա խոստմանը հաղորդակից լինեն Աւետարանով» (Եփես. 3, 6)։

Աղանդաւորական ուսմունքները մանուկներին չմկրտելով զրկում են նրանց Աստծու ժողովուրդ լինելուց, հետեւաբար նաեւ՝ եկեղեցուց։ Բայց այս աշխարհում հոգեւորի նկատմամբ չէզոքութիւն չի կարող լինել։ Կայ կա՛մ միայն խաւար, կա՛մ միայն լոյս, սատանայի իշխանութիւն, կա՛մ Աստուած (Գործք 26, 18)։ Նա, ով չի ուզում իր զաւակներին միացնել Տիրոջը, թողնում է նրանց չար ոգիների ու զօրութիւնների ազդեցութեան ներքոյ։ Եթէ մանուկն ինքը չի կարող մտնել փրկութեան եկեղեցի, պէտք է նրան գրկելով ներս բերել։ Առաւել եւս, երբ Պօղոս առաքեալն ասում է, թէ Մկրտութիւնն էլ, ըստ Նոյեան տապանի օրինակի ապրեցնում է մեզ (տե՛ս Ա. Պետր. 3, 20-21)։ Ուստի, մտածեցէ՛ք. արժէ՞ արդեօք մեր փոքրիկներին փրկարար տապանից դուրս վտարել։

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ պէտք չէ մկրտել մանուկներին, քանի որ նրանք չեն կարող ապաշխարել ու հաւատալ

*Նախորդիւ խօսեցինք այն մասին, թէ ինչու են ոմանք կարծում, որ եթէ մանուկները չունեն Աստծուն դաւանելու գիտակցութիւն, ուրեմն նրանց մկրտել հարկաւոր չէր, Մանուկները գուցէ չունեն գիտակից հաւատք, սակայն չունեն նաեւ անհաւատութիւն: Չի կարելի նրանց համարել անկարող ընդունելու Աստծու շնորհը միայն այն պատճառով, որ չափահասների նման չեն կարող հաւատալ: Ասում են, թէ մանուկները չեն կարող ապաշխարել, հետեւաբար նրանց պէտք չէ մկրտել. ապա մէջբերում են Պօղոս առաքեալի խօսքը. «**Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար**» (Գործք 2, 38): Նաեւ ասում են, թէ ինչպէս կարող է Մկրտութիւնը կատարուել առանց հաւատի կամ ըմբռնման. չէ՞ որ գրուած է. «**Ոմանք յօժարութեամբ ընդունելով նրա խօսքը, մկրտուեցին**» (Գործք 2, 41), եւ դարձեալ կարդում են. «**Ի՞նչն է ինձ արգելում մկրտուել: Եթէ քո ամբողջ սրտով հաւատում ես, կարելի է**» (Գործք 8, 37): Այս խօսքերից եզրակացնում են, թէ քանի որ մանուկները չեն կարող գիտակցական հաւատ ունենալ, ուրեմն նրանք չեն կարող Աստծու խօսքը սրտանց ընդունել, ապաշխարել ու հաւատալ: Ուստի չի կարելի նրանց մկրտել:*

Նախ, այստեղ գրուած է. «Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի»: «Իւրաքանչիւր» բառը ներգրաւում է բոլորին՝ չափահասներին եւ անչափահասներին: Առաքեալի խօսքը՝ «Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով», համաձայն յունարէնի իմաստային թարգմանութեան, այսպէս է հնչում. «Ապաշխարեցէ՛ք եւ

*ձեզանից ամէն մէկը եւ ձերիններից ամէն մէկը թող մկրտուի»: «Ձերիններից» ասելով՝ հասկացւում է նրանց ընտանիքի միւս անդամներին, որոնք ներկայ չէին Պետրոսի պատգամի ժամանակ, եւ որոնց մէջ ընգրկւում են նաեւ մանուկները: Եւ սա աւելի յստակ կը դառնայ, եթէ կարդանք խօսքի շարունակութիւնը, որն ասում է. «**Որովհետեւ խոստումը ձեզ համար է, ձեր որդիների եւ բոլոր հեռաւորների համար, որոնց կը կանչի մեր Տէր Աստուածը**» (Գործք 2, 39): «Ձեր որդիների» համար ասելով՝ արդեօք Պօղոս առաքեալը նկատի չունէ՞ր մանուկներին: Պարզ է, որ «որդիներ» բառի մէջ կային բոլոր տարիքի մանուկները: «Որդիներ» բառի համար գործածուած է յունարէն* **«τέκνον»** *(teknon) բառը, որն իր մէջ ներառում է բոլոր տարիքի մանուկներին, նոյնիսկ՝ նորածիններին: Անշուշտ մանուկները չէին կարող հասկանալ Փրկչի օրհնութեան շնորհն ստանալու օգուտը եւ կարեւորութեան արժէքը, սակայն այն ծնողները, որոնք հաւատով ընդունեցին Աստծու խօսքն ու հասկացան Քրիստոսի օրհնութեան շնորհի զօրութիւնը, իրենց զաւակներին բերում էին Քրիստոսի մօտ:*

Մանուկներն էլ անխտիր ժառանգել են սկզբնական մեղքը եւ կարիք ունեն նրանից սրբուել, որպէսզի կարենան ժառանգել Աստծու Արքայութիւնը (տե՛ս Յոբ 14, 4: Սաղմ. 50, 7): Ինչո՞ւ պէտք է անչափահասները մեռնեն մեղքերով եւ առանց թողութիւն ստանալու: Անշուշտ մանուկները չէին կարող հասկանալ Փրկչի օրհնութեան շնորհն ստանալու օգուտը եւ կարեւորութեան արժէքը, սակայն այն ծնողները, որոնք հաւատով ընդունեցին Աստծու խօսքն ու հասկացան Քրիստոսի օրհնութեան շնորհի զօրութիւնը, իրենց զաւակներին բերում էին Քրիստոսի մօտ: Հաւատացեալ ծնողներն ու կնքահայրը, երեխային բերելով Մկրտութեան, նրա փոխարէն մեղքերի թողութիւն են խնդրում, որովհետեւ Աստծու շնորհը տրւում է նաեւ ուրիշների հաւատով: Յիսուսի մօտ փոքրիկներին բերեցին, որպէսզի նրանց դիպչի,

*եւ Տէրը «**նրանց վրայ ձեռքը դրեց եւ օրհնեց նրանց**» (Մարկ. 10, 16)։ Երբ Յիսուս տեսաւ այն չորս մարդկանց հաւատը, որոնք անդամալոյծին բերեցին իր մօտ, ասաց անդամալոյծին. «**Որդեա՛կ, քո մեղքերը քեզ ներուած են**» (Մարկ. 2, 5)։*

*Եկեղեցին անչափահասներին մկրտում է՝ հիմնուելով նրանց ծնողների եւ կնքահօր հաւատի վրայ։ Երբ Սուրբ Գրքում յիշատակւում է ամբողջ ընտանիքների Մկրտութեան մասին, անմտութիւն կը լինէր մտածել, թէ այդ բոլոր ընտանիքներում մանուկներ չկային։ Ահա մի քանի օրինակներ։ Գործք Առաքելոցի մէջ կարդում ենք, թէ Լիդիա անունով ծիրանավաճառ մի կին մկրտուեց իր տան անդամներով «**Եւ երբ որ մկրտուեցին ինքն ու իր տունը**» (Գործք 16, 15)։ Պօղոս առաքեալը մկրտեց Ստեփանոսին իր ընտանիքով. «**Ստեփանոսի ընտանիքն էլ մկրտեցի**» (Ա. Կորնթ. 1, 16)։ Փիլիպպոս բանտապետին մկրտելիս Պօղոս առաքեալն ասում է. «**Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը փրկուես դու եւ քո ամբողջ տունը**» (Գործք 16, 31)։ Ուստի բանտապետի հաւատը դարձաւ նրա ամբողջ ընտանիքի Մկրտութեան պատճառը. «**Եւ ինքն ու իւրաքանչիւրը՝ բոլորն էլ անմիջապէս մկրտուեցին**» (Գործք 16, 32-33)։ Կարո՞ղ էին արդեօք այս բոլոր ընտանիքներն առանց մանուկների լինել։ Ո՞վ կարող է ասել, թէ նրանց մէջ չկային մանուկներ, եւ ո՞վ կարող է ասել, որ կային մանուկներ, բայց չմկրտուեցին իրենց ծնողների հետ։ Ո՞ր հայրը կամ մայրը պիտի սրտով ու հոգով ընդունէր Քրիստոսի հաւատքը եւ մկրտուէր, իսկ իր զաւակներին առանց Քրիստոսի եւ առանց Մկրտութեան թողներ։*

Ինչպէս որ աւետարաններում բժշկութեան հրաշքի համար մանուկների դէպքում ծնողներից էր հաւատ պահանջւում, այդ-պէս էլ Մկրտութեան համար նոյն հաւատը պահանջւում է մկրտուող մանուկների ծնողներից։ Քանանացի կնոջ աղջկան, լուսնոտ պատանուն, Յայրոսի աղջկան, ազնուական մարդու որդու բժշկութիւններն էլ կատարուեցին՝ ծնողների հաւատի վրայ

հիմնուելով։ Ուրեմն, անչափահասները կարող են մկրտուել՝ իրենց ծնողների հաւատի վրայ հիմնուելով։

Պօղոս առաքեալը հրահանգում է. «**Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը**» (Գործք 2, 8)։ Այստեղ յստակ բաժանում կայ Մկրտութեան անհրաժեշտ պայմանների եւ նպատակի միջեւ։ Ապաշխարութիւնը եւ հաւատը միջոցներ են մերժելու եւ պայքարելու անհաւատութեան, սնահաւատութեան, երկմտութեան, մեղսալից սովորութիւնների դէմ եւ այլն։ Ապաշխարութիւնն ու հաւատը մեղքերի թողութեան համար անհրաժեշտ պայմաններն են։ Իսկ այս բոլորի նպատակն է՝ Սուրբ Հոգու փրկարար պարգեւն ընդունելը եւ Իր հետ հաղորդակցութիւնը։ Քանի որ անչափահաս մանուկը չունի անձնական մեղքեր կամ անհաւատութիւն, ուրեմն նրա համար այս միջոցներն ու պայմանները հարկաւոր չեն։ Եւ քանի որ նա կարող է ընդունել Սուրբ Հոգու պարգեւը, ուրեմն որեւէ պատճառ չկայ մանուկին զրկելու Ս. Մկրտութեան խորհրդի կարեւորագոյն նպաստից։ Իսկ Աստծու՝ չափահասներին տրուած պատուիրանները չեն կարող անչափահաս մանուկների դատաւորը լինել։ Օրինակ՝ Պօղոս առաքեալը պատուիրում է. «**Արդ, ուտէք թէ խմէք, կամ ինչ էլ անէք, ամէն ինչ արէ՛ք Աստծու փառքի համար**» (Ա. Կորնթ. 10, 31)։ Բոլոր պատուիրանները սուրբ են ու բոլորի համար են։ Բայց ի՞նչ անմտութիւն կը լինէր, եթէ ասէինք, թէ մանուկներին պէտք է արգելել «ուտել, խմել եւ որեւէ գործ անել», մինչեւ որ դառնան ընդունակ՝ ամէն ինչ Աստծու փառքի համար անելու։ Ինչպէ՞ս կարող է մարդասէր եւ ամենակալ Աստուած, ցանկալով չափահասների փրկութիւնը, երկնքի Արքայութեան դուռը փակել մանուկների առաջ, որոնք ո՛չ թէ իրենց մեղքի, այլ միայն տարիքի պատճառով չեն կարող գիտակցաբար հաւատալ։ Եթէ ծնողների հոգատարութեամբ փոքրիկները չհասկանալով ստանում են մարմնաւոր կերակուրը եւ իրենց ներքին հաւանութեամբ (տե՛ս

Հռոմ. 7, 22) վստահում են իրենց կերակրողներին, այդպէս էլ նրանք կարող են հոգեւոր կերակուրը եւ աստուածային շնորհն ստանալ ծնողների կամ ուրիշների հաւատով: Երեխան չգիտի կաթի ծագումն ու յատկութիւնները, բայց չէ՞ որ առանց դրա նա չի կարող ապրել:

*Եթէ Հին Ուխտի ժամանակ մայրը կարող էր իր որդուն Աստծուն նուիրելով, խոստանալ այդպիսի մի ծառայութիւն, եւ Աստուած էլ ընդունում էր, ապա ինչո՞ւ Նոր Ուխտի ծնողները չեն կարող նոյնն անել իրենց զաւակների համար: Աննան, նախքան Սամուէլի ծնունդը, Աստծու հետ ուխտ անելով ասաց. «**Իսրայէլի Տէ՛ր Աստուած, զօրութիւնների՛ Տէր, եթէ կամենաս տեսնել քո աղախնի տառապանքները, ինձ յիշես ու արու զաւակ տաս քո աղախնին, մինչեւ նրա մահուան օրը քեզ կը նուիրեմ նրան, նա գինի չի խմի ու չի հարբի եւ նրա գլխին ածելի չի դիպչի**» (Ա. Թագ. 1, 11): Աստուած լուսաւորում է երեխաներին նոյնիսկ մինչեւ նրանց ծնունդը: Տիրոջ հրեշտակը Զաքարիային ասաց. «**Քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կը ծնի քեզ... եւ մօր որովայնից սկսած Սուրբ Հոգով կը լցուի եւ Իսրայէլի որդիներից շատերին կը դարձնի դէպի իրենց Տէր Աստուածը**» (Ղուկ. 1, 11-16): Հին Կտակարանում տեսնում ենք, թէ ինչպէս իսրայէլացիները բոլոր անդրանիկ զաւակներին 40-րդ օրը նուիրում են Աստծուն: Ծնողներն Աստծուն խոստում էին տալիս երեխաների ծնուելուց առաջ, իսկ Աստուած օրհնում էր նրանց մտադրութիւնները. «**Իսրայէլի Տէ՛ր Աստուած, զօրութիւնների՛ Տէր, եթէ կամենաս տեսնել քո աղախնի տառապանքները, ինձ յիշես ու արու զաւակ տաս քո աղախնին, մինչեւ նրա մահուան օրը քեզ կը նուիրեմ նրան, նա գինի չի խմի ու չի յարբի եւ նրա գլխին ածելի չի դիպչի**» (Ա. Թագ. 1, 11): «**Ահա դու պիտի յղիանաս եւ մի որդի ծնես... որովհետեւ մանուկը Աստծու ուխտաւոր պիտի լինի հէնց իր մօր արգանդից մինչեւ իր մահուան օրը**» (Դատ. 13, 7):*

Կարո՞ղ են արդեօք մանուկներն այդ տարիքում խոստում տալ Աստծուն, որ ամբողջ կեանքում կը ծառայեն Իրեն ինչքան որ

ապրեն (տե՛ս Ելք 13, 2։ Ա. Թագ. 1, 28)։ Աստծու շնորհն արդէն իսկ մօր որովայնում լուսաւորեց Երեմիա մարգարէին. «Դեռ քեզ ***որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ, եւ դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ ու հեթանոսների վրայ մարգարէ կարգեցի»*** *(Երեմ. 1, 5)։ Դաւիթն ասում է սաղմոսագրքում. «****Դո՛ւ հանեցիր ինձ արգանդից, իմ յոյսը դարձար մօրս կաթով սնուելու օրից։ Քե՛զ յանձնուեցի ես արգանդից, մօրս որովայնից սկսած՝ դու ես Աստուածն իմ»*** *(Սաղմ. 21, 10-11)։ Երբ Մարիամը Եղիսաբէթին էր այցելում, Եղիսաբէթը Մարիամի բարեւը լսեց ու մանուկն իր որովայնում խաղաց, եւ Եղիսաբէթը Սուրբ Հոգով լցուեց եւ ասաց. «****Որովհետեւ ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում»*** *(Ղուկ. 1, 44)։ Պօղոս առաքեալն ասում է. «****Նա ընտրել էր ինձ իմ մօր որովայնից եւ կոչեց իր շնորհների միջոցով»*** *(Գաղ. 1, 15)։*

Նոր Կտակարանում մենք տեսնում ենք, թէ ինչպէ՛ս է Աստուած փրկում մանուկներին իրենց ծնողների հաւատով։ Դիւահարուածը բուժւում է հօր հաւատի շնորհիւ (տե՛ս Մարկ 9, 17-27)։ Քանանացի կնոջ աղօթքով նրա դիւահարուած դուստրը փրկւում է (Մատթ. 15, 22-28)։ Կափառնայումի մէջ մի պաշտօնատարի հաւատով բուժուեց իր հիւանդ որդին (տե՛ս Յովհ. 4, 46-53)։ Աստծու շնորհով մահացած երեխաները վերադարձան կեանքի (տե՛ս Ղուկ. 7։ Ղուկ. 8։ Մարկ 5)։ Ինչպէս տեսնում էք, Սուրբ Հոգու շնորհը կարող է դիպչել երեխաներին անկախ իրենց գիտակցութիւնից։ Ինչո՞ւ մերժել երեխաներին Մկրտութեան եւ Հաղորդութեան շնորհներից։ Եթէ հաւատի գիտակցութիւնը չունենալով հանդերձ մանուկները կարող են Աստծու Սուրբ Հոգու պարգեւները եւ օրհնութիւններն ընդունել, հետեւաբար նրանք կարող են եւ ընդունակ են Աստծու շնորհն ընդունել նաեւ Ս. Մկրտութեան խորհրդով։

Մատթէոսի Աւետարանում գրուած է, թէ Յիսուս կանչեց մի մանուկ, նրան աշակերտների մէջտեղը կանգնեցրեց եւ ասաց. «Եւ

ով որ ինձ հաւատացող այս փոքրիկներից մէկին գայթակղեցնի, նրա համար լաւ կը լինի, որ նրա պարանոցից էշի երկանաքար կախուի, եւ նա սուզուի ծովի խորքը» *(Մատթ. 18, 6)։ Այստեղ Յիսուս շեշտում է. «Ինձ հաւատացող այս փոքրիկներից մէկը»։ Մենք ասում ենք, թէ մանուկները դեռ չունեն հաւատքի գիտակցութիւն։ Բայց ո՞վ է որոշում, թէ ինչպէ՛ս են հաւատում մանուկները։ Եկեղեցու պատմութիւնը լի է սուրբ մանուկների եւ անչափահասների հաւատքի կեանքի հոգեւոր սխրանքներով եւ օրինակներով։ Նրանցից շատերը վարձատրւում են անապական մարմնով եւ իրենց սուրբ նշխարները մնում են անապական՝ մինչեւ Քրիստոսի գալուստը։ Նրանցից էր սուրբ Կիրակոս մանուկը, ով թէեւ երեք տարեկան էր, բայց արժանացաւ մարտիրոսի կոչմանը։ Երբ տեսնում է, թէ ինչպէ՛ս են դահիճները չարչարում իր մօրը, մանուկն սկսեց ուժգին լացել ու բարձր ճիչով կրկնել, ինչ մայրն էր մրմնջում. «Ես քրիստոնեայ եմ եւ պաշտում եմ միայն Տէր Յիսուսին»։ Այն ժամանակ դատաւորը զայրանալով բռնում է երեխայի ոտքերից ու քարէ աստիճաններից ուժգին վար նետում։ Մանուկն իր անարատ արիւնով ողողում է սանդուղտները եւ ընդունում նահատակութեան պսակը։ Ո՞վ է ասում, թէ մանուկներն ընդունակ չեն հաւատալու։*

Ես անձամբ ճանաչել եմ զօրաւոր հաւատք ունեցող մի մանկան, ով ինձ համար եղել է հաւատքի օրինակ։ Նա նոյնպէս երեք տարեկան էր։ Արեան քաղցքեղով մահամերձ իր անկողնում պառկած՝ նա սրտաբուխ աղօթում էր հիւանդանոցում իր հետ գտնուող բոլոր հիւանդ երեխաների համար։ Քանիցս լսել եմ, երբ անասելի ցաւերի մէջ իր փոքրիկ շուրթերով խոստովանում էր իր հաւատը՝ ասելով. «Ես Յիսուսիկին սիրում եմ»։ Գիտակցելով այս աշխարհից իր հեռանալը՝ մահուանից ժամեր առաջ ուրախութեամբ յայտարարեց, թէ ահա այժմ պիտի տեսնի Յիսուսին, եւ մահացաւ աղօթքի ժամանակ։ Դէ հիմա թող մէկը փորձի համոզել, թէ երեխան հաւատքի գիտակցութիւն չի կարող ունենալ։

Տէր Յիսուս Իր աշակերտներին առաքելութեան ուղարկեց՝ ասելով. «**Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ. 28, 19)։ Կարո՞ղ ենք մենք վստայ ասել, թէ երբ Յիսուս աշակերտներին ուղարկեց մկրտելու, նկատի չունէր մանուկներին։ Կարո՞ղ ենք ասել, թէ Յիսուս Իր առաքեալներին ուղարկեց միայն չափահասներին մկրտելու։ Եթէ մենք ծայրայեղօրէն ընդունենք հաւատն իբրեւ նախապայման, ապա Մկրտութիւնից պիտի զրկուեն նաեւ շատ չափահասներ ու մեծահասակներ, ովքեր հոգեւոր ու մտաւոր այնքան կարողութիւն կամ հասունութիւն չունեն՝ ըմբռնելու հաւատքի սկզբունքներն ու խորութիւնները, ինչպէս թերի կրթութիւն եւ սահմանափակ մտաւոր կարողութիւն ունեցողները՝ մտնելու աստուածաբանական խնդիրների խորքը։ Ուրեմն, ո՞րն է այսպիսի անձանց հաւատի ընդունելի չափանիշը։ Արդեո՞ք մանուկների նման նրանց պէտք է զրկել Մկրտութիւնից։

Յիսուս ասում է. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։ Արդեօք այս ասելով՝ Տէր Յիսուս նկատի չունէր մանուկներին։ Յիսուսի խօսքերը կասկած չեն թողնում, որ այստեղ Նա խօսում է Մկրտութեան մասին։ Մկրտութիւնն է, որ մարդկանց առաջնորդում է դէպի երկնքի Արքայութիւն։ Ուրեմն, ինչո՞ւ թոյլ չտալ եւ արգելել, որ մանուկները Մկրտութեամբ մօտենան Արքայութեանը։ Մեզանից ո՞վ չգիտէ, որ Մկրտութեամբ ենք դառնում Սուրբ Հոգու տաճար։ Մկրտուելուց յետոյ է, որ Սուրբ Հոգին սկսում է գործել մեր մէջ։ Երբ արգելենք, որ մանուկները մկրտուեն, արգելք կը դառնանք Սուրբ Հոգուն՝ գործելու եւ բնակուելու նրանց մէջ եւ նրանց տաճար դարձնելու։ Եւ վերջապէս, չափահասներից ո՞վ կարող է ասել, թէ ինքն անչափահասներից աւելի մաքուր տաճար է լինելու Սուրբ Հոգու բնակութեան համար։

Ճի՞շդ է, որ քրիստոնեաների զաւակներին պէտք չէ մկրտել, քանի որ նրանք սուրբ են

*Կրօնական որոշ ուղղութիւններ պնդում են, թէ քրիստոնեաների զաւակները սրբուած են սկզբնական մեղքից, եւ նրանց մկրտել պէտք չէ, քանի որ գրուած է. «**Որովհետեւ անհաւատ մարդը իր կնոջո՛վ սուրբ է. սուրբ է եւ անհաւատ կինը իր մարդո՛վ. ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ կը լինեն. մինչդեռ հիմա սուրբ են**» (Ա. Կորնթ. 7, 14)։ Պօղոս առաքեալն այս նոյն համարում իրարից բաժանում է «պիղծ» ու «սուրբ» որդիներին։ Նոր Կտակարանում չմկրտուածները երբէք չեն կոչուել «սուրբ»։ Արդեօք կարո՞ղ են սուրբ համարուել այն մարդիկ, ովքեր դուրս են մնում Աստծու Ուխտից եւ Եկեղեցուց, ովքեր հաստատուած չեն սրբութեան միակ արմատի՝ Քրիստոսի վրայ։*

«Ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ կը լինեն» խօսքը ցոյց է տալիս, թէ Պօղոս առաքեալը մանուկներին սուրբ է կոչում ոչ ըստ բնութեան։ Քրիստոնեաների զաւակներին սուրբ կոչելով առաքեալը վկայում է, որ նրանք պատկանում են Քրիստոս Յիսուսով սրբուածներին, սուրբեր լինելու կանչուածներին (տե՛ս Ա. Կորնթ. 1, 2), այսինքն՝ այն մկրտուածների շարքին, որոնք սուրբ Աւազանի ջրով լուացուեցին, սրբուեցին եւ արդարացան մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունով եւ Աստծու Հոգով (տե՛ս Ա. Կորնթ. 6, 11), եւ շարունակաբար քայլում են փրկութեան ճշմարիտ ճանապարհով։ Ուստի առաքեալը չէր կարող սուրբ անուանել չմկրտուած մանուկներին, այլ ընդհակառակը՝ «պիղծ» են մնում մինչեւ որ Մկրտութեամբ սրբուեն ու լուսաւորուեն։

Ինչն է, որ մանուկներին արժանացնում է ստանալու Աստծու փրկարար շնորհը. նրանց անգիտակից մտքի դրսեւորո՞ւմը, թէ՞

*նրանց սրտի մաքրութիւնը։ Իհարկէ, սրտի մաքրութիւնը։ Քրիստոս, ասելով «**Աստծու Արքայութիւնն այդպիսիներինն է**», աւելացնում է. «**Ով Աստծու Արքայութիւնը չընդունի որպէս մանուկ, նրա մէջ չի մտնելու**» (Մարկ. 10, 14-15)։ Չափահասներն էլ Աստծու փրկարար շնորհը պէտք է ընդունեն «փոքրիկ մանուկների նման», մանկական սրտի մաքրութեամբ, քանի որ, ինչպէս ասում է Սողոմոն իմաստունը, «**իմաստուն եւ անբիծ հոգին փախչում է նենգութիւնից ու մերժում անմիտների խորհուրդները**» (Իմաս. Սող. 1, 5)։ Հետեւաբար, միայն փոքրիկների նման մաքուր սիրտ ունեցողներն են արժանի՝ Մկրտութեան շնորհով մուտք գործելու Քրիստոսի Եկեղեցի։ Տէրն այնպէս սիրեց Եկեղեցին եւ Իր անձը մատնեց նրա համար, որ «**սրբացնի Աւազանի մաքրութեամբ...**» (Եփես. 5, 26), որպէսզի Իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի Եկեղեցին՝ սուրբ եւ անարատ։ Եթէ անչափահաս մանուկներն իրենց սրտի մաքրութեամբ, բայց առանց Մկրտութեան, արդէն իսկ Եկեղեցու անդամ կարող են լինել՝ ըստ հերձուածողների, ուրեմն, չափահասներին էլ անհրաժեշտ է ընդունել Եկեղեցի՝ առանց Մկրտութեան։ Եթէ նրանց նման մտածենք, թէ քրիստոնեայ ընտանիքներում ծնուած մանուկներին պէտք չէ մկրտել, ուրեմն պէտք չէ մկրտել նաեւ չափահասներին, որովհետեւ, եթէ անչափահասները սուրբ են, ուրեմն սուրբ են նաեւ չափահասները։ Նմանապէս, ուրեմն պէտք չէ մկրտել անհաւատ ամուսնուն, քանի որ սրբուած է հաւատարիմ կնոջով, եւ հակառակը։ Առաքեալի խօսքը յիշեալ համարում այդպիսի միտք չի արտայայտում, այլ կինը (կամ ամուսինը) իր քրիստոնէական հաւատի կեանքի օրինակով իր անհաւատ հեթանոս ամուսնուն (կամ կնոջը) պիղծ կեանքից կարող է հրաւիրել դէպի փրկարար սուրբ կեանք, դէպի Մկրտութիւն, դէպի սուրբ Եկեղեցի, դէպի Քրիստոս։ Դրա համար Պօղոս առաքեալը բացատրում է՝ ասելով. «**Ի՞նչ գիտես, դո՛ւ, կի՛ն, թէ քո մարդուն փրկելու ես. կամ ի՞նչ գիտես, դո՛ւ, մա՛րդ, թէ քո կնոջը փրկելու ես**» (Ա. Կորնթ. 7, 16)։ Եթէ ամուսիններից մէկը*

հաւատի գայ եւ իր զաւակներին մկրտի, սրա համար է առաքեալն ասում, որ նրանց որդիները կը լինեն սուրբ։

Սուրբ Գրքում «սուրբ» (αγιος) բառը միշտ չէ, որ նշանակում է հոգեւոր մաքրութիւն եւ սրբութիւն, այլ յաճախ օգտագործւում է Աստծուն նուիրաբերուած, առանձնացուած, ընտրուած, անմաքուրից բաժանուած իմաստով։ Առաքեալը օգտագործեց «սուրբ» բառը՝ ցոյց տալով, որ խառնամուսնութիւններից մանուկներն արդէն բաժանուած են հեթանոսական միջավայրից՝ նախատեսուած Մկրտութեան համար՝ քրիստոնէութիւնը ընդունելու համար, քանի որ նրանք արդէն մտել են քրիստոնէական միջավայր։ «**Անհաւատ մարդը իր կնոջո՛վ սուրբ է**», այսինքն՝ անհաւատ ամուսինն արդէն դուրս է եկել խաւարից կամ անմաքուր, մեղաւոր աշխարհի հետ հաղորդակցուելուց՝ քրիստոնեայ կնոջ հետ համատեղ ապրելու միջոցով եւ նախատեսուած է Մկրտութեան համար։ Ամուսնու թէ՛ «սրբացումը», եւ թէ՛ մանուկների «սրբութիւնը», ըստ առաքեալի ուսմունքի, նրանց փրկութիւն չի տալիս, հետեւաբար, չի վերացնում հաւատքի եւ Մկրտութեան անհրաժեշտութիւնը. հակառակ դէպքում, բաւական կը լինէր, որ ընտանիքի մէկ անդամը հաւատար ու մկրտուեր, որպէսզի մնացած անդամները փրկուէին։ Բայց նոյնիսկ աղանդաւորները չէին համաձայնի նման եզրակացութեան։

Իսկ ինչպէ՞ս է մանուկներին փոխանցւում արդէն իսկ մկրտուած ու մեղքերի թողութիւն ստացած ծնողների մեղքը։ Չէ՞ որ Սուրբ Գիրքն էլ է ասում, թէ սուրբից ծնուածը սուրբ է. «**Եթէ երախայրիքը սուրբ է, սուրբ է եւ զանգուածը. եւ եթէ արմատը սուրբ է, սուրբ են նաեւ ճիւղերը**» (Հռոմ. 11, 16)։

Ադամի բոլոր ծնունդները ենթակայ դարձան մահուան։ Գրուած է. «**Ինչպէս որ մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետեւ բոլորն էլ մեղանչեցին**» (Հռոմ. 5, 12)։ Առաքեալը նաեւ ասում է. «**Ինչպէս Ադամով բոլորը մեռնում են, նոյնպէս**

եւ Քրիստոսով ամէնքը պիտի կենդանանան» (Ա. Կորնթ. 15, 22): Հետեւաբար, մահը դատապարտութիւն է մարդկային ամբողջ ցեղի համար: Ձկան մեղք չունեցող ծնողներ: Ճշմարիտ է երանելի Դաւիթի խօսքը. «Անօրէնութեամբ յղիացաւ եւ մեղքերի մէջ ծնեց ինձ մայրն իմ» (Սաղմ. 50, 7): Փրկութիւնը իւրաքանչիւր մարդու համար անհատական է, անկախ նրանից՝ նրա ծնողներն այդ փրկութիւնը ձեռք են բերել, թէ՞ ոչ: Իսկ ինչ վերաբերում է առաքեալի խօսքերին, որ ասում է. «եթէ արմատը սուրբ է, սուրբ են նաեւ ճիւղերը», ապա սա չի նշանակում, թէ մկրտուած քրիստոնեաների ծնուած զաւակներն ինքնաբերաբար սուրբ են, այլ եթէ ուշադիր շարունակենք կարդալ Պօղոս առաքեալի հռոմէացիներին ուղղուած նամակը, ապա կը տեսնենք մի այլ բան. «Եթէ ճիւղերից մի քանիսը կտրուեցին, եւ դու, որ մի վայրի ձիթենի էիր, պատուաստուեցիր նրանց վրայ եւ հաղորդակից եղար արմատին եւ ձիթենու պարարտութեանը, մի՛ պարծեցիր այդ ճիւղերի դէմ... Մի՛ հպարտացիր, այլ վախեցի՛ր, որովհետեւ, եթէ Աստուած բուն ճիւղերին չխնայեց, գուցէ երբէք քեզ էլ չխնայի» (Հռոմ. 11, 17-20): Առաքեալն այստեղ խօսում է ձիթենու արմատի՝ Հին Ուխտի պատրիարքների սրբութեան մասին, որոնց «ճիւղերից մի քանիսը կտրուեցին», այսինքն՝ Աստծուց հեռացած հրեաների նման «վայրենի ձիթենուն» հաղորդ եղան: Առաքեալը նոյնիսկ զգուշացնում է՝ ասելով. «Մի՛ հպարտացիր, այլ վախեցիր, որովհետեւ եթէ Աստուած բուն ճիւղերին չխնայեց, գուցէ երբէք քեզ էլ չխնայի»:

Տիրոջ խօսքը. «Աստծու Արքայութիւնն այդպիսիներինն է», նշանակում է, որ Աստծու Արքայութիւնը Նա խոստանում է ոչ բոլորին, այլ նրանց, որոնք մանուկների նման են: Բայց սա չի կարելի հասկանալ այն իմաստով, թէ մանուկների համար ոչ մի պայման չի պահանջւում երկնքի Արքայութիւնն ստանալու համար, եւ որ նրանք ժառանգում են Արքայութիւնը միայն այն պատճառով, որ մանուկ են: Նման ըմբռնումը մերժում է սկզբնական մեղքը,

որի մասին յստակօրէն վկայում է ինչպէս Աստծու խօսքը, այնպէս էլ ողջ Աստծու տնօրինութիւնը մարդու փրկութեան մասին, որն իրականացուել է Տէր Յիսուս Քրիստոսի կողմից: Սուրբ Գիրքն ասում է. «**Իսկ այն ո՞վ է, որ մաքուր է աղտից. ո՛չ ոք. թէկուզ եւ կեանքն երկրի վրայ մէկօրեայ լինի**» (Յոբ 14, 4): Որպէսզի մանուկները մտնեն երկնքի Արքայութիւն, նախ պէտք է «**ծնուեն ջրից եւ Հոգուց**» (Յովհ. 3, 5-6), այսինքն՝ Մկրտութեան խորհրդի միջոցով աւելացուեն Եկեղեցուն (տե՛ս Գործք 2, 47), Քրիստոսով զգեստաւորուեն (տե՛ս Գաղ. 3, 27), կնքուեն խոստացուած Սուրբ Հոգով (տե՛ս Եփես. 1, 13), քանի որ երկնային Արքայութիւն չի մտնի ոչ մի անմաքուր բան (տե՛ս Յայտն. 21, 27):

Մանուկներին բնորոշ ո՞ր բարոյական յատկանիշները պէտք է ընդօրինակեն այն մարդիկ, որոնք ցանկանում են ստանալ խոստացուած Արքայութիւնը: Մանուկների անկեղծութիւնն ու դիւրահաւատութիւնը. որ հէնց մանկական հոգու այս յատկութիւններն են անհրաժեշտ իւրաքանչիւր մարդուն՝ Արքայութիւնը ժառանգելու համար: Տէրն Ինքն է ասում. «**Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ Աստծու արքայութիւնը չընդունի ինչպէս մի մանուկ, այնտեղ չի մտնի**» (Ղուկ. 18, 17): Բայց մանուկների անկեղծութիւնն ու դիւրահաւատութիւնը դեռեւս ապացոյց չէ նրանց բարոյական մաքրութեան: Այս յատկութիւնների կողքին նրանք ունեն համառութիւն, նախանձ, ագահութիւն եւ այլն՝ նախնիների մեղքով վնասուած բնութեան հետեւանքով: Տէրը չի ասել. «այս մանուկներիննն» է Աստծու Արքայութիւնը, այլ «այդպիսիներիննն է», այսինքն՝ ովքեր կամովին իրենց համար ձեռք բերեցին մաքուր սիրտ, մտքի մեղմութիւնն ու խոնարհութիւնը, որ ի բնէ ունեն մանուկները:

Բայց ինչո՞ւ են ոմանք դարձեալ առարկում՝ ասելով, թէ գրուած է. «**Լաւ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ոչ էլ վատ ծառը՝ լաւ պտուղ տալ**» (Մատթ. 7, 18): Այստեղ «ծառ» ասելով՝ նկատի ունենք իւրաքանչիւր քրիստոնեայի, իսկ «պտուղ» ասելով նկատի

ունենք ո՛չ թէ նրանց զաւակներին, այլ նրանց գործերը՝ չար կամ բարի։ Շատերը կարծում են, թէ միայն հաւատալով մաքրուեցին ադամական ու ներգործական մեղքերից եւ Քրիստոսի Արեամբ սրբուած ու փրկուած են իրենք եւ իրենց չմկրտուած զաւակները։ Բայց Աստուածաշունչը սովորեցնում է, թէ բոլորն էլ անխտիր ժառանգում են ադամական մեղքը ու կարիք ունեն նրանից սրբուելու Աւազանի ջրով, որպէսզի կարողանան ժառանգել Աստծու Արքայութիւնը (տե՛ս Յոբ 14, 4։ Սաղմ. 50, 7։ Հռոմ. 5, 12)։

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ մանուկներին չես կարող աշակերտ դարձնել կամ սովորեցնել, հետեւաբար՝ նրանց պէտք չէ մկրտել

*Ոմանք ասում են. «Յիսուս ասաց. «Ով որ հաւատայ ու մկրտուի» եւ ոչ թէ՝«Ով որ մկրտուի ու հաւատայ»: Նաեւ՝«Աշակերտ դարձրէ՛ք... մկրտեցէ՛ք», եւ ո՛չ թէ՝ «Մկրտեցէ՛ք եւ յետոյ աշակերտ դարձրէ՛ք»»[1]: Նրանք մէջբերում են հետեւեալ խօսքը. «**Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ. 28, 19):*

Բայց Յիսուս չասաց. «Աշակերտ դարձրէ՛ք եւ յետոյ մկրտեցէ՛ք»: Քրիստոս հրամայեց առաքեալներին միաժամանակ աշակերտել եւ մկրտել ու չսպասել մինչեւ ամբողջ վարդապետութիւնը մանրամասնօրէն սովորեն եւ յետոյ մկրտեն: Կոռնելիոսն ու իր ընտանիքը չհասցրին ամէն բան սովորել, սակայն հաւատալով իսկոյն մկրտուեցին (տե՛ս Գործք 8, 36-39: 10, 30-33: 10, 44-48):

Եթէ հետեւենք քրիստոնէութեան ամբողջ պատմութեանը, անհնարին կը լինի մերժել մանուկների Կնունքը: Մկրտութիւնը մի իրադարձութիւն է, որը բոլորովին փոխում է այն աշխարհը, որտեղ ապրում է մարդը: Մկրտութեամբ երեխան մուտք է գործում Աստծու Նոր Ուխտի ժողովրդի մէջ՝ դառնալով Քրիստոսի Մարմնի՝ Եկեղեցու անդամը: Աւելի հաւանական է, որ Եկեղեցու մէջ մկրտուած ու նրա մէջ կենցաղավարող մանուկները, որոնք վայելում են Եկեղեցու շնորհառիթ միջոցները, նուազ ենթակայ լինեն խեղումի վտանգին, քան նրանք, որոնք մինչեւ չափահաս դառնալը մնացել են առանց Մկրտութեան:

1 Յովհաննէս Մարգարեան [Ճան Մարգ], Աստուծոյ փրկութեան ծրագիրը, Բէրութ, 1971, էջ 549:

Յիսուս եկաւ որպէս հոգիների Բժիշկ՝ մարդ արարածն փրկելու իր հիւանդ ու մահկանացու բնութիւնից։ Քրիստոսի դեղագիրն ու կարգադրութիւնները պէտք է նկատել որպէս բուժման միջոցներ՝ սպեղանի, բալասան։ Եկէք մի պահ պատկերացնենք, թէ հիւանդանոցի գլխաւոր բժշկապետը կարգադրում է իր բժիշկներին՝ գնալ ու ծանր հիւանդներին մի նոր դեղ բաժանել եւ նրանց սովորեցնել ճշգրիտ կերպով պահպանել դեղատոմսի կարգադրութիւնները։ Բժիշկները գնացին ու բոլոր հիւանդներին բաժանեցին ու սովորեցրին պահպանել դեղատոմսի կարգադրութիւնները։ Բոլոր հիւանդները բժշկուեցին հիւանդութեան տառապանքներից։ Իսկ անգիտակից մանուկներն այդպէս էլ մնացին հիւանդ, քանի որ բժիշկներին ասուած էր՝ «սովորեցրէ՛ք»։ Բայց ինչպէ՞ս սովորեցնել նրանց։ Ուրեմն, երբ մեծանան եւ իրենց տարիքն առնեն, այն ժամանակ պէտք է նրանց ամէն բան սովորեցնել ու բացատրել։ Բայց չէ՞ որ երբ երեխան հիւանդանում է, նա չի հասկանում ո՛չ հիւանդութեան պատճառը եւ ո՛չ էլ հիւանդութեան հետեւանքները։ Սակայն ինչ որ հարկաւոր է իր առողջութեան համար, ծնողներն ամէն բան անում են՝ առանց երեխայի համաձայնութեան ու գիտակցութեան։ Ո՞վ է այն մարդը, որ իր հիւանդ զաւակին ասում է. «Դու նախ մեծացի՛ր, վերջացրո՛ւ բժշկական ուսումնարանը եւ միայն այն ժամանակ, երբ հասկանաս, թէ ինչպէ՛ս է այս դեղորայքն ազդում մարմնի վրայ, քեզ կը տամ բուժման միջոցը»։ Արդեո՞ք բժիշկը պէտք է հրաժարուի օգնել հիւանդին միայն այն պատճառով, որ նա դեռ չի հասկացել սեփական հիւանդութեան աղբիւրը։ Երեխան չի գիտակցում քրիստոնէական աստուածաբանութիւնը, բայց արդեո՞ք նա օտար է Քրիստոսի համար։

Ոմանք մանուկներին չեն մկրտում՝ ասելով, թէ նրանք սուրբ են եւ կարող են մտնել Աստծու երկնային Արքայութիւնը։ Բայց չէ՞ որ Եկեղեցին Աստծու Արքայութիւնն է այստեղ՝ երկրի վրայ։ Ինչպէ՞ս կը լինի, որ նրանք չեն կարող Եկեղեցի մտնել, բայց ընդունակ

են մտնելու երկնային Արքայութիւն։ Իմանալով, թէ Մկրտութիւնն Աստծու Եկեղեցու դուռն է եւ մուտքը երկնքի Արքայութիւն, մանուկների Մկրտութիւնը մերժողները գիտակցաբար փակում են այդ դուռը՝ իրենց անպաշտպան զաւակներին թողնելով դիւական իշխանութեան տակ։ Այդպիսիներին եւ իրենց հետեւորդներին Տէրն Ինքն է ասում. «**Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օրէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ երկնքի Արքայութիւնը փակում էք մարդկանց առաջ. դուք չէք մտնում եւ մտնողներին էլ թոյլ չէք տալիս, որ մտնեն**» (Մատթ. 23, 13)։

Ճանապարհը դէպի Աստծու Արքայութիւնը Ս. Մկրտութեամբ է, որովհետեւ Փրկիչն ասում է. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։ Մարդասէր Աստուած երկնքի Արքայութիւնը մտնելու հրաւէրը տուեց բոլոր մարդկանց։ Մանուկներին բերում էին Յիսուսի մօտ, որպէսզի օրհնի նրանց։ Իսկ աշակերտները յանդիմանում էին նրանց, ովքեր բերում էին մանուկներին։ Երբ Յիսուս տեսաւ, բարկանալով սաստեց եւ ասաց. «**Թո՛յլ տուէք այդ մանուկներին գալ ինձ մօտ եւ արգելք մի՛ եղէք նրանց, որովհետեւ Աստծու Արքայութիւնը այդպիսիներինն է**» (Մարկ. 10, 14)։

Մկրտութիւնը շրջադարձային պահ է իւրաքանչիւր մարդու կեանքում՝ անկախ նրա տարիքից։ Քրիստոնեայ ծնողները պարտաւոր են մկրտել իրենց զաւակներին, որովհետեւ Մկրտութիւնը հոգեւոր ծնունդ է, որը կարելի է համարել մարդու կեանքի հիմնական եւ ամենակարեւոր իրադարձութիւններից մէկը։

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ գրուած է՝ «Մարդիկ գալիս ու մկրտւում էին», եւ գրուած չէ, թէ՝ «Մարդիկ մանուկներին գրկած գալիս էին»

*Ոմանք առարկում են ասելով, որ միայն չափահասները կարող են ինքնուրոյն քայլել, ուստի փոքրիկներին պէտք չէ մկրտել: Գրուած է. «Այնուհետեւ Յիսուս եւ իր աշակերտները Հրէաստանի երկիրը եկան, եւ նա այնտեղ շրջում էր նրանց հետ ու մկրտում: Յովհաննէսն էլ մկրտում էր Այենոնում՝ Երուսաղէմի մօտ, որովհետեւ այնտեղ շատ ջրեր կային, եւ մարդիկ գալիս ու մկրտւում էին, քանի դեռ Յովհաննէսին չէին բանտարկել: Եւ Յովհաննէսի աշակերտների ու մի հրեայի միջեւ մաքրութեան մասին մի հարց ծագեց: Նրանք եկան Յովհաննէսի մօտ եւ նրան ասացին. «**Ռաբբի՛, նա, ով Յորդանանի միւս կողմում քեզ հետ էր, եւ որի մասին դու վկայեցիր, ահաւասիկ նա մկրտում է, եւ ամէնքը գալիս են նրա մօտ**» (Յովհ. 3, 22-26):*

Յովհաննէս առաքեալն իր Աւետարանի 2-4-րդ գլուխներում հիմնականում խօսում է ոչ թէ մեղքերի թողութեան (տե՛ս Գործք 2, 38) եւ եկեղեցուն միանալու (տե՛ս Գործք 2, 41) Մկրտութեան մասին, այլ ապաշխարութեան Մկրտութեան մասին, ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչն էր անում: Իսկ եկեղեցական Ս. Մկրտութեան խորհուրդը հաստատուեց Քրիստոսի համբարձումից առաջ (տե՛ս Մատթ. 28, 19-20) եւ իրագործուեց Սուրբ Հոգու իջնելուց յետոյ (տե՛ս Գործք 2, 38): Փրկչի մօտ գալիս էին ոչ միայն չափահասներն ու մեծահասակները, այլ նաեւ բերում էին փոքրիկներին: Յիսուս նրանց գրկում էր Իր գիրկը եւ օրհնում (տե՛ս Մարկ. 10, 16): Մատթէոսի աւետարանում «փոքրիկ» բառը յունարէն **«παιδία»**

(պեդի՛ա) բառն է, որ ցոյց չի տալիս մանուկների տարիքը։ Սակայն բացի այդ բառից, Ղուկասի Աւետարանում տեսնում ենք նաեւ մէկ այլ յունարէն բառ՝ «βρέφη» (վրեֆի), որ նշանակում է մի երեխայ, որը դեռ չի կարող քայլել իր տարիքի պատճառով (տե՛ս Ղուկ. 18, 15-17)։ Իսկ եթէ փոքրիկները կարող են ընդունել Քրիստոսի օրհնութեան շնորհը, ուրեմն կարող են ընդունել նաեւ Քրիստոսի Մկրտութեան շնորհը։ Եթէ մանուկն ինքը դեռ չի կարող քայլել ու մտնել փրկարար Եկեղեցի, ուրեմն պէտք է նրան ձեռքերի վրայ գրկած տանել, որովհետեւ Մկրտութիւնը, ըստ Պետրոս առաքեալի, Նոյան տապանի օրինակի պէս ապրեցնում է ու փրկում (տե՛ս Ա. Պետր. 3, 21)։ Ինչո՞ւ մանուկները պէտք է դուրս մնան փրկութեան տապանից։

Իսկ ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ միայն չափահասներին կարելի է մկրտել, քանի որ Յովհաննէս Մկրտչի մօտ մանուկներ չէին բերում մկրտելու։ Ասենք, որ Քրիստոսի Եկեղեցում բոլոր հաւատացեալներն ու իրենց անչափահաս զաւակները մկրտւում են ոչ թէ Յովհաննէսի, այլ՝ Քրիստոսի Մկրտութեամբ։ Յիսուս չի մերժում մանուկներին, հետեւաբար՝ անչափահասներին կարելի է մկրտել։

Ոմանք էլ ասում են. «Չէ՞ որ Յիսուս մկրտուեց, երբ երեսուն տարեկան էր, ուրեմն պէտք է ընդօրինակել Յիսուսին ու չմկրտուել մանուկ տարիքում»։ Նախ՝ Յիսուս ընդունեց Մկրտութիւնը ոչ այն պատճառով, որի համար մենք ենք մկրտւում։ Յիսուս սրբութեան կարօտ չէր ու բնութեամբ սուրբ էր իբրեւ Աստուած, սուրբ էր մարմնով (տե՛ս Ղուկ. 1, 35։ Եբր. 8, 1) եւ արդար գործերով (տե՛ս Ես. 53, 3։ Ա. Պետր. 2, 22)։ Քրիստոս չմկրտուեց այն բանի համար, որ մեզ ցոյց տայ մկրտուելու յարմար տարիքը։ Երկրորդ՝ Յիսուս չէր կարող աւելի շուտ մկրտուել, քանի որ Յովհաննէս Մկրտիչն իր քարոզչութիւնն սկսել էր Քրիստոսի Մկրտութիւնից կէս տարի առաջ։ Երրորդ՝ այս դէպքի համար «Քրիստոսի անձնական օրինակն» ընդունելի չէ, քանի որ Յիսուս Քրիստոս չէր զղջայ

կամ ապաշխարի, Աստծու բարի խղճմտանք չէր խոստանայ կամ էլ քրիստոնեաներին անհրաժեշտ «վերստին ծննդեան» փորձառութիւնը չունեցաւ Մկրտութիւնից առաջ։

✝ ✝ ✝

Ի՞նչ պէտք է պատասխանել նրանց, ովքեր ասում են, թէ անիմաստ է մկրտել մանուկներին, քանի որ նրանք չեն կարող յիշել իրենց Մկրտութիւնը

Աղանդապաշտ քաչոզիչները պնդում են, թէ մանուկներին անիմաստ է մկրտել, քանի որ նրանք չեն կարող յիշել իրենց Մկրտութիւնը եւ այն խոստումները, որոնք չափահաս հաւատացեալն է Աստծուն խոստանում մկրտուելու ժամանակ: Իհարկէ, մկրտուած մանուկն էլ, երբ մեծանայ, կարող է մեծ մեղքեր գործել եւ կորցնել Աստծու շնորհը: Բայց սրանից երբէք կախում չունի մանուկների փոքր տարիքի Մկրտութիւնը: Աւելի հաւանական է, որ Եկեղեցում մկրտուած եւ նրանում զարգացող մանուկները, որոնք վայելում են նրա հոգեւոր շնորհառատ ներգործութիւնները, մոլորման ու խեղման վտանգին նուազ ենթակայ կը լինեն, քան նրանք, ովքեր մինչեւ չափահաս դառնալը մնացել են առանց Մկրտութեան: Իսկ եթէ մեծանալով մանուկը մերժի հաւատը, ապա նա կը դառնայ հաւատուրաց: Իր ազատ կամքով նա կարող է մերժել Մկրտութեան ժամանակ ընդունած շնորհը, բայց ծնողները պիտի կատարէինք իրենց պարտքը նրա հանդէպ: Նա կը լինի այն անմիտի նման, ով սկսում է Սուրբ Հոգով, իսկ հիմա վերջացնում է մարմնով (տե՛ս Գաղ. 3, 3): Արդեո՞ք չի կարող նոյնը պատահել նաեւ չափահաս մկրտուածներին: Սուրբգրային թղթերից էլ իմանում ենք, թէ ինչպէս Եկեղեցու անդամներից Անանիան ու Սափիրան, հաւատալով առաքեալներին եւ նրանցից շատ բաներ սովորելուց յետոյ, ծանր մեղանչեցին Սուրբ Հոգու դէմ՝ չյայտնելով իրենց ստացուածքը ու պատժուելով մեռան (Գործք 5, 1-10): Նոյնպէս Պօղոս առաքեալը հրամայեց սատանային յանձնել Կորնթոսի եկեղեցու անբարոյականին իր պոռնկութեան համար

*(Ա. Կորնթ. 5, 1)։ Շատերն ընկնում են՝ սատանայից փորձուելով։ Այդ պատճառով պէտք է առաւել զօրանալ հաւատի մէջ, որպէսզի կարողանանք պայքարել մեր մեղքերի ու մեր շուրջ գործող դեւերի դէմ, որպէսզի, ըստ Պօղոս առաքեալի, «**Աստծու շնորհը պարապ տեղ ընդունած չլինէք**» (Բ. Կորնթ. 6, 1)։*

*Աղանդաւորները մանուկներին չեն մկրտում, որովհետեւ ասում են, թէ չեն հաւատում մանկամկրտութեանը։ Միաժամանակ ասում են, թէ նրանք սուրբ են եւ կարող են մտնել Աստծու երկնային Արքայութիւն։ Բայց չէ՞ որ Եկեղեցին Աստծու Արքայութիւնն է այստեղ՝ երկրի վրայ։ Ինչպէ՞ս կը լինի, որ նրանք չեն կարող Եկեղեցի մտնել, բայց ընդունակ են մտնելու երկնային Արքայութիւն։ Իմանալով, թէ Մկրտութիւնն Աստծու Եկեղեցու դուռն է եւ մուտքը երկնքի Արքայութիւն, աղանդաւորները գիտակցաբար փակում են այդ դուռը՝ իրենց անպաշտպան զաւակներին թողնելով դիւական իշխանութեան տակ։ Այդպիսիներին եւ իրենց հետեւորդներին Տէրն Ինքն է ասում. «**Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օրէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ երկնքի Արքայութիւնը փակում էք մարդկանց առաջ. դուք չէք մտնում եւ մտնողներին էլ թոյլ չէք տալիս, որ մտնեն**» (Մատթ. 23, 13)։*

*Այդպիսիներին հարկ է հարցնել, թէ ինչպիսի՞ քրիստոնեաներ էք դուք, որ զրկում են ձեր զաւակներին՝ Ս. Մկրտութեան սրբարար խորհրդով ընդունելու Քրիստոսի փրկչական շնորհը, եւ փակում էք երկնքի Արքայութիւնը։ Աստծու երկնային Արքայութիւն տանող ճանապարհը՝ Ս. Մկրտութեամբ է, որովհետեւ Փրկիչն է ասում. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։*

*Ինչո՞ւ չէք հաւատում, որ Տէր Յիսուս բոլոր մարդկանց Իրեն հրաւիրելով, նաեւ մանուկներին է կանչում օրհնելով եւ ասելով. «**Թո՛յլ տուէք այդ մանուկներին գալ ինձ մօտ եւ արգելք մի՛ եղէք նրանց, որովհետեւ Աստծու Արքայութիւնն այդպիսիներինն է**» (Մարկ. 10, 14)։*

Ինչպէ՞ս ընտրել կնքահայր

Եկեղեցին անչափահասներին մկրտում է իրենց ծնողների եւ կնքահօր հաւատի հիման վրայ։ Ժողովրդական լեզուում տարածուած է նաեւ «քաւոր» բառը։ «Կնքահայր» բառը չկայ Աստուածաշնչում, սակայն կային նրանք, ովքեր բերում էին երեխաներին Յիսուսի մօտ (տե՛ս Մարկ 10, 13), եւ Տէրը չէր մեղադրում փոքրիկներին բերողներին։ Ըստ առաքելական սովորութեան՝ կնքահայրերն էլ նոյնն են անում՝ մանուկներին բերում են Փրկչի մօտ եւ հայցում Աստծու օրհնութիւնը, որպէսզի Յիսուս Մկրտութեան սրբարար խորհրդով դիպչի եւ Իր Հոգով վերստին կենդանացնի մահկանացու մարմինները՝ որպէսզի որդեգրութեան հոգին ստանալու եւ Աստծու ժառանգորդներ լինելու համար (տե՛ս Հռոմ. 8, 11։ 15, 17)։

Կնքահայրը նորադարձ հաւատացեալին բերում էր համայնք եւ վկայում, որ նա կարող է տուեալ քրիստոնէական համայնքի անդամը դառնալ եւ արժանի է Մկրտութեան։ Յաճախ, չկարեւորելով կնքահօր դէրը, ընտրում են պատահական մէկին՝ լրացնելով ծէսի ձեւական կողմը միայն։ Սակայն խրախուսելի է, որ կնքահայրն այնպիսի մէկը լինի, որն իր քրիստոնէական գիտելիքների հմտութեամբ կարողանայ ուղեցոյց դառնալ իր սանիկին։ Կնքահօր հիմնական պարտականութիւնն իր սանիկի քրիստոնէական դաստիարակութեամբ զբաղուելն է։ Կնքահայրը պարտադիր պէտք է մկրտուած լինի եւ սա ենթակայ չէ որեւէ քննարկման։ Ինչպէ՞ս կարող է չմկրտուած մարդը, ով չի հաւատում Աստծուն կամ չի հասկանում այն պատուիրանները, որոնցով պէտք է ապրի իւրաքանչիւր մարդ, հաւատք սովորեցնել փոքրիկներին։ Կնքահայրերի հիմնական պարտականութիւններն

իրենց սանիկների հաւատքի հրահանգներն են, նրանց համար աղօթքն ու օգնութիւնը, առաջին հերթին՝ հոգեւոր եւ մարմնաւոր։ Ֆինանսական աջակցութիւնը միայն այս խնամակալութեան տարրն է։ Կարեւոր է սանիկի կեանքի վրայ նման ազդեցութիւն ունենալ, որպէսզի նա արժանի մարդ՝ քրիստոնեայ մեծանայ։ Սանիկի եւ կնքահայրերի միջեւ ամուր հոգեւոր կապն օրհնութիւն է, Աստծու մեծ ողորմածութիւնը։ Կնքահայրը պարտաւոր է կարդալ Աւետարանը եւ իմանալ «Հաւատամքը»։ Նա պէտք է իմանա, թէ ինչին է հաւատում, եւ իհարկէ, կնքահայրը պէտք է ապրի Աստծու պատուիրաններով, աղօթի Աստծուն ու Ս. Հաղորդութիւն ընդունի։

Կնքահայրը կնքուող մանուկի դաստիարակութեանը երաշխաւորն է եւ նրա անունից դաւանում է Սուրբ Երրորդութիւնն ու Եկեղեցուն խոստովանում քրիստոնէական ճշմարիտ հաւատը։ Երեխան չի կարող վկայել իր հաւատքի մասին եւ պատասխանել հոգեւորականի հարցերին՝ հրաժարուելով սատանայից չի հասկանում Հաղորդութեան իմաստը։ Ուստի մանուկների Մկրտութեան ժամանակ դա տեղի է ունենում իրենց կնքահայրերի հաւատքի համաձայն, որոնք Աստծուն խոստանում են Եկեղեցու նորածին անդամին ուղղափառ հաւատքով դաստիարակել։ Կնքահայրն այն անձն է, ով իր սանիկի մանկութեան պատճառով սուրբ Մկրտութեան ուխտ է հաստատում նրա համար։ Կնքահայրերը հրաժարւում են սատանայից իրենց հոգեւոր զաւակների համար եւ խոստովանում իրենց հաւատքը նրանց փոխարէն՝ կարդալով «Հաւատամքը»։ Մարդկանց մեծամասնութիւնը մկրտւում է մանկութեան ժամանակ, այսինքն՝ այն տարիքում, երբ երեխան դեռ գիտակցուած հաւատ չունի, չի կարող պատասխանել, թէ ինչպէս է հաւատում։ Երեխայի փոխարէն դա անում է նրա կնքահայրը։

Հայաստանեայց Եկեղեցին չունի «կնքամայր» հասկացողութիւնը։ Ըստ Հայ Եկեղեցու կանոնական որոշումների՝ միայն տղամարդը կարող է կնքահայր լինել։ Մկրտուողի կնքամայրը հանդիսանում է այն Եկեղեցին, որտեղ մկրտւում է անձը, քանի

որ Եկեղեցու արգանդից՝ Ս. Մկրտութեան Աւազանից է ծնւում քրիստոնեան: Ըստ Հայ Առաքելական Եկեղեցու կանոնակարգի՝ իւրաքանչիւր մարդ կարող է ունենալ միայն մէկ կնքահայր, չի բացառւում նաեւ, որ մի քանի մկրտուողներ կարող են ունենալ միեւնոյն կնքահայրը:

Ծնողներն ու կնքահայրն ունեն հսկայական պատասխանատուութիւն: Կնքահայրն Աստծու առաջ երաշխաւոր է դառնում իրենց սաների համար: Մկրտութեան պահին ծնողների հետ խաչի եւ Աւետարանի առաջ խոստում են տալիս հէնց Աստծուն, որ նրանք ամէն ջանք գործադրեն, որպէսզի նոր մկրտուած երեխան մեծանայ որպէս ճշմարիտ հաւատացեալ: Նրա պարտքն է այժմ աղօթել իր հոգեւոր զաւակի համար, սովորեցնել նրան աղօթքներ, ուղղափառ հաւատքը բացատրել եւ Եկեղեցի տանել՝ Ս. Հաղորդութեան: Այնպէս որ, երբ նրա սանիկը մեծանայ, նա արդէն կ'իմանայ, թէ ինչպէս աղօթել Աստծուն, նա կ'իմանայ, թէ ինչի՛ն ենք մենք հաւատում եւ ինչո՛ւ ենք գնում եկեղեցի: Իհարկէ, երեխաների քրիստոնէական դաստիարակութեան ամենամեծ պատասխանատուութիւնը կրում են ծնողները, բայց կնքահայրերը կարող են նաեւ մեծ ազդեցութիւն ունենալ իրենց սանիկների վրայ, դառնալ նրանց հոգեւոր ուսուցիչներն ու դաստիարակները:

Երբ քահանան Մկրտութեան խորհրդի ժամանակ երեք անգամ հարցնում է կնքահօրը, թէ երախան ի՞նչ է խնդրում, նա պատասխանում է. «Հաւատք, յոյս, սէր եւ Մկրտութիւն: Մկրտուել եւ արդարանալ, սրբուել մեղքերից, ազատուել դեւերից եւ ծառայել Աստծուն»: Քահանան Աւազանի մէջ մանկանը երեք անգամ ընկղմելուց յետոյ նրան յանձնում է կնքահօրը: Վերջինս սրբիչով գրկում է իր սանիկին, իսկ չափահաս մկրտեալի դէպքում՝ լուացումից յետոյ սրբում նրան:

Ժամանակակից կնքահայրերի մեծ մասը, ցաւօք, շատ թերի է պատրաստուած: Ի մեծագոյն ափսոսանք, շատ ծնողներ իրենց

երեխաների Մկրտութեանը մօտենում են միանգամայն ձեւական կերպով եւ նոյն կերպ էլ կնքահայրեր են ընտրում։ Ի վերջոյ, կնքահայրը պէտք չէ լինի պարզապէս լաւ մարդ, ում հետ մենք հաճոյքով ենք շփւում, մեր ընկերը կամ բարեկամը. նա պէտք է լինի ուղղափառ հաւատքը դաւանող մարդ, եկեղեցասէր անձ եւ իմանայ իր հաւատքի դաւանութիւնը։ Ինչպէ՞ս կարող ենք որեւէ մեկին սովորեցնել հաւատքի սկզբունքները, եթէ մենք ինքներս նոյնիսկ չգիտենք ամենահիմնականը, չենք կարդացել Աւետարանը, չգիտենք աղօթքները։ Ի վերջոյ, ցանկացած ոլորտում, եթէ մարդ ինչ-որ գործ լաւ գիտի, օրինակ՝ մեքենայ վարել, համակարգչով աշխատել, մաթեմատիկական խնդիրներ լուծել, վերանորոգել, ապա կարող է դա սովորեցնել ուրիշներին եւ փոխանցել իր գիտելիքները։ Եւ եթէ նա ինքը ոչինչ չգիտի տուել ոլորտում, ո՞ւմ կարող է սովորեցնել։

Եթէ դուք կնքահայր էք եւ հոգեւոր ոլորտում զգում էք գիտելիքների պակաս (իսկ մեզանից ոչ ոք չի կարող ասել, որ նա ամբողջութեամբ ուսումնասիրել է ճշմարիտ ուղղափառ հաւատքը), ուրեմն դուք պէտք է լրացնէք այդ բացը։ Դուք պէտք է ինքներդ ձեզ դաստիարակէք։ Հաւատացէ՛ք, դրանում ոչ մի բարդ բան չկայ, յատկապէս հիմա, երբ մեզ ոչ ոք չի արգելում որեւէ հոգեւոր գրականութիւն կարդալ, երբ բոլոր եկեղեցիներում եւ գրախանութներում վաճառւում են ուղղադաւան հաւատքին վերաբերող գրքեր։ Տէրն Իրեն բացայայտում է բոլոր նրանց, ովքեր դիմում են Նրան, ցանկացած տարիքում։

Ս. Մկրտութեան խորհուրդը մեծ իրադարձութիւն է իւրաքանչիւր մարդու կեանքում եւ յատկապէս երեխայի համար։ Այն պարտաւորութիւնները, որոնք ստանձնում են Աստծու առաջ, շատ լուրջ են եւ պատասխանատու։ Ահա թէ ինչու կնքահայրերը, որոնց պարտականութիւնն է հասկանալ այս պատասխանատուութիւնը, պէտք է իրենց սանիկներին փոխանցեն աստուածային պաշ-

տամունքի իմաստն ու ամբողջական գիտելիքները Եկեղեցու փրկարար խորհուրդների մասին։

Ծնողներն ու սանիկները պէտք է պատրաստ լինեն Ս. Մկրտութեան խորհուրդին։ Կնքահայր ընտրելիս կարեւոր է, որ ծնողները նկատի ունենան, որ նա լինի բարեպաշտ եւ օրինակելի քրիստոնեայ։ Կնքահայր չեն կարող լինել կանայք, անչափահասները, անհաւատները, այլակրօնները, այլադաւանները, մկրտուողի ծնողները։

Մկրտուողները պէտք է իմանան ուղղափառ վարդապետութեան սկզբունքները, ինչպէս նաեւ ապրեն քրիստոնէական բարեպաշտութեան կանոնների համաձայն։ Նման կարեւոր իրադարձութիւնները, ինչպիսիք են ծոմը, պահքը, խոստովանութիւնը, Հաղորդութիւնը, պէտք է ճիշդ փոխանցել սանիկին։ Կնքահայրերը պէտք է պաշտպանեն սանիկին բոլոր տեսակի գայթակղութիւններից։ Սա ամենավտանգաւորն է երեխաների եւ դեռահասների համար։ Յետագայում կնքահայրը կարող է օգնել մասնագիտութեան ընտրութեան հարցում եւ նոյնիսկ կեանքի ուղեկից ընտրելիս։

Եթէ կնքահայրերն անլուրջ են վերաբերւում իրենց պարտականութիւններին, ապա դա դառնում է հոգու ծանր մեղք։ Կնքահայր պէտք չէ դառնայ, ով չի կարող այս կարեւորագոյն պատասխանատուութիւնն ստանձնել։ Ֆիզիկական ծնողները նոյնպէս պէտք չէ կնքահայրութեան մերժումն ընդունեն որպէս անտեսում կամ վիրաւորանք։ Կնքահայր դառնալու առաջարկից հրաժարուելը մեղք չէ։ Եթէ մարդն իրեն անպատրաստ է համարում այդ պարտականութեան համար, ապա կարող է հրաժարուել այդ առաջարկից։ Ի վերջոյ, կնքահայրերը պէտք է կատարեն իրենց պարտականութիւնները լիարժէքօրէն եւ մաքուր հոգով։

Աղանդաւորները մեղադրելով ասում են, թէ ինչո՞ւ էք մկրտում թերահաւատների բերած մանուկներին։ Չէ՞ որ շատ յաճախ

կնքահայրերն անարժան միջնորդներ են եւ չեն հաւատում, թէ ինչ են խոստանում Մկրտութեան ժամանակ եւ չեն կատարում իրենց վրայ վերցրած հոգեւոր դաստիարակութեան պարտականութիւնները: Ասում են, որ այդպէս անելով՝ դուք գիտակցաբար բազմացնում էք եկեղեցու անարժան անդամների թիւը: «Այսօր որքա՜ն անհաւատներ կան կամ մանուկ հասակում մկրտուածներ, որոնք նոյնիսկ Աստծուն հայհոյում են ու խաչի թշնամիներ են»[1]:

Հաւատը Մկրտութեան անհրաժեշտ ու կարեւոր պայմանն է, առանց որի եկեղեցին ոչ ոքի չէր մկրտում: Պատահական չէ, երբ Պօղոս առաքեալն անչափահասներին մկրտում էր միայն իրենց շրջապատի հաւատը տեսնելով (տե՛ս Գործք 16, 15: 16, 33: Ա. Կորնթ. 1, 16): Եկեղեցին էլ մտահոգ է, երբ ոմանք թերահաւատութեամբ են մօտենում Ս. Մկրտութեան խորհրդին: Այս պատճառով եկեղեցու հովիւները փորձում են, ըստ կարիքի եւ հնարաւորութեան, ամէն ինչ անել իրենց հօտը հոգեպէս խրատելու եւ դաստիարակելու համար: Սովորաբար, այդ մեղադրանքները ծագում են Մկրտութեան խորհրդի սխալ ըմբռնումից: Ուղղադաւան եկեղեցում չափահասներն ու անչափահասները (անկախ իրենց տարիքից) մկրտւում են Քրիստոսի Մարմնի՝ եկեղեցու անդամ դառնալու համար: Ոչինչ չի կատարւում ինքնաբերաբար: Չափահաս անաստուածին, իր մանուկ հասակում կատարուած Մկրտութիւնը, ճշմարիտ քրիստոնեայ չի դարձնում, այլ ցոյց է տալիս, թէ նա օգտագործեց իր ազատ կամքի ընտրութիւնը եւ իր մէջ ցանուած Քրիստոսի սերմը ոտնակոխ արեց ու չորացած մի ճիւղ դարձաւ եկեղեցու ծառի վրայ, որովհետեւ որպէս մարմին՝ առանց Հոգու շահի չի անում (տե՛ս Յովհ. 6, 64): Ինչ վերաբերում է անարժան միջնորդներին, որոնք Մկրտութեան են բերում փոքրիկներին, սրանց թերի եւ անբաւարար եկեղեցական կեանքը չի կարող Մկրտութեան արգելքի պատճառ լինել: Ինչ պէտք է

1 Յովհաննէս Մարգարեան [Ճան Մարգ], Աստծու փրկութեան ծրագիրը, Բէյրութ, 1971, էջ 549:

անեն այս դէպքում Աստծու խորհուրդների տնտեսները (տե՛ս Ա. Կորնթ. 4, 1), այսինքն՝ Աստծու քահանաները, երբ տեսնում են թերի այգեգործներին, որոնք իրենցից խնդրում են սերմեր ցանել իրենց այգիներում։ Սերմնացանի առակում Յիսուս ասում է. «Ահա մի սերմնացան ելաւ սերմանելու. եւ երբ նա սերմանում էր, մի մաս սերմ ընկաւ ճանապարհի եզերքին... Եւ ուրիշ մի մաս ընկաւ ապառաժի վրայ, ուր շատ հող չկար... Եւ ուրիշ մի մաս ընկաւ փշերի մէջ... Եւ մէկ ուրիշ մաս ընկաւ պարարտ հողի վրայ եւ պտուղ տուեց» (Մատթ. 13, 4-8)։ Սերմ ցանողը նախապէս գիտէ, որ իր ունեցած սերմերի չորսից մէկը զուր տեղը չի ցանուել։ Սակայն դա չի ստիպում սերմ ցանողին անգործութեան մատնուել։ Այս խօսքի՝ սերմ ցանելու օրինակի պէս է վարւում քահանան, երբ կատարում է Ս. Մկրտութեան խորհուրդը։ Ոչ ոք չի կարող հարիւր տոկոսով երաշխաւորել, թէ Քրիստոսի յարութեան սերմը «բուսնելով, հարիւրապատիկ պտուղ տուեց» (Ղուկ. 8, 8)։ Աւետարանական սերմնացանը՝ քահանան այդ խորհրդին ծառայում է իր հաւատով եւ աղօթքներով, թէպէտ եւ ոչ բոլոր, այլ՝ Քրիստոսի վերանորոգութեան որոշ սերմեր բուսնում են ու պտուղ են տալիս «մէկին՝ հարիւր. եւ կար որ մէկին՝ վաթսուն. եւ կար որ մէկին՝ երեսուն» (Մատթ. 13, 8)։

Եթէ մենք ծայրայեղօրէն ընդունենք հաւատն իբրեւ նախապայման, ապա Մկրտութիւնից պիտի զրկուեն նաեւ շատ մեծահասակներ, ովքեր հոգեւոր ու մտաւոր այնքան կարողութիւն կամ հասունութիւն չունեն ըմբռնելու հաւատի սկզբունքներն ու խորութիւնները, ինչպէս շատ թերի կրթութիւն ունեցողները եւ նրանք, ովքեր խիստ սահմանափակ մտաւոր կարողութիւն ունեն՝ մտնելու աստուածաբանական խնդիրների խորքը։ Ո՞րն է այսպիսի անձանց հաւատի ընդունելի չափանիշը։ Արդեո՞ք նրանց, ինչպէս մանուկներին, պէտք է զրկել Մկրտութիւնից։

Ս. Մկրտութեան խորհուրդը մարդուն կապում է Առաքելական մէկ Եկեղեցու հետ։ Ուղղափառ ուսմունքն ունի իրեն յատուկ

վարդապետական սկզբունքները, որոնցից հնարաւոր չէ շեղուել։ Այդ իսկ պատճառով սանիկի համար երաշխաւոր կարող են դառնալ միայն նոյն հաւատքի տէր մարդիկ։ Կնքահայրերը պարտաւոր են իրենց սանիկներին կրթել միայն ուղղափառ հաւատքով։ Այլ կրօններ դաւանող անձինք պարզապէս չեն կարող դա անել։

Ի՞նչ է ասում Աստուածաշնչը մանուկների Մկրտութեան մասին

Բարեփոխութեան ուսմունքների հետեւորդներն ասում են. «Աստուածաշնչում գոյութիւն չունի այնպիսի գրութիւն, որ մեզ սովորեցնի, թէ մանուկների Մկրտութիւնն անհրաժեշտութիւն է»[1]:

Կարելի՞ է արդեօք Աստուածաշնչում ցոյց տալ որոշ դէպքեր, որոնք կարող են հաստատել ու քաջալերել մանուկների Մկրտութիւնը, որը հիմնուած է իրենց ծնողների հաւատքի վրայ: Ցանկացած մարդ, ով կարդացել է Աստուածաշունչը, գիտէ, որ Հին Կտակարանում կան որոշ նախադէպեր կամ նախատիպեր նորկտակարանային Մկրտութեան:

*Եզեկիէլ մարգարէն ասում էր. «**Ձեզ վրայ սուրբ ջուր եմ ցանելու, եւ դուք մաքրուելու էք ձեր բոլոր պղծութիւններից. ձեր բոլոր կուռքերից մաքրելու եմ ձեզ: Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մէջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղէն սիրտն ու մարմնեղէն սիրտ եմ տալու ձեզ. իմ հոգին եմ տալու ձեզ: Եւ այնպէս եմ անելու, որ իմ արդարութեան ճանապարհով ընթանաք, օրէնքներս պահէք ու կատարէք դրանք, բնակուէք այն երկրում, որ տուել էի ձեր հայրերին, ինձ համար ժողովուրդ լինէք, եւ ես ձեզ համար՝ Աստուած» (Եզեկ. 36, 25-28): Հին Կտակարանի այն դէպքերն ու օրէնքները, որոնք Նոր Կտակարանի Մկրտութեան նախատիպերն էին, ընդգրկում էին բոլոր մանուկներին: Մկրտութեան առաջին նախատիպը թլփատութիւնն էր, որն Աստծու ժողովուրդ դառնալու Ուխտի նշանն էր: Աստուած Աբրահամի հետ Ուխտ կնքեց եւ որպէս Ուխտի նշան կարգեց*

1 Հենրի Քլարէնս Թիսսէն, «Աստուածաբանութեան կանոնաւոր դասախօսութիւններ», 1994, էջ 354:

թլփատութիւնը։ Ուխտի մէջ մտնել նշանակում է ստանալ Աստծու սեփական ժողովրդի քաղաքացիութեան իրաւունքը։ Աստուած սիրում է բոլոր մարդկանց, բայց Աստծու համար Իսրայէլը յատուկ ժողովուրդ էր, որովհետեւ Ուխտի ժողովուրդ էր։ Հետեւաբար, թլփատուածները առանձնայատուկ էին Տիրոջ համար։ Համաձայն «Ծննդոց» գրքի՝ դա արւում էր արու զաւակների ծննդեան ութերորդ օրը։ Ութերորդ օրը թլփատուող մանուկն ինչ էր հասկանալու թլփատութեան ուխտի նշանից։ Արդեօք ութերորդ օրը թլփատուող մանուկները իրենց հաւատքի հիման վրայ էին թլփատւում, թէ՞ իրենց ծնողների հաւատքի։ Ուրեմն, ինչպէս որ Աստուած ընդունում էր նրանց ծնողների հաւատքի հիման վրայ թլփատուող մանուկներին, այնպէս էլ ընդունում է նրանց ծնողների հաւատքի հիման վրայ մկրտուող մանուկներին։ Ուստի, բոլորովին աւելորդ է առարկել, թէ պէտք չէ մկրտել մանուկներին, քանի որ հաւատալու ու հասկնալու կարողութիւն չունեն։

Հին Ուխտի օրէնքները, ընտրուածութիւնը, իրաւունքներն ու խոստումները տրուեցին նաեւ մանուկների համար։ Աստծու Ուխտի մէջ մտնելու համար առաջին հերթին նշանակում էր միանալ Աստծու ընտրեալ ժողովրդին, եւ մարդիկ Աստծու ժողովուրդ էին դառնում դեռ մանուկ հասակից։ Դրա համար բաւական չէր, որ երեխան ծնուեր հրեայ ընտանիքում, ուստի անհրաժեշտ էր կատարել թլփատութեան ծիսակարգը։ Երեխան որքանո՞վ էր տեղեակ Աստծու ժողովրդին անդամակցելու այս իրողութիւնից։ Իրօք, նա այս մասին ոչ մի հասկացողութիւն չունէր, սակայն թլփատւում էր իր ծնողների հաւատով եւ դառնում Աստծու ժողովրդի անդամն ու կրողը բոլոր այն խոստումների, որոնք Աստուած տուեց Աբրահամին։

Նոյնպէս էլ այսօր, բաւարար չէ, որ երեխան ծնուի քրիստոնէայ ընտանիքում, այլ անհրաժեշտ է կատարել Ս. Մկրտութեան խորհուրդը։ Այս խորհուրդներով ծնողներն իրենց երեխաներին ներառում են Աստծու ժողովրդի մէջ։ Մանուկներին չմկրտելով

մենք զրկում ենք նրանց Աստծու ժողովրդից, հետեւաբար, նաեւ Եկեղեցուց։ Եթէ մինչեւ Քրիստոս մանուկները կարող էին լինել Աստծու ժողովրդի անդամակից, ուրեմն ինչո՞ւ դա անհնար պիտի լինի Յիսուսի յարութիւնից յետոյ։ Քրիստոս չեկաւ միայն մեծահասակների համար, այլեւ մանուկների։ Պօղոս առաքեալը պարզորոշ յայտնում է, թէ թլփատութիւնը փոխարինուեց Մկրտութեամբ. «**Դուք անձեռագործ թլփատութեամբ թլփատուեցիք հաւատով՝ մերկանալով մեղանչական մարմնից Քրիստոսի թլփատութեամբ. թաղուելով նրա հետ Մկրտութեան մէջ՝ դրանով իսկ նրա հետ յարութիւն առաք Աստծու զօրութեանը հաւատալով, որը նրան յարութիւն տուեց մեռելներից**» (Կող. 2, 11-12)։

Յայտնի է, որ թլփատութեան ժամանակ մարմնի մի մասը կտրւում է ու մեռնում։ Մկրտութեան ժամանակ սա խորհրդանշում է տեղի ունեցող մահուան խորհուրդը։ Եւ ինչպէս որ թլփատութիւնն էր նշան, որը հնարաւոր չէր վերացնել, այդպէս էլ Մկրտութիւնը չի կարող ջնջուել։ Ինչպէս թլփատութեան ժամանակ է արիւն հեղւում, այդպէս էլ Մկրտութեան ժամանակ վերստին ծնուած նոր կեանքը հիմնւում է Քրիստոսի հեղուած Արեան վրայ։

Մկրտութեան երկրորդ նախատիպն այն է, երբ հրեայ մանուկները Եգիպտոսի դաժան մահուան գիշերը փրկուեցին զատկական արեամբ, երբ Աստուած Մովսէսին հրամայեց մորթած գառնուկի արիւնը քսել դռների սեմերին։ Հրեայ մանուկներն ինչպէ՞ս ազատուեցին մահուան հարուածից. իրե՞նց հաւատքով, թէ՝ իրենց ծնողների հաւատքով։ Կամ այդ մանուկներն ինչ էին հասկանում զատկական գառնուկը մորթելու եւ նրա արիւնը տների դռների սեմի վրայ քսելու աստուածային հրահանգից։ Իրենց հայրերն ու մայրերը չէին, որ հաւատացին Աստծու խօսքին ու հնազանդուեցին նրան։ Ինչպէս այս մանուկները փրկուեցին պատժից, Աստծու խօսքի հանդէպ իրենց ծնողների ցուցաբերած հաւատքի շնորհիւ, այնպէս էլ մեր մանուկներն են փրկւում

*ադամական մեղքից ու սատանային սատակիչ հարուածից իրենց ծնողների հաւատքի շնորհիւ՝ առ Աստուած եւ Աստծու կողմից հաստատուած Մկրտութեան խորհրդին ենթարկուելով: Ջատկական գառան արիւնը խորհրդանշում էր Տէր Յիսուս Քրիստոսի արիւնը, որով մենք փրկութիւն ընդունեցինք, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «**Քանզի Քրիստոս՝ մեր Ջատիկը, մորթուեց**» (Ա. Կորնթ. 5, 7): Եւ ինչպէս Հին Ուխտի մանուկները պաշտպանուեցին ու փրկուեցին մահուան հրեշտակից, այդպէս էլ քրիստոնէական դարաշրջանում մանուկները պաշտպանւում ու փրկւում են ճշմարիտ Գառնուկի Արեամբ եւ Նրա կնիքով, այսինքն՝ Մկրտութեամբ:*

*Մկրտութեան երրորդ նախատիպն է Իսրայէլի ժողովրդի Կարմիր ծովով անցնելը: Մանուկները Կարմիր ծովով ինչպէ՞ս անցան: Արդեօ՞ք իրենց սեփական հաւատքով, թէ՝ իրենց ծնողների հաւատքով: Ինչպէս եբրայեցի հայրերն ու մայրերը հաւատքով իրենց մանուկներին գրկած Կարմիր ծովով անցկացրին, այնպէս էլ այսօր մեր հայրերն ու մայրերը հաւատքով իրենց մանուկներին գրկած Եկեղեցի են բերում, որպէսզի նրանց անցկացնեն Մկրտութեան աւազանի ծովով: Հետաքրքիր է, որ Պօղոս առաքեալը եբրայեցիների՝ Կարմիր ծովով անցնելը նմանեցնում է Մկրտութեան՝ ասելով. «**Բոլորն էլ, հետեւելով Մովսէսին, մկրտուեցին ամպ ու ծովի մէջ**» (Ա. Կորնթ. 10, 2): Կարծէս թէ ամբողջ Կարմիր ծովը Իսրայէլի ժողովրդի համար դարձաւ Մկրտութեան մեծ աւազան: Ինչպէս այդ ծովի աւազանից անցնող բազմահազար մանուկներ կային, այդպէս էլ այսօր, Սուրբ Եկեղեցու աւազանից պէտք է անցնեն մանուկները, եւ ոչ ոք պէտք չէ արգելի նրանց: Եթէ մանուկները մասնակցեցին Հին Կտակարանի Մկրտութեանը, ապա ինչ հիմքով նրանց պէտք է մերժել Նոր Կտակարանի Մկրտութիւնն ստանալու հնարաւորութիւնից: Սրանք են Հին Կտակարանի Մկրտութեան նախատիպերը:*

Նոր Կտակարանում մանուկների Մկրտութիւնն արգելող ոչ մի

համար չկայ, բայց սրա փոխարէն կան մանուկների Մկրտութիւնը քաջալերող բազմաթիւ օրինակներ։ Յիշենք նրանցից միայն մի քանիսը։ Հոգեգալտեան օրը մարդիկ, ազդուած Պետրոս առաքեալի պատգամից, նրան եւ միւս առաքեալներին հարցրին, թէ ինչ պէտք է անեն։ Պետրոս առաքեալը նրանց ասաց. «**Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը**» (Գործք 2, 38)։ Յետոյ շարունակեց. «**Որովհետեւ խոստումը ձեզ համար է, ձեր որդիների եւ բոլոր հեռաւորների համար, որոնց կը կանչի մեր Տէր Աստուածը**» (Գործք 2, 39)։ Պարզ է, որ «ձեր որդիներին» բառի մէջ կային բոլոր տարիքի մանուկները։ Յետոյ կարդում ենք. «**Ոմանք, յօժարութեամբ ընդունելով նրա խօսքը, մկրտուեցին. եւ այն օրը նրանք մօտ երեք հազար հոգով աւելացան**» (Գործք 2, 41)։ Եթէ ծնողները հաւատացին առաքեալի խօսքերին եւ մկրտուեցին, կարելի՞ է պատկերացնել, որ նրանց զաւակները մնացին առանց Մկրտութեան։ Երբ Պօղոս առաքեալը քարոզում էր, Լիդիան հաւատաց, եւ «**Մկրտուեցին ինքը եւ իր տունը**» (Գործք 16, 15)։ Լիդիայի ընտանիքի մէջ մանուկ չկա՞ր արդեօք։ Եւ եթէ կար, իր ծնողների հետ չմկրտուեցի՞ն։ Կարեւոր է իմանալ, որ առաքելական ժամանակներից բացարձակ ընդունուած աւանդութիւն, սովորութիւն եւ օրէնք էր, որ տան հայրը ինչ հաւատք որ ընդունէր, նոյն հաւատքը պարտաւոր էր ընդունել նրա ամբողջ ընտանիքը։ Զակքէոսի դրուագում Յիսուս ասում է. «**Այսօր այս տունը փրկուեց**» (Ղուկ. 19, 9)։ Պօղոս առաքեալն ասում է. «**Ստեփանոսի ընտանիքն էլ մկրտեցի**» (Ա. Կորնթ. 1, 16)։ Այստեղ եւս խօսւում է ոչ միայն Ստեփանոսի, այլեւ նրա ընտանիքի մասին։ Յստակ է, որ Ստեփանոսն իր տան գլուխն է, իր տան հայրն է, եւ յստակ է, որ նախ ինքն էր, որ ընդգրկեց Քրիստոսի հաւատքը, եւ իր միջոցով՝ այդ հաւատքը դարձաւ ընտանիքի բոլոր անդամների սեփականութիւնը։ Փիլիպպէի բանտապետի համար ասւում է. «**Ինքն ու իւրայիններն՝ բոլորն էլ անմիջապէս**

*մկրտուեցին» (Գործք 16, 33)։ Դարձեալ, «իւրայինները» ասելով՝ հասկանում ենք ընտանիքի բոլոր անդամներին։ Այդ անդամների մէջ արդեօ՞ք մանուկներ չկային։ Իսկ եթէ կային՝ ո՞ւմ հաւատքի հիման վրայ մկրտուեցին, իրե՞նց, թէ՞ իրենց ծնողների։ Պարզ է, որ երբ Փիլիպպէի բանտապետն ընդունեց Քրիստոսին ու մկրտուեցին «ինքն ու իւրայինները»։ Երբ առաքեալը քարոզում էր Կորնթոսի մէջ, «**Կրիսպոս ժողովրդապետը հաւատաց Տիրոջն իր ամբողջ տնով։ Նաեւ կորնթացիներից շատերը, նրան լսելով, հաւատացին եւ մկրտուեցին**» (Գործք 18, 8)։ Արդեօք Կրիսպոսի «ամբողջ տանը» մանուկներ չկային։ Գործք Առաքելոց գրքում կարդում ենք Կոռնելիոս հարիւրապետի եւ այլ հեթանոսների Մկրտութեան մասին (տե՛ս Գործք 10, 45-48), բազմաթիւ սամարացիների (Գործք 8, 12-13), շատ կորնթացիների (Գործք 18.8), եփեսացիների Մկրտութեան մասին (Գործք 19, 5)։ Ո՞վ կարող է ասել, թէ նրանց մէջ չկային մանուկներ։ Քրիստոս եկաւ կորսուածն փրկելու։ Աստուած Իր Որդուն ուղարկեց աշխարհ, «**որպէսզի աշխարհը նրանով փրկուի**» (Յովհ. 3, 17)։ Այդ երբուանից աշխարհն իր մէջ չի ընդգրկում մանուկներին։ Իսկ եթէ Քրիստոս փրկում է մանուկներին, ուրեմն պէտք է, որ նրանք պատկանեն Նոր Ուխտին, այսինքն՝ Սուրբ Եկեղեցուն։ Ինչ հիմքեր ունենք հաւատալու, թէ մանուկները դէմ են Քրիստոսին միանալու։ Ուրեմն մանուկները տեղ չունե՞ն Եկեղեցում, եւ ինչո՞ւ են ոմանք նրանց Մկրտութիւնը նոյնիսկ դիտում որպէս բռնութիւն իրենց կամքի դէմ։ Ինչպէ՞ս է հնարաւոր, որ Հին Ուխտը Նորի Ուխտի փոխարինելու արդիւնքում մանուկներն այլեւս ի վիճակի չեն դառնալու խորհրդաւոր Մարմնի՝ Եկեղեցու անդամ։*

Քրիստոս հրաւիրում է բոլորին։ Փրկութիւնը ձեռք բերելու համար պէտք է մտնել այն սրբատեղին՝ Եկեղեցին, որի միջոցով տրւում է շնորհի լոյսը այս աշխարհում։ Այսօր Եկեղեցին Աստծու ժողովուրդն է։ Իսկ կարո՞ղ է արդեօք լինել ժողովուրդ առանց մանուկների։ Այս աշխարհում հոգեւորի նկատմամբ չէզոքութիւն չի

կարող լինել։ Նա, ով չի ուզում իր զաւակներին միացնել Տիրոջը, նա թողնում է նրանց չար ոգիների ու զօրութիւնների ազդեցութեան ներքոյ։ Եթէ մանուկն ինքը չի կարող մտնել փրկարար եկեղեցի, պէտք է նրան գրկելով ներս բերել։ Առաւել եւս, երբ Պօղոս առաքեալն ասում է, թէ Մկրտութիւնն էլ, ըստ Նոյեան տապանի օրինակի ապրեցնում է մեզ։ Ուստի, արժէ՞ արդեօք փոքրիկներին դուրս հանել փրկարար տապանից։

Ի՞նչ են ասում Եկեղեցու Հայրերը մանուկների Մկրտութեան մասին

Ինչ են խօսել Ընդհանրական Եկեղեցու Հայրերը մանուկների Մկրտութեան մասին: Նրանք միաձայն հաստատում են, թէ մանուկների Մկրտութիւնը շատ սովորական բան էր իրենց ժամանակներում, եւ թէ այս աւանդութիւնն առաքեալներից է վերցուած: Առաջին դարերում, Եկեղեցու Հայրերը հաւատում էին, որ Մկրտութիւնն առաջնորդում է վերածննդի:

*Եթէ հետեւենք քրիստոնէութեան ամբողջ պատմութեանը, անհնարին կը լինի մերժել մանուկների Մկրտութիւնը: Սակայն Բարենորոգչական շարժման սկզբնական ժամանակաշրջանում, 16-րդ դարում, առաջացաւ միայն չափահասներին մկրտելու ուսմունքը: Այդ ուսմունքի հետեւորդներին էլ քաջ յայտնի է՝ եթէ Աստծու Եկեղեցին «մոռացել է» որեւէ վարդապետական ուսմունք եւ մօտաւորապէս 14 դար յետոյ «յիշել է» այն, ուրեմն այդ իրողութիւնն արդէն ցոյց է տալիս տուեալ գաղափարի կամ ուսմունքի կեղծիք լինելը, քանի որ Եկեղեցին՝ «**ճշմարտութեան սիւնը ու հաստատութիւնը» Աստծու տունն է**» (Ա. Տիմ. 3, 15), իսկ Քրիստոս՝ «**իբրեւ որդի՝ նրա տան վրայ**» (Եբր. 3, 6): Ուրեմն, ոչ ոք Աստծու տնից չի կարող յափշտակել ճշմարիտ վարդապետութիւնը, կամ Աստծու խոստումը (տե՛ս Մատթ. 12, 29):*

Կեղծ ուսմունքների յետեւորդներն ասում են, թէ քանի որ մանուկներն իրաւաբանօրէն անգործունակ եւ անմիտ են, նրանք չեն կարող խոստովանել աւետարանական վարդապետութիւնը եւ, ըստ այդմ, չեն կարող մկրտուել: Եթէ ծնողների հոգատարութեամբ փոքրիկները չհասկանալով ստանում են մարմնաւոր կերակուրը եւ իրենց ներքին հաւանութեամբ (տե՛ս Հռոմ. 7, 22) վստահում

են իրենց կերակրողներին, այդպէս էլ նրանք կարող են հոգեւոր կերակուրը եւ աստուածային շնորհն ստանալ ծնողների կամ ուրիշների հաւատով, ինչպէս քանանացի կնոջ աղջիկն իր մօր հաւատով ստացաւ բժշկութեան հրաշքի շնորհը (Մատթ. 12, 28)։ Երեխան չգիտէ կաթի ծագումն ու յատկութիւնները, բայց չէ՞ որ առանց դրա նա չի կարող ապրել։

"Sola Scriptura" շարժման սկզբունքը, այսինքն՝ «միայն Աստուածաշունչ» բանաձեւի հետեւորդները մերժում են բոլոր այն խօսքերը, որոնցից յետոյ չի կարելի ասել «Այսպէս է ասում Տէր Աստուածը»։ Բայց Աստուածաշնչում որտեղ է գրուած. «Այսպէս է ասում Տէր Աստուածը. «Մանուկներին չի կարելի մկրտել»»։ Նրանք ասում են. «Ս. Գիրքը մեզ չի սովորեցնում մանուկներին մկրտել»՝ անմիջապէս առաջարկելով, որ հաւատակից ծնողներն իրենց անչափահաս զաւակներին յատուկ արարողութեամբ եւ աղօթքով Աստծուն ընծայեն, թէեւ Նոր Կտակարանում այդ մասին էլ ոչ մի խօսք չկայ։ Մանուկներին Աստծուն ընծայելը պէտք է լինի իւրայատուկ կերպով։ Այս դէպքում սուրբ Մկրտութիւնը լաւագոյն միջոցն է ծնողների կողմից իրենց զաւակներին Աստծուն նուիրաբերելու գործում։ Բայց նոյնիսկ բողոքանութեան շարժման նախահայրը՝ Մարտին Լիւթերը, որ մկրտուած էր մանուկ հասակից, իր անձի օրինակով ապացուցում էր մանկական Մկրտութեան շնորհաբաշխ օրհնութիւնը եւ իր «Մեծ վարդապետութիւն» վերնագրով գրքում նոյնիսկ ասում է, թէ մանուկների Մկրտութիւնը հաճելի է Քրիստոսին, եւ ապացուցում է իր իսկ անձի օրինակով։ Նա ասում է. «Եթէ Աստուած չընդունէր մանուկների Մկրտութիւնը, ուրեմն բոլոր ժամանակներին, մինչեւ օրս, երկրի վրայ ապրող մարդկանցից ոչ ոք չէր կարող քրիստոնեայ լինել»[1]։

Իսկ ինչ են ասում Ընդհանրական Եկեղեցու Հայրերը մանուկների Մկրտութեան մասին։ Նրանք թողել են շատ գրութիւններն ու անառարկելի վկայութիւններ, որ Մկրտութիւնը միշտ կատարուել

1 «Մեծ վարդապետութիւն», Lathi 1996, pg. 126։

է նաեւ մանուկների համար, իսկ ոմանք էլ դա նոյնիսկ անուանել են ուղղակի Առաքելական աւանդութիւններ»։ Յիշենք նրանցից մի քանիսը։

Ուրգինէս. *«Եկեղեցին մանուկներին մկրտելու աւանդութիւնը առաքեալներից է ստացել»*[1]*։ Նոյնն ասում էր Բառնաբաս առաքեալը. «Մանուկների Մկրտութեան խորհուրդն առաքելական ծագում ունի»*[2]*։*

Սիմէոն Նոր Աստուածաբան. *«Ես հաւատում եմ, որ մկրտուած մանուկները սրբացւում եւ պահպանւում են Ամենասուրբ Հոգու ապաստանի ներքոյ, եւ որ նրանք Քրիստոսի հոգեւոր հօտի ոչխարներն են եւ ընտրեալ գառնուկները, քանզի նրանք կնքւում են կենարար խաչի նշանով եւ ամբողջովին ազատւում սատանայի բռնակալութիւնից»*[3]*։*

Օգոստինոս Երանելի. *«Ի սկզբանէ Քրիստոսի Եկեղեցին ընդունել ու կատարել է մանուկների Մկրտութիւնը. ուստի մանուկներին մկրտելու համար խնդիրներ յարուցելու կարիք չկայ... Սուրբ Հոգին կարողութիւն կը տայ, որ նորածին մանուկը վերանորոգուի ու վերածնուի, երբ նա մկրտուի... Եկեղեցին միշտ է ունեցել մանուկների Մկրտութիւնը, միշտ պահպանել է, այն ընդունել է նախնիների հաւատից եւ դրան նա հետեւում է միշտ՝ մինչեւ վերջ»*[4]*։*

Սբ. Յովհան Ոսկեբերան. *«Ահա թէ ինչո՛ւ ենք մենք մկրտում երեխաներին, թէեւ նրանք մեղքեր չեն գործել, որպէսզի նրանց տրուի Քրիստոսի սրբութիւնը, արդարութիւնը, որդեգրութիւնը, ժառանգութիւնը, եղբայրութիւնը, որպէսզի նրանք դառնան Քրիստոսի անդամներ»*[5]*։*

---

1 https://blagolyub.livejournal.com/15085.html (ստ 4/05/23):

2 https://vk.com/@bkkirk-sv-otcy-o-kr-mladencev (ստ 4/05/23):.

3 Symeon tou Neou Theologou eurethenta asketika. Thessalonike, 1977. Sel. 49 (ստ 10/10/22).

4 Նոյն տեղում:

5 https://vk.com/@bkkirk-sv-otcy-o-kr-mladencev (ստ 4/05/23):

Յուստինոս փիլիսոփայ. *«Մկրտութեան միջոցով մանուկները նրանց բերողների հաւատքով ստանում են օրհնութիւններ ու բարիքներ: Երեխան, իհարկէ, դեռ չի կարող հաւատալ իր համար, բայց նրա փոխարէն հաւատում են նրան բերողները: Հաւատում են ծնողները, հաւատում է քահանան, ով կատարում է խորհուրդը, եւ ըստ նրանց հաւատքի՝ «Աստծու շնորհը սրբացնում եւ վերածնում է մարդու հոգին»*[1]*:*

Սբ. Գրիգոր Նազիանզացի Աստուածաբան. *«Ինչ կարող էք ասել նրանց մասին, ովքեր դեռ մանուկ են, եւ չեն զգում ո՛չ վնաս, ո՛չ էլ շնորհ: Նրա՞նց էլ մկրտենք: Անպայման, եթէ վտանգ է սպառնում: Որովհետեւ աւելի լաւ է սրբագործուել անգիտակից վիճակում, քան մեռնել չկնքուած եւ անկատար: Աստծու ապացոյցն ութօրեայ թլփատումն է, որը ներկայացուցչական իմաստով մի տեսակ կնիք էր եւ կատարւում էր նրանց վրայ, ովքեր դեռ չէին ստացել բանականութեան օգտագործումը... Ինչ վերաբերում է միւս անչափահասներին, ապա ես հետեւեալ կարծիքը կը յայտնեմ. երեք տարի սպասելուց յետոյ կամ մի փոքր շուտ կամ մի փոքր ուշ, երբ երեխաները լսեն ինչ-որ խորհրդաւոր բան եւ ընդունակ լինեն պատասխանել, թէեւ ոչ ամբողջութեամբ հասկանալով, բայց դաջելով իրենց մտքում, նրանք պէտք է սրբացնեն իրենց հոգիներն ու մարմինները կատարման մեծ խորհրդով...»*[2]*:*

«Դու զաւակ ունե՞ս: Թոյլ մի՛ տուր, որ վնասուածքն աւելի զորանա. թող սրբուի մանկութեան տարիքում եւ ամենավաղ հասակից նուիրուի Հոգուն: Դու վախենում ես դրոշմից բնական տկարութեան պատճառով, ինչպէս վախկոտ ու թերահաւատ մայր: Սակայն Աննան դեռ իր ծնուելուց առաջ էր Սամուէլին խոստանում Աստծուն եւ ծնունդից յետոյ դաստիրակեց եւ ընծայեց Աստծուն՝ սրբազան շուրջառի համար՝ չերկնչելով մարդկային թկարութիւնից, այլ՝ Աստծուն հաւատալով: Զարդերի ու շշուկների

1 Նոյն տեղում:

2 Նոյն տեղում:

կարիքը չկայ, որոնցով ներս է մտնում չարը՝ դիւրահաւատներից իրեն գրաւելով Աստծու հանդէպ ունեցած ակնածանքը: Տուր քո երեխային Երրորդութեանը...»[1]*:*

Առաքելական կանոններ. *«Իսկ ով ասում է. «Երբ իմ մեռնելու ժամանակը գայ, կը մկրտուեմ, որպէսզի չմեղանչեմ եւ չպղծեմ Մկրտութիւնը», նա չի ճանաչում Աստծուն եւ մոռացել է իր բնութիւնը: Որովհետեւ Սուրբ Գիրքն ասում է. «Մի՛ յետաձգիր», «դիմի՛ր Տիրոջը, մի՛ կշռադատիր այն բանի համար, թէ ինչ է բերելու օրը» (Սիր. 5, 8. Առակ. 3, 28): Եւ մկրտեցէ՛ք ձեզ եւ ձեր երեխաներին եւ կրթեցէ՛ք նրանց Աստծու ուսուցմամբ ու խրատով, քանզի Տէրն ասում է. «Թողէ՛ք, որ երեխաները գան Ինձ մոտ եւ մի՛ խանգարէք նրանց»»:*

Մանուկների Մկրտութեան հարցին պատասխանեցին Կիպրիանոս Կարթագենացին եւ 66 եպիսկոպոսները, որոնք ժողով գումարեցին դեռ 252 թ: Ժողովը յայտարարեց իր որոշումը: Ընդունուեց միանշանակ որոշում՝ յօգուտ նրանց Մկրտութեան անհրաժեշտութեան: Կիպրիանոս եպիսկոպոսը *ժողովի անունից գրում է հետեւեալը. «Ինչ վերաբերում է մանուկներին, որոնք, ըստ քեզ, պէտք չէ մկրտուեն իրենց ծննդեան օրուանից երկրորդ կամ երրորդ օրը, այլ պէտք է համապատասխանեն հին թլփատութեան օրէնքին, իսկ ծնուածը, ինչպէս կարծում ես, թէ մինչեւ ութերորդ օրը մի՛ մկրտիր, ո՛չ էլ սրբագործիր. բայց այս հանգամանքը բոլորովին այլ կէրպ սահմանուեց մեր ժողովում: Մկրտութիւնից եւ ողորմած, բարեգութ, ներողամիտ Աստծու շնորհից մենք պէտք չէ զրկենք որեւէ մէկին, այլ պէտք է սա պահենք ու պահպանենք ինչպէս բոլորի, այնպէս էլ յատուկ նորածին մանուկների համար, ովքեր արժանի են մեր առաջնային մասնակցութեանը եւ Աստծու ողորմութեանը»*[2]*:*

---

1 https://vk.com/@bkkirk-sv-otcy-o-kr-mladencev (ստ 4/05/23):

2 https://lib.pravmir.ru/library/readbook/665 (ստ 4/05/23):

Դարձեալ՝ ասում է. «Ինչ վերաբերում է մանուկներին, ...ապա մենք բոլորս [252 թ. Կարթագենի ժողովի մասնակիցներս] պիտի չմերժենք Աստծու ողորմութեամբ ու շնորհով ծնուած ոչ մէկին... Եւ հէնց այդ շնորհը, որը հաղորդւում է նրանց, ովքեր մկրտւում են, չի տրւում մեծ կամ փոքր չափով: Այն կախում չունի շնորհն ընդունողների տարիքից... Եթէ նոյնիսկ այն տրւում է լուրջ մեղաւորներին, ովքեր նախկինում շատ են մեղանչել Աստծու դէմ, սակայն դրանից յետոյ հաւատացել են եւ մեղքերի թողութիւն ստացել, ապա առաւել եւս՝ պէտք չի արգելել երեխային, ով հազիւ ծնուած լինելով, ոչ մի մեղք չի գործել՝ բացի նրանից, որ սերուել է Ադամի մարմնից՝ ստանալով հնագոյն մահուան վարակը հէնց լի յարմար են ընդունելու մեղքերի թողութիւնը, քանզի ներւում են ոչ թէ իրենց, այլ ուրիշների մեղքերի համար»[1]:

Կարթագենի ժողովը *(419-426 թթ.) սահմանեց (124) կանոնը. «Նա, ով մերժում է փոքր երեխաների եւ նորածինների Մկրտութեան անհրաժեշտութիւնը, կամ ասում է, որ թէեւ նրանք մկրտուած են մեղքերի թողութեան համար, բայց Ադամի ու նախնիների մեղքից ոչինչ չեն ժառանգում, որը պէտք է լուացուի աւազանի ջրով..., թող նզովեա՛լ լինի»*[2]: *Կարթագենի ժողովի կանոնները ներառուած են եղել Ընդհանրական Եկեղեցու բոլոր կանոնական ժողովածուներում եւ ունեն եկեղեցական անվիճելի իշխանութիւն, քանի որ այս ժողովի որոշումները հաստատուել էին յետագայ Տիեզերական ժողովների որոշումներով: Արդիւնքում այս կանոններն ստացան ընդհանրական նշանակութիւն եւ համընդհանուր պարտադրական ուժ ամբողջ Եկեղեցու համար, որն էլ արտացոլուեց Եկեղեցու սուրբ Հայրերի գրուածքներում:*

Սբ. Կիպրիանոս. *«Թող յայտնի լինի, որ երեխաները, որոնք ենթարկւում են նահատակութեան, չեն զրկւում Մկրտութեան խորհրդից, քանի որ մկրտւում են արեան փառաւորագոյն եւ*

1 https://vk.com/@bkkirk-sv-otcy-o-kr-mladencev (ստ 4/05/23):

2 https://blagolyub.livejournal.com/15085.html (ստ 4/05/23):

մեծագոյն Մկրտութեամբ, որի մասին Տէրն էլ ասում է, թէ Ինքը պիտի այլ Մկրտութեամբ մկրտուի (Մատթ. 2, 22)։ Իսկ որ Իր արեամբ մկրտուած եւ Իր չարչարանքներով սրբուած հասնում են կատարելութեան եւ ստանում Աստծու աւետեաց շնորհները, վկայում է նոյն Տէրն Աւետարանում»[1]։

Մանուկների Մկրտութեան անհրաժեշտութեան մասին գրուած է նաեւ Արեւելեան պատրիարքների ընդհանրական նամակում։ Այստեղ ասւում է. «Մենք հաւատում ենք, որ Ս. Մկրտութիւնը անհրաժեշտ է նաեւ մանուկներին, քանի որ նրանք նոյնպէս ենթակայ են սկզբնական մեղքին եւ առանց Մկրտութեան նրանք չեն կարող այդ մեղքից թողութիւնն ստանալ։ Եւ Տէրը, ցոյց տալով դա, առանց որ եւէ բացառութեան ասաց պարզապէս. «Եթէ մէկը վերստին չծնուի, չի կարող Աստծու Արքայութիւնը մտնել»»[2]։

Բազմաթիւ են Սուրբ Հայրերի վկայութիւնները մանուկների Մկրտութեան վերաբերեալ, սակայն բաւարարուենք այսքանով։

Նրանք, ովքեր պիտի մտնեն երկնքի Արքայութիւնը, պէտք է վերստին ծնուեն, քանզի Ս. Մկրտութեան խորհուրդն այնպիսի փրկարար սրբագործութիւն է, որի միջոցով մկրտուողը, անկախ իր տարիքից, մաքրուելով սկզբնական եւ ներգործական մեղքերից, վերստին ծնւում է իբրեւ նոր մարդ ու դառնում է Սուրբ Հոգու պարգեւաբաշխ շնորհների տաճար՝ իրական եւ ամենամտերիմ հաղորդակցութեան մէջ մտնելով իր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հետ, դառնալով միաժամանակ ժառանգորդը երկնքի Արքայութեան։

1 https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/etchmiatzin-vagatshapat/2007/2007(9).pdf (առ 4/05/2023)։

2 Նոյն տեղում։

ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

ՀԱՐՑԵՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Էջադրումը, շարուածքը եւ կազմի ձեւաւորումը՝
Գէորգ սրկ. Գէորգեանի
Խմբագրեց եւ սրբագրեց Ե. Խաչատրեանը

Տպաքանակը՝ 200
Չափսը՝ 60x84 1/16

«Red Point» ՍՊԸ-ի տպարան

ԵՐԵՒԱՆ 2023